

25.549

333.3
g - 19



333.

15 JAN 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 46

ԱՅԱ. ԶԱՅ.

ՀՈՂ

ԵՒ

ԿՍՊԻՏԱԼԻԶՄ

ԳՐԱԴԱՐԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Թարգմ. ուսու. Մ. Մ.

Թ. Բ. Ձ. Լ. Ի. Ս.

1907

24

№ 46

«Յ Ա Բ Ա Զ»-ի գրադարան

№ 46

333.3

2-19

Ո. Ս. ԳԱԿ.

ՅՈՒ

ԵՒ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄ

Թարգմ. լուս. Մ. Մ.



1907

ԵՎԵՍՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ա. ԱԼԱՎԵՄԻ, ՊՈԼԻՖԵՆԻ 7,

ԹԻԳԻՆ

21

ՀՈՂ ԵՒ ԿԱՊԻ ՏԱԼԻ ԶՄ

I.

Երբ 1825 թւին առաջին երկաթուղային գիծը միացրեց Ստոնքտօնը՝ Դարմինգտօնի հետ և առաջին շոգենաւն անցաւ Անգլիայից Արևելեան Հնդկաստան, այն ժամանակ հազիւթէ մէկը կարող լինէր գլխի ընկնել, թէ դրանով բացւում է պատմութեան մէջ մի նոր դարեշրջան։ Բայց անցան միայն մի քանի տասնամեակներ։ Երկաթուղիները պատեցին ցանցով բոլոր քաղաքակիրթ երկրները։ Շոգենաւերը՝ առագաստների ժամանակի համար անհնարին կանոնաւորութեամբ և արագութեամբ՝ սկսեցին անցնել ծովեր ու ովկիաններ։ Տարածութիւնների գաղափարը դարձրւեց վերին աստիճանի սահմանափակ, և դրա հետ միասին մարդկութեան տնտեսական կեանքը ստացաւ միանգամայն նոր գունաւորում։ Համաշխարհային տնտեսութիւնը, փոխարինեց ազգայինը, ճիշտ այնպէս, ինչպէս իր ժամանակին ազգային տնտեսութիւնը եկել էր փոխարինելու մեկուսացած անհատկան տնտեսութիւնը։ Դա իրագործւեց չնորհիւ լայն զարգացած համաշխարհային առևտուրիւ։

Գիւղատնտեսութիւնը ամբողջ ժամանակն ընթանում էր արդինաբերական զարգացման առջևից, որովհետև նրա արդինքների մասնակցութիւնը համաշխարհային փոխանակութեան մէջ աճում էր անհաւատալի արագութեամբ։ 18-րդ դարու վերջին, Տիւրքօն գնահատում էր հացահատիկների միջազգային առևտուրը մինչև 10, ամենաշատը մինչև 11 միլիոն հեկտոլիտր։ 19-րդ դարու եօթանասնական թւականների սկզբում այդ առևտուրը գընահատում էր արդէն 200 միլիոն հեկտոլիտր, եօթանասնական թւականների վերջին՝ 550 միլիոն, ութսունական թւականների կիսին՝ 569 միլիոն։ Հացի արտադրութիւնը 80-ական թւական-



6239

41

ների կիսին եղել է 3,189 միլիոն հեկտարով: Հետևապէս, համաշխարհային փոխանակութեան մէջ մասնակցել է հացահատիկների ամբողջ արտադրութեան գրեթէ հինգերորդ մասը *):

Այնպիսի արագ փչացող արդիւնքներ, ինչպէս թարմ միսը, կաթ և այլն, շոգու կիրառումից յետոյ՝ փոխադրութեան գործի մէջ դեռ երկար ժամանակ ունէին շրջանառութեան խիստ նեղ ասպարէզ: Սակայն փոխադրութեան գործի տեխնիքան քանի գնում աւելի կատարելագործում էր և դրա հետ միասին լայնանում էր այդ արդիւնքների շրջանառութեան ասպարէզը: 1870 թ. ներմուծւել է Անգլիա միայն 12 հազար ցենտներ թարմ միս և ամբողջ այդ քանակը արտահանւել է գլխաւորապէս հարեան եւրօպական երկրներից: 1890 թ. բերւել է Անգլիա 1,855 հազար ցենտներ թարմ միս, որից եւրօպական երկրներին բաժին է ընկնում միայն 15 հազար ցենտներ կամ մի տոկոսից պակաս: Հետևապէս, 20 տարւայ ընթացքում թարմ մսի ներմուծումն Անգլիա աւելացել է 155 անգամ և ամբողջ արտահանութիւնն այժմ ընկնում է գրեթէ բացառապէս անդրովկեանոսեան երկրների վրայ: Նոյնանձան փոփոխութիւններ առաջացել են և միւս արագ փչացող ապրանքների առևտուրի մէջ: Այնուամենայնիւ, կարելի՞է հաստատապէս ասել, որ համաշխարհային առևտուրի այդ ճիւղը ամբողջովին դեռ պատկանում է ապագային, ամենայն հաւանութեամբ՝ առենամօտ ապագային, ինչպէս այդ կարելի է եղբակացնել այն արտակարգ յաջողութիւններից, որ անում է վերջերս արագ փչացող արդիւնքների փոխադրութեան արագացման և պահպանման գործը:

Գիւղատնտեսական արդիւնքների համաշխարհային առևտուրի նոր պայմանները մատուցել են կուլտուրային անգնահատելի

*.) Ստատիստիկական տեղեկութիւնները, որոնք բերւած են այստեղ առանց ազբիւրը մատնանիշ անելու, վերցւած են գլխաւորապէս հետեւել հրատարակութիւններից: Ժամանակամիջոցը մինչև 80-կան թ. վերջը՝ Mullhal's Dictionary of statistics-ից, (1884), Uebersichten der Weltwirtschaft-ից, 1878, 1879, 1880, 1881—1882 և 1883—1884, dr F. X. Neumaun Spallart-ի խմբագրութեամբ և 1885—89, dr. Fr. v. Juraschek-ի խմբ.: Նորագոյն ժամանակի համար The statesmans-ի յարկ հրատարակութիւնից (1893—1895), պահ Conrad-ի Handwörterbuch d. Staatswissenschaft-ի առաջին յաւելածից, Вестник Финансов հանդէսից՝ 1894—1896 տարիներ, և այլն:

ծառայութիւններ: Նախ, նրանք ազատել են կուլտուրական աշխարհը առաջնարում յաճախակի կրկնուող սովերից և թանգութիւնից: Համաշխարհային անրերի իութիւններ, համաձարակիններ կենդանիների մէջ—այլ ևս տեղի չեն ունենում: Գրեթէ միշտ անաջողութիւնները մի երկրում ուղղեկցւում են բարեյաջող պայմաններով մի այլ երկրում: Համաշխարհային առևտուրը այնպիսի սերտ կապ է ստեղծում գիւղատնտեսական շրջանների մէջ, որը հաղիւ նշմարելի է դարձնում կլիմայական և այլ անպատճենութիւնները, որոնք ժամանակ առ ժամանակ յաճախում են առանձին երկրներ: Պակաս կարևոր չեն համաշխարհային առևտուրի ծառայութիւնները՝ գիւղատնտեսական արդիւնքների գների հաւասարեցման մէջ: Առաջներում հացի գինը ընկնում է եղել աներեւակայելի կերպով այնտեղ, ուր նա եղել է առատութեամբ, և ընդհակառակը, ուր հացի պակասութիւն է եղել, նրա գինը հասել է ահռելի չափերի: Այդ մտքով, ամենաշատը, միշտ կու հարիւր վերստ տարածութիւնը ունեցել է մեծ նշանակութիւն: Այդպէս, 1650—51 և 1661—63 թւականներին ցորենի հեկտոլիտրը արժել է Փարիզում 30—40 ֆրանկ, իսկ Ստրասբուրգում՝ 7—8 ֆր.: Ընդհակառակը, 1623 թւականին քաղցող Ալզասը վճարել է հացի համար 4 անգամ աւելի թանգ, քան Փարիզը: 16-րդ դարու առաջին քառամետակում Անգլիան վճարում է եղել հացի համար $2\frac{1}{2}$ անգամ աւելի աժան քան Ֆրանսիան և $4\frac{1}{2}$ անգամ աւելի աժան քան Իտալիան, իսկ 17 դարում գերերը փոխել են. Անգլիան վճարում է եղել $1\frac{1}{2}$ անգամ աւելի թանգ քան Ֆրանսիան և $2\frac{1}{2}$ անգամ աւելի թանգ քան Իտալիան: Անցեալ դարու առաջին քառամետակում, մինչև շոգու կիրառումն փոխադրութեան գործի մէջ, երերն աւելի լաւ գրութեան մէջ չէին: 1801 թւականին Ֆրանսիայում, La Marne նահանգում ցորենի հեկտոլիտրն արժել է 11 ֆրանկ, իսկ Alpes-Maritimes նահանգում 46 ֆրանկ: 1817 թւականին, գները տարբեր նահանգներում տարբերում են եղել 36 և 81 ֆրանկի միջնականից *): 1816—20 թւականներին ցորենի մի տօննը արժել է Անգլիայում 364 մարկ, Ֆրանսիայում՝ 265, Պրուսիայի ծայրամասերում՝ 182... Առևտուրի նոր պայմաններում գների այդ տատանումները այլ ևս անկարելի են ոչ միայն մի որևէ

*) A. de Foville. La transformation de transport, երես 235.

երկրի ներսում, այլ և տարբեր, իրարից խիստ հեռու երկրներում: 80-կան թւականերին ցորենի մի տօննը գնահատուում էր միջին թւով—ֆրանսիայում 198 մարկ, իտալիայում՝ 197, Պրուսիայում՝ 190 և Անգլիայում 169 *). տարբերութիւնը ամենաբարձր գնի՝ ֆրանսիականի և ամենացածր գնի՝ անգլիականի միջև չէր անցնուում ուրեմն 15 տոկոսից, իսկ այդ տարբերութիւնը բացատրուում է զլիաւորապէս նրանով, որ բոլոր վերոյիշեալ երկրներից, հացի առևտուրի մէջ, միմիայն Անգլիան է զեկավարուում ֆրիտրեգերութեան (ազատ առևտուրի) սկզբունքներով:

Մինչև անգամ արտադրող և սպառող երկիրների գների տարբերութիւնը դարձել է չնչին: 80-կան թւականներին ցորենի հեկտոլիտրը, որի համար սուսական հողագործը ատանում էր 13 ֆրանկ (միջին տեղական աշնանային գինը), իսկ ամերիկական ֆէրմէրը 12 ֆրանկ, ծախւում էր Անգլիայում 15,2 ֆրանկով, այսինքն տարբերութիւնը հաւասար էր միայն 14—21 տոկոսի: Սակայն համաշխարհային առևտուրի ծառայութիւնը առանձնապէս կարևոր է այն մտքով, որ մարդկային առաջնակարգ պահանջների բաւարացմանը ծառայող գիւղատնտեսական արդիւնքների գները ընկել են մինչև ամենացածր աստիճան: Լօնդոնում, ցորենի մի կվարտէրի համար վճարում էին՝ 1867 թւին 64 շիլինգ 5 պես, 1877 թ.՝ 56 շ. 9 պ., 1887 թ.՝ 32 շ. 6 պ., 1894 թ.՝ 22 շ. 10 պ., այսինքն 27 տարւայ ընթացքում ցորենի գինը ընկել է աւելի քան 182 տոկոսով: Այդ իսկ ժամանակամիջոցում դարու գինը ընկել է 63 տոկոսով, իսկ վարսակի գինը՝ 53 տոկոսով: Ինչպէս արդէն ասացինք, արագ փչացող արդիւնքների առևտուրը դեռ ամբողջովին պատկանում է ապագային: Այնուամենայնիւ այստեղ ևս մենք գտնուում ենք գների նկատելի անկումն: Թարմ մարմ մի ցենտներն արժէր 1883 թ. 2 փունտ ստերլինգ 16 շիլլինգ 2 պես: 1893 թւականին այդ գինը ընկել է մինչև 2 ֆ. 2 շ. 4 պես, այսինքն 34 տոկոսով: Ոչխարի թարմ միսը աժանացել է 18 տոկ., խոզի թարմ միսը՝ 25 տոկ. և այն:

Բայց մեղան ունի և հակառակ կողմ: Եթէ համաշխարհային առևտուրը դնում է բոլոր երկրները միահաւասար բարեյածող պայմանների մէջ՝ առաջին անհրաժեշտութեան պիտոյքների

*) Conrad's Handwörterbuch հատ. III, երես 892

սպառումն ապահովելու վերաբերմամբ, նոյնը չի կարելի ասել այդ պիտոյքների արտադրութեան մասին: Այդտեղ արդէն նկատուում է միանգամայն հակառակ ձգտում: Եթէ կանգ առնենք ըսպառման և տեղական արտադրութեան միջև եղած փոխադարձ կապի վրայ, իսկոյն աչքի կընկնի այն փաստը, որ այդ կապը դառնում է աւելի ու աւելի թոյլ: Հետևեալ աղիւսակի մէջ տըրուում է հացի արտադրութեան (ցորեն, հաճար, գարի և վարսակ) և նրա սպառման չափերի յարաբերութիւնը ամեն մի երկրուում:

60-ամկան ներլի թւական- թիւնը	70-ամկան ներլի թւական- թիւնը	80-ամկան ներլի թւական- թիւնը	80-ամկան ներլի թւական- թիւնը	90-ամկան ներլի թւական- թիւնը
Մեծ Բրիտանիա	80,7	67,1	63,6	60,5
Նիդերլանդ	84,0	63,0	66,3	59,0
Բելգիա	88,3	69,9	60,5	59,9
Իտալիա	94,2	92,0	? 84,8	85,6
Գերմանիա	100,6	90,6	89,3	90,3
Ֆրանսիա	99,9	85,2	92,0	91,6
Դանիա	110,4	111,9	95,4	90,8
Ամբողջը արևմտեան եւրօպան	95,6	83,4	82,0	81,7
				80,0

60-կան թւականների վերջին արևմտեան եւրօպան կարողացել է իր սպառման 95,6 տոկոսը ծածկել սեփական արտադրութամբ, 70-կան թւականների կիսին նա ծածկել է արդէն իր սպառման 83,4 տոկոսը, 80-կան թւականների առաջին կիսում՝ 82 տոկոս, 80-կան թւականների երկրորդ կիսում՝ 81,7 տոկ. և 90-կան թւականների առաջին կիսում՝ միայն 80 տոկոս: Դեռ 60-կան թւականների վերջին արևմտեան եւրօպան ունեցել է 2 երկիր, որոնք արտադրում են եղել աւելի հաց, քան սպառում, և 1 երկիր, որը գրեթէ բաւականանում է եղել սեփական հացով. 70-կան թւականների կիսին միայն մի երկիր է տւել աւելի, իսկ

80-կան և 90-կան թւականներին չկայ այլ ևս ոչ մի երկիր աւելի արտադրութեամբ։ Արտադրութեան ու սպառման հաւասարակը շուրջ կորուստը կարող է լինել երկու պատճառների հետեւանք. 1) սպառման չափազանց արագ անման և 2) արտադրութեան կրծատման։ Հետեւեալ աղիւսակից երկում է, թէ որն է այդ երկու պատճառներից գործում ներկայ դէպքում։

Արտադրութիւնը (ցորենի, գարու, հաճարի և վարսակի) միլիոն հեկտարներով հաշւած։						
	60-ամեան թւական-ների վերը՝	70-ամեան թւական-ների կեծուը՝	70-ամեան թւական-ների առաջին կեծուը՝	80-ամեան թւական-ների երրորդ կեծուը՝	90-ամեան թւական-ների առաջին կեծուը՝	
Մեծ Բրիտանիա	114,0	124,4	122,1	113,7	110,1	
Նիդերլանդ	10,5	10,9	12,4	13,1	13,0	
Բելգիա	23,3	23,5	23,1	24,5	23,8	
Իտալիա	37,2	68,8	58,2	51,5	57,5	
Գերմանիա	250,0	270,1	232,1	253,1	246,5	
Ֆրանսիա	236,1	219,0	249,5	232,1	224,0	
Դանիա	20,1	22,6	25,2	26,6	31,1	
Ամբողջ արևմտեան Եւրօպան	691,4	739,3	722,6	714,6	706,0	

Արևմտեան Եւրօպայի բոլոր երկներից, որոնք մտնում են այս աղիւսակի մէջ, միայն Դանիան է, որ շարունակ լայնացնում է իր արտադրութիւնը. միւսներից—ոմանք ուշագրաւ կանոնադրութեամբ կրծատում են տարեց տարի իրենց արտադրութիւնը, իսկ միւսների արտադրութեան մէջ նկատում են բաւական մեծ տատանումներ, սակայն կրծատման պարզ հակումով։ Ընդհանրապէս ամբողջ արևմտեան Եւրօպան կրծատել է իր արտադրութիւնը, սկսած 70-կան թւականների կիսից մինչև 90-կան թւա-

կանների սկիզբը, 739,3 միլիոն հեկտարից մինչև 706 միլ.՝ գրեթէ 5 տոկոսով։ Արտադրութեան կրծատումը հաստատում է նաև հացահատիկներով, ցանւած տարածութեան մասին ունեցած տեղեկութիւնների համաձայն։ Այդ տեղեկութիւնները մենք ամփոփել են հետեւեալ աղիւսակի մէջ (հաշիւը՝ հազար հեկտար)։

	70-ամեան թւական-ների առաջին կեծուը՝	80-ամեան թւական-ների երրորդ կեծուը՝	80-ամեան թւական-ների առաջին կեծուը՝	90-ամեան թւական-ների երրորդ կեծուը՝
Մեծ Բրիտանիա	4,255	3,865	3,680	3,504
Նիդերլանդ	509	507	500	488
Բելգիա	967	935	?	?
Իտալիա	8,195	8,187	?	?
Ֆրանսիա	14,925	14,970	14,797	14,784
Գերմանիա	13,833	13,739	13,882	13,871
Դանիա	673	724	?	754

Բոլոր երկներներից, որոնց մասին գոյութիւն ունեն համեմատաբար լրիւ տեղեկութիւններ, միայն Դանիան է շարունակ լայնացնում իր ցանւած հողի տարածութիւնը։ Մեծ Բրիտանիայում և Նիդերլանդում, ընդհակառակը, մենք գտնում ենք այդ հողերի տարածութեան կրծատումը։ Ֆրանսիայում, 80-կան թւականների առաջին կիսում, ցանւած հողերի տարածութիւնը միքի բարձրացել է, բայց այնուհետև խկոյն և եթ ընկել է աւելի ցածր, քան 70-կան թւականների առաջին կիսին է եղել։ Գերմանիայում, ընդհակառակը, նա զգալի կերպով ընկնում է 80-կան թւականների առաջին կիսում, ապա բարձրանում է 80-կան թւականների երկրորդ կիսում և նորից ընկնում 90-կան թւականների առաջին կիսում։ Երկու երկների այդ տատանումները բացարձում են նրանց մաքսային քաղաքականութեամբ։ Ներմուծող հացի սպառելիք մաքսերի աւելացման մասին տարածող

լուրերը կամ այդ մաքսերի իսկական աւելացումն առաջ են բերում ցանւած հողերի տարածութեան ընդլայնացում. բայց հէնց որ լուրերը չեն ճշտում կամ մաքսերը չեն արդարացնում իրենց վրայ դրւած յոյսերը, ցանւած հողերի տարածութիւնը կրծատում է:

Կարելի՞ է արգեօք վերջնական հաշւել այն հետևանքները, որոնց յանգել են վերոյիշեալ երկիրները 90-կան թւականներին: Ի նկատի առնելով այն կրիտիքական դրութիւնը, որի մէջ գըտնուում են գիւղատնտեսները, որոնց մինչկ օրս յաջողւել է կանգուն մնալ, այդ հարցին պէտք է բացասարար պատասխանել: 1893 թւականին Անգլիայում նշանակւած է եղել թագաւորական յանձնաժողով անգլիական գիւղատնտեսութեան դրութիւնը հետազօտելու համար: Այստեղ մինք կարիք չունենք մանրամասն կանգ առնելու այն եղակացութիւնների վրայ, որոնց յանգել է յանձնաժողովը: Մեր նպտասակի համար բաւական է ծանօթանալ այն երկու կոմսութիւնների—Lincolnshire և Norfolk—գիւղատնտեսութեան դրութեան հետ, որոնք ամեն տեսակէտից գլուխ են կանգնած անգլիական հողագործութեանը: Lincolnshire-ը աչքի է ընկնում իր գեղեցիկ հողով: Սկսած 1846 թւականից՝ այդ կոմսութիւնն այսպէս խիտ է ծածկւած երկաթուղային գծերով, որ երկաթուղային կայարանից 8—9 անգլիական մղոն հեռուն հաշւում է այստեղ չափազանց մեծ տարածութիւն: Շնորհիւ դրան, Լինկոլնշրիթ գիւղատնտեսութիւնը 60-կան թւականների վերջում կանգնած է եղել խիստ բարձր մակերեսոյթի վրայ: Սակայն այդ կոմսութեան գիւղատնտեսութեան այժմեան դրութիւնը վերին աստիճանի կրիտիքական է: Բննտայի (հողային հասոյթ) անկումն 25, 40, 50 և մինչև անգան 80—90 տոկոսով՝ այստեղ սովորական երևոյթ է*): Բայց դա զեռ չի արտայայում իրերի իսկական դրութիւն: Բանը նրանումն է, որ բննտայի այն տոնտում-ը, որն այստեղ դեռ պահպանւել է, բացատրւում է շատ տեղեակ մարդկանց կողմից այն հանգամանքով, որ կապալառուները, կորցնելով կապալի վըրայ խոշոր գումարներ, ամեն ջանք գործ են դնում բէնտան պահպանելու համար, յոյս ունենալով, որ ժամանակները կըլաւանան, և նրանք կըծածկեն իրենց վնասները. իսկ առայժմ նրանք

շարունակում են աշխատել վնաս անելով: Կապալառուների արնատեսութեան դրութեան բնորոշման համար բերում ենք մի քանի օրինակ *):

Աղողութիւնների Հարուսացում:	Հաշվառման կարգավորում:	Զուտ վնասը			Միջին թւուլ տարեկան օ/օ կառպիտակի վրայ
		L.	S.	d.	
320	1885—94	434	19	5	2,2
491	1888—94	310	2	3½	1,52
1.200	1884—94	384	15	8	0,51
592	1880—94	1.454	0	3	6,73
1.800	1880—94	7.331	11	2	3,2
538	1883—93	1.169	10	0	2,4

Աւելի լաւ դրութեան մէջ չէ գիւղատնտեսութիւնը Norfolk-ում: Ահա թէ ինչպէս է Mr. H. Rew-ը ամփոփում այն եղրակացութիւնները, որոնց նա եկել ուսումնասիրելով գիւղատնտեսութեան դրութիւնը այդ կոմսութեան մէջ» **): «Ո՛չ մի կասկած չըկայ, որ խոշոր հողատէրերի դրութիւնը Նօրֆօլկում վերին աստիճանի խախուտ է: Դրա ապացոյցները մենք տեսնում ենք ամեն մի քայլում: Ամենայայտնի կալւածների շատ և շատ տէրեր... սահպելում են տեսնել, թէ ինչպէս տարեց տարի կրծատում են սրանց եկամուտները, իսկ վերջ ՚ի վերջոյ նրանք սափակած են լինում կապալով տալ իրանց տոհմային ամրոցները, որպէսզի որևէ տեղ աւելի աժամ կեանք վարեն»: Կապալառուների դրու-

*) Ibid., երես 118—130

**) R. C. on Agriculture: Report on Norfolk by Mr. Henry Rew, London, 1895

թիւնը աւելի լաւ չէ: «20—30 տարի սրանից առաջ Անգլիայում աւելի գոռող մարդ չկար, քան Նօրֆոլկի ֆերմէրը... Այժմ այդ փոխել է, այժմ Նօրֆոլկի կապալառուի տիպարը՝ աշխատանքից տանջւած, ճնշւած գիւղատնտեսն է... որ մշտական կոիւ է մշղում, որպէսզի ծայրը ծայրին հասցնէ... Գիւղատնտեսների մեղում, որպէսզի ծայրը ծայրին հասցնէ... Գիւղատնտեսների մեղում, որոնց հետ ես շիւել եմ; յաճախ անմիտիթար ծամանութիւնը, որոնց հետ ես շիւել եմ; յաճախ անմիտիթար կերպով է խօսում իր նիւթական դրութեան մասին»: Մի ֆերմէր, որը կապալով վերցնում է 400 ակր հող, ստիպւած էր վերջին տարիների ընթացքում փոխ առնել իր մասնաւոր կեանքի համար հիմնական դրամագլխից տարեկան 100 ֆունտ ստ.: Մի այլ ֆերմէրի կարծիքով, նրա համար աւելի ձեռնտու կըլինէր զլուխ պահել առանց կապալի, որովհետև միայն 1894 թւականին նա կորցրել է կապալում 1000 ֆունտ: 2000 ակրի կապալառուն, որն ունի գործի մէջ 20 հազար ֆունտ, ասում է, որ վերջին տարւայ ընթացքում չէ ստացել իր դրամագլխից ոչ մի շահ: Վերջացնում է Mr. Rew-ը իր հաշւէկշիւը հետեւել խօսքերով. «Այն տպաւորութիւնը, որ ես ստացայ Նօրֆոլկի հետազոտութիւնից, ցաւալի և մինչև անգամ անմիտիթար է: Նօրֆոլկի փառքը անցեալում այն բարձր է եղել, նրա կուլտուրան տասնամեակների ընթացքան բարձր է այնքան խոր, որ նա հաշւել է իրբու օրինակ, և այժմ անքում այնքան խոր, որ նա հաշւել է իրբու օրինակ, և այժմ անհաւատի է, թէ ճգնաժամը այնքան ուժեղ կերպով է ճանկել նրան և պէտք է, անկասկած, այստեղ ունենայ այնպէս անմիթար հետեւանքներ... Ճգնաժամն աճում էր անընդհատ և անզընթար, մինչև որ 1893, 1894 թւականներին դրութիւնը չդարձաւ սարսափելի, և զրեթէ բոլոր ֆերմէրները սնանկացան: Ինտայի անկում 20—60 տոկոսով, քայլքայեց շատ հողատէրերի, առանց զգալի օգուտ տալու կապալառուներին: Բազմաթիւ հին կապալ առուներ, որոնք սերունդներով նստել են մի ևնոյն հողի վրայ, հրաժարեցին կապալից... Շատ փորձւած գիւղատնտեսներ սընանկացել են կամ գտնւում են սնանկութեան ճանապարհին»:

Երօպայի ցամաքի վրայ գործերն աւելի լաւ չեն: Rudolf Meyer-ը բերում է մի քանի հետաքրքրական օրինակ Գիւղանի-այի և Ֆրանսիայի գիւղատնտեսութեան դրութիւնից *): Պօմերանիայում գտնւող մի կալւածից գրում են ինձ. «20 տարի առաջ

*) „Das Sinken der Grundrente“, Wien u. Leipzig, 1894.

ես գճարում էի իմ տոկոսները և դրանից վեր ունէի 20 հազար մարկ եկամուտ. այժմ ես չեմ կարող վճարել տոկոսները և դրա համար պէտք է տարեկան 6000 մարկի փոխառութեան դիմեմ»: Բրանդենբուրգի շրջանում ես գիտեմ մի կալւած, որը, ինչպէս և նախորդը, արտադրում է միայն հաց: Բայց առաջինը գտնւում է տիրոջ, իսկ երկրորդը՝ կապալառուի ընտանիքի ձեռքում: Դա տիրիքական լաւ ընտանիք է, որը վաթսուն տարի առաջ վերցրել է այդ կապալով, երբէք չէ վճարել չափից գուրս բարձր կապալավարձ և միշտ ապրել է համեստ—բուրժուական կեանքով: Այս թէ ինչ է գրում ինձ ընտանիքի այժմեան գլուխը. «Եթէ պատահեն էլլի երկու վատ տարի, ես կատարելապէս սնանկացած կը լինեմ և ինձ հետ միասին շրջանի կապալառուների կէսը»: Միւս հողատէրը, որը 20 տարի առաջ ստանում է եղել տարեկան 20 հազար մարկ զուտ արդիւնք և որը այժմ ինքը վճարում է տարեկան 6000, գրել էր ինձ. «մեր կողմերում կայ մօտ 70 հողատէր, որոնցից 8—9 հոգի միայն կարող են դիմանալու յոյս ունենալ. միացածները կքայքայեն դեռ մինչև դարուս (անցեալ) վերջը»: Ֆրանսիայից հին բարեկամս գրում է ինձ. «Երբ իմ հայրը ժառանգեց 1860 թ. Տ-ի կալւածը Շամպանիում, նա գնահաւատ էր 1.300,000 ֆրանկ: 1892 թ. այդ կալւածն անցաւ իմ եղբօր ձեռքը և նա գնահաւատից այդ 450 հազար: 1860 թ. կալւածը տւել է 15 հազար կապալավարձ, իսկ անտարից՝ 10 հազար եկամուտ: Այժմ տնտեսութիւնը վարում է եղբայրս ինքը, և կալւածը չի տալիս ոչ մի օգուտ: միայն անտառն է, որ դեռ տալիս է 7 հազար ֆր.: Ա-ի կալւածը, դարձեալ Շամպանիում, իմ հայրը ժառանգել է 1854 թ. և գնահաւատել 450 հազար: Նրա սեփական կառավարութեամբ կալւածը տալիս էր 11 հազար ֆր. գիւղատնտեսութիւնից, և 3 հազար անտարից: 1892 թ. ես ժառանգաբար սուացել եմ այդ կալւածը և գնահաւատել 150 հազար ֆրանկ: Գիւղատնտեսութիւնը վնաս է բերում, անտառը դեռ մի բան տալիս է»:

Իրենց գոյութիւնը մինչև այժմ պահանած այդ տնտեսութիւնների դրութիւնը վկայում է, որ նրանց օրերը ևս հաշւած են, և որ-եթէ իրերի դրութիւնը չփոխվի—եւրօպական հողագործութիւնը հետզիւետէ աւելի կը կրճատւի:

Կարծիք կայ, որ կրիտիկական դրութեան մէջ գտնւում է նէ թէ ամբողջ գիւղատնտեսութիւնը, այլ միայն հացի արտա-

գրութիւնը: Այդ հայեացքի կողմանակիցները համարում են բոլոր գժւարութիւնները միայն ապացոյց այն բանի, որ գիւղատնտեսութեան ծանրութեան կենտրօնը պէտք է տեղափոխւի հողագործութիւնը: Վերը մենք աեսանք, որ անասնապահութեան տնտեսութեան գլխաւոր արդիւնքները գեռքաւականաչափ չեն մտել համաշխարհային փոխանակութեան շրջանը, որը նեղ դրութեան մէջ է դրել հողագործութիւնը: որ դա ամենամօտ ապագայի գործն է: Այսուամենայնիւ այժմ արդէն սկսում են գժւարութիւններ նկատւել նաև այդ շրջանում: Somerset կոմսութիւնը գտնում է Անգլիայի անասնապահական շրջանում, այսպէս անւանւած Crasind country-ում: Mr. Turner-ը թագաւորական յանձնաժողովի համաձայնութեամբ, հետազօտել է այդ կոմսութիւնը և եկել հետեւել եղբակացութիւններին: 200 ակրի կապալառուն վարում է կաթնատնտեսութիւն և այդ բանի համար նա պահում է 70 կով և 25—30 հերինջ: Վերջին երկու տարւայ ընթացքում նա ոչինչ չէ վաստակել: Մի ուրիշ ֆէրմեր ասել է Mr. Turner-ին: «Ես հաշւել եմ իմ տնտեսութեան միջին եկամուտը վերջին 10 տարւայ ընթացքում: Եթէ եկամուտից հանենք բոլոր ծախսերը և գործադրւած դրամագլխի տոկոսները, այլ ևս չի մնայ ոչ մի օգուտ»: Ֆէրմերների, այդ դրութիւնը չի կարելի բացատրել չափազանց բարձր րէնտայով, որովհետև նա սաստիկ կրճատւել է այդ կոմսութեան մէջ: 1300 ակր տարածութեամբ ագարակը, որի համար առաջններում վճարում էին 800 ֆունտ, այժմ արևում է 650-ով: 1600 ակրանոց մի այլ հողաբաժին, որ առաջներում տալիս էր 1000 ֆ. կապալաւարձ, այժմ տալիս է 450 *): Cumberland կոմսութեան մէջ, որը հետազօտել է Mr. Fox, գործերի գրութիւնը քիչ լաւ է, բայց բենտայի անկումն այստեղ ևս հազւադէպ չէ:

II.

Այդպիսով բոլոր այն գանգատները, որ լուսում են ոչ թէ հացահատիկների, այլ ընդհանրապէս գիւղատնտեսական ճգնա-

*) R. C. on Agriculture Report of the From District of Somerset, by M. Faber. Turner. L. 1895, երես 8—17.

ժամի մասին, պարապ երևակայութեան յերիւրւածքներ չեն: Բայց ունենք մենք արդեօք այստեղ գործ ճգնաժամի հետ՝ բառիս սովորական մտքով: Ամեն մի արդիւնաբերական ճգնաժամ գերարտադրութեան հետևանք է,—կարող է այդ մասին խօսք լինել և ներկայ դէպքում: 70-ական թւականների երկրորդ կիսից մինչև 80-ական թւականների երկրորդ կէսը, գարու և հաճար արտադրութիւնը կրճատւել է 465,2 և 285,2-ից մինչև 461,8 և 276,5 միլիոն հեկտարի տարածքում կարող է աւելացել է 10 տոկոսով (706,4 միլ. մինչև 777,9 մ.) բոլոր հացահատիկների արտադրութիւնն առհասարակ աւելացել է 16 տոկոսով: Բայց ինկատի չունենալով այն հանգամանքը, որ առանձնապէս աւելացել է եգիպտացորենի արտադրութիւնը, որը սնունդի տեսակտից կանգնած է ցորենից և գարուց ցածր,—պէտք է ասել, որ 80-ական թւականների երկրորդ կիսի արտադրութեան բարձր թւանշանի վրայ ազգել են մի կողմից՝ բերքը հաշւելու կատարելագործւած նոր միջոցները և միւս կողմից՝ ընդհանուր հաշւեցուցակի մէջ նոր երկիրներ մացնելը: Միևնոյն ժամանակ, եւրօպական ցամաքի հինգ պետութիւններում (Գերմանիա, Ֆրանսիա, Աւստրիա, Հունգարիա և Դանիա), Մեծ-Բրիտանիայում, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներում և Եապօնիայում, որոնցում տեղի են ունենում պարբերական ժողովրդագրութիւններ, ազգաբնակութիւնը 80-ական թւականների ընթացքում աւելացել է 244,1 միլիոնից մինչև 272,6 միլ. մարդ, այսինքն 11,7 տոկոսով: Հետեւաբար, հացահատիկների արդիւնքների կարելի սպառումն աճում է եթէ ոչ աւելի արագ, յամենայն վեպս ոչ աւելի գանդաղ, քան արտադրութիւնը: Եթէ դրա վրայ աւելացնել և այն, որ խօսքը մարդկային ամենառաջին կարիքների, որոնք պէտք է բաւարարութիւն ստանան ինչ էլ որ լինի, և որոնց բաւարարացումն թեթևանում է գների անկման շնորհիւ,—այն ժամանակ պարզ կլինի, որ գերարտադրութեան մասին խօսք չի կարող լինել:

Ճգնաժամի երկրորդ առանձնայատկութիւնը—նրա ակողականութիւնն է: Մշակող արդիւնաբերութեան մէջ՝ ճգնաժամից առաջացած գիւղարաբութիւնները յաղթահարելու համար՝ ամենաշատը հարկաւոր է 5 տարի: Գիւղատնտեսութեան մէջ՝ ճգնաժա-

մը տեսում է—Անգլիայում 70-կան թւականների սկզբից, եւրօպական ցամաքի մի քանի երկրներում՝ 70-ական թւականների կիսից, իսկ միւսներում՝ 80-կան թւականների սկզբից եւ մինչև այժմ էլ դրա վերջը չի երևում:

Սակայն աւելի կարևոր է ճգնաժամի երրորդ առանձնայատկութիւնը: Մշակող արդիւնաբերութեան մէջ ճգնաժամին դոհ են գնում, մանր կապիտալով աղքատ և այդ պատճառով, աշխատանքի արդիւնաւէտութեան տեսակէտից վատ դրւած ձեռնարկութիւնները: Գիւղատնտեսութեան մէջ նկատում է միանգամայն հակառակը: Վերը մենք տեսանք, որ հացի արտադրութիւնը արեմտեան եւրօպայում կրծատում է: Հետեւալ երկրներում նաև լայնացել է:

Ռուսաստ. (70 թ.թ. կիսից մինչև 1890—94 թ.թ.) 3,0 0/0-ով
Աւստրո-Հունգար. (նոյն ժամանակամիջոցում) 5,1 » »

Բալկաննեան պետ. (1880—84-ից մինչև 1885—89 21,1 » »
Միացեալ-Նահ. (70 թ.թ. կիսից մինչև 1890—94) 71,1 » »

Կանադայում (70-կան թ.թ. կիսից մինչև 1885—89) 104,4 » »
Արգենտինիայում (1885—89-ից մինչև 1890—94) 233,0 » »

Աւստրիա. (70-կան թ. կիսից մինչև 1885—89) 70,0 » »
Աւելի՝ բարձր է արդեօք աշխատանքի արդիւնաւէտութիւնը այդ երկրներում: Գիւղատնտեսութեան մէջ՝ իբրև աշխատանքի արդիւնաւէտութեան նշանաշափ՝ կարող է մինչև որոշ աստիճան ծառայել բերրիութիւնը: Հողագործութեան յատկացրած մակերեսութիւնները, 80-ական թւականների երկրորդ կիսում, տալիս էր միջին թւով հեկտոլիտր:

	ցորեն	գարի	վարսակ
Մեծ Բրիտանիայում	. .	26,0	28,8
Նիդերլանդում	. .	25,2	38,3
Բելգիայում	. .	22,0	31,9
Գերմանիայում	. .	17,8	20,3
Ֆրանսիայում	. .	15,6	18,3
Աւստրիայում	. .	11,3	19,2
Միացեալ-Նահանգներում	. .	10,5	19,1
Ռուսաստանում	. .	6,8	9,4

Արտադրութիւնը կրծատում է առանձնապէս ուժեղ կերպով Մեծ Բրիտանիայում, թէպէտ բերրիութիւնը այստեղ ամենից բարձր է: Հետեւալ չորս երկիրներում ևս արտադրութեան կրծատումն ուղեկցւում է բաւականին բարձր բերրիութեամբ: Ընդհակառակը, վերջին երեք երկիրներում, որոնք խաղում են համաշխարհային վաճառանոցներում յաղթողի դերը, բերրիութիւնը ամենից ցածր է, մասնաւանդ Ռուսաստանում:

Ի հարկէ, բարձր բերրիութիւնը դեռ ապացոյց չէ բարձր շահաւէտութեան. եթէ ծախքերը չափազանց բարձր են, այն ժամանակ բարձր ընդհանուր եկամուտը կարող է լինել և վասակար: Արդեօք այստեղ մենք գործ ունենք այդ տեսակ երեսյթի հետ:

Հացի արտադրութեան ծախքերը բաժանում են հետեւալ կերպով. 1) Բանուրական ոյժի վրայ, 2) աշխատանքի գործիքների վրայ և 3) հում նիւթի վրայ: Անգլիայում, ուր աշխատավարձնաւելի բարձր է, քան մնացած եւրօպայում, գիւղատնտեսական բանուրն ստանում է օրական (օրւայ աշխատանքի պայմանով) 2 ֆրանկ 50 սանտիմ, Բելգիայում՝ 2 ֆր. 40 սանտ., Ֆրանսիայում՝ 2 ֆր. 21 սանտ., Պրուսիայում՝ 1 ֆր. 80 սանտ. և 1 ֆր. 15 սանտ. *): Անգլունկաննեան երկիրները չփառեն աշխատանքի ոյժի այդօրինակ ցածր գնահատում: Հիւսիսային Ամերիկայի արևմտեան նահանգներում, հացահատիկների արտադրութեան այդ իսկական կենտրոնում, 1890 թ. բանուրն ստանում է եղել ամսական (26աշխատանքի օր) 22 դոլար, ուրեմն օրական 4 ֆր. 70 սանտ. **): Տասմանիայում (Աւստրալիա) գիւղատնտեսական բանուրն ստանում է շաբաթական 10—17 շիլլինգ, որ միջին թւով կազմում է օրական 2,1—3,8 ֆրանկ: Նոր Հարաւային Ուէլսում աշխատավարձը դեռ աւելի բարձր է. այստեղ պայմանաժամով աշխատառող բանուրն ստանում է. 40—52 ֆունտ, որ կազմում է 100—1310 ֆրանկ, մի գումար, որ անգլիական բանուրը չի կարող աշխատել, եթէ նոյն իսկ նա բանէր շուրջ տարին, ստանալով օրական 2½ ֆրանկ (այդ պայմանով նա կվաստակէ միայն 2,5 × 360 = 900 ֆրանկ ***): Ինչ վերաբերում է աշխատանքի գործութիւնը Հայաստանում և Արևմտական Հայաստանում:

*) «A. de Foville». La France économique. An. 1889, եր. 99 և 101.

**) «Dr. F. v. Juraschek». Uebersichten der Weltwirtschaft. 1885—89, երես 14.

***) «Ed. Greville». The Year-book of Australia, 1891, եր. 913 և 934.

ծիքներին, աւելորդ է ապացուցել, որ Եւրոպայում նրանք աւելի աժան են, քան վերջինիս հետ մրցող շատ երկիրներում, որովհետև այսպիսի երկիրներ, ինչպէս Արևելեան Հնդկաստանը, Հարաւային Ամերիկան, Աւստրալիան, Ռուսաստանը իրենց գիւղատնտեսական գործիքներն ստանում են գլխաւրապէս հէնց արևմբտեան Եւրօպայի երկիրներից: Ուշադրութեան արժանի է և այն, որ վարկը որին ստիպւած է դիմել ամեն մի գիւղատնտես, անդրովկեանեան երկիրներում, Ռուսաստանում և Արևելեան Հնդկաստանում անհամեմատ թանգ է քան արևմտեան Եւրօպայում: Frederiksen-ի «The Journal of political economy»-ի մէջ հրատարակած 1894 թւականի տեղեկութիւնների համաձայն, Միացեալ-Նահանգներում հողի գրաւով վերցրած պարտքերի համար վճարում են. ատլանտիական շրջանի հիւսիսային մասում 6 տոկոս, կենարօնի մի տոկոս վերցրած պարտքերի համար վճարում 10 քանի նահանգներում 8—9 տոկոս, արևմտեան նահանգներում 10—10^{1/2} և 11 տոկոս: Եթէ գրաւով վարկը այդպէս թանգ է, ակներև է, որ անձնական գիւղատնտեսական վարկն աւելի թանգ է: Ռուսաստանում օրէնքը մինչև անզամ գնահատումէ վարկը 12 տոկո: Մինչեռ պաշտօնական տոկոսահաշիւը 1889—93 թւականներին Բերլինում կազմում էր միջին թւով 3,9, Լօնդոնում 3,5; Ճիշտէ, անձնական գիւղատնտեսական վարկը գնահատում է այդ չափ, անձնական գիւղատնտեսական վարկը գնահատում է այդ չափ մի քիչ բարձր, բայց յամենայն դէպս 5—6 տոկոսից ոչ բարձր:

Միակ առաւելութիւնը (ի նկատի առնելով, ի հարկէ, բացառապէս արտադրութեան արժէքի տեսակէտից՝ խօսքինեղ մտքով), ուստի առաւելութեան արժէքի տեսակէտից՝ մրցակիցները—այդ հում որ ունեն Եւրօպական գիւղատնտեսների մրցակիցները—այդ հում նիւթի մէջ նրանց արած տնտեսութիւնն է, որովհետև նրանց քիչ ուժասպառ դարձած հողերը բոլորովին կարիք չեն զգում (կամ զգում են սահմանափակ չափերով)՝ պարարտացման մէջ: Բայց զգում է արդեօք այդ տնտեսութիւնը նախ այն տարբերութիւնը, որ կայ այդ երկիրների և Եւրօպական երկիրների բերրիութեան մէջ, և երկրորդ՝ այն ծախքերը, որ արւում են այդ արդիւնքները Եւրօպական շուկաներ աեղափոխելու համար, ուր նրանք ունեն սպառման միակ հարաւառութիւնը: Հետևեալ տարրական հաշիւը պատասխանում է այդ հարցին: Մի հեկտար հող տալիս է Ռուսաստանում, Միացեալ-Նահանգներում և Աւստրալիայում միջին թւով 9 և կէս հեկտոլիտր ցորեն: Վերցնենք վերցները՝ 12 հեկ-

տոլիտր: Համաձայն Լօնդոնի գների, մի հեկտոլիտր ցորենը արժել է 1883—94 թւականներին 8 շիլլինգ: Ուրեմն, ամբողջ հեկտարի բերքը արժել է 96 շիլլինգ: Մի հեկտարի բերքի տեղափոխութիւնը գնահատում է (Նիւ-Իօրկից, Բօմբէյից, Օդէսայից և Լիբավայից մինչև Լօնդոն) 13,67 շիլլինգ: Հանելով այդ գումարը մի հեկտարի տւած ընդհանուր եկամուտից, մնում է 82,32 շիլլինգ: Արևմտեան Եւրօպայում մինոյն հեկտարի տւած ընդհանուր եկամուտը կազմում է 170,4 շիլլինգ, հաշւելով 21,3 հեկտոլիտր (միջին թիւը Անգլիայի, Հօլլանդիայի, Բելգիայի, Ֆրանսիայի է Գերմանիայի համար) 8 շիլլինգով ամեն մի հեկտոլիտրը: Մինչև անգամ ամենացածր բերքը ֆրանսիայում տալիս է 124,8 շիլլինգ եկամուտ: Այդ գումարից անհրաժեշտ է հանել պարարտացման գինը: Միւրնալը հաշւում է ամեն մի ակրի պարարտացման գինը Անգլիայի համար 10 շիլլ. *), կամ ամեն մի հեկտարի համար՝ 25 շիլլ. Ցածր է արդեօք այդ գինը իսկականից թէ բարձր, յամենայն դէպս, թիւրիմացութիւններից խոյս տալու համար, աւելացնենք նրան 25 տոկոսով. կըստացի 31,5 շիլլ.: Հանելով այդ գումարը ընդհանուր եկամուտից, մենք կըստանանք, որ արևմտեան Եւրօպայում ընդհանրապէս մնում 138,9 շիլլինգ—69 տոկոսով՝ աւելի, քան նրա մրցակիցների մօտ, և մինչև անգամ նւազ բերքը ունիցող ֆրանսիայում մնում է 93,3 շիլլինգ—13,4 տոկոսով՝ աւելի: Հետեւարար, ոչ միայ ընդհանուր եկամուտը, այլ և մաքուր մուտքը բաւականաչափ բարձր է հէնց այն երկիրներում, որոնք գլխաւորապէս դարձել են ճգնաժամի զոհը:

Թէկ այսպէս անւանւած «երիտասարդ երկիրներում» գերիշտում է մանր տնտեսութիւնը, բայց մանր անտեսութիւններին կից այստեղ գոյութիւն ունեն և շատ խոշոր տնտեսութիւններ. ուստի մեր տասծը անբաւական է, որպէսզի պարզի զանազան չափերի տնտեսութիւնների վերաբերմունքը զէպի ճգնաժամերը: Դրա համար տեսնենք, թէ ինչպէս են վերաբերում զէպի ճգնաժամամը մանր տնտեսութիւնները իրենց գոյութեան որբանում—արևմտեան Եւրօպայի երկիրներում:

Խոշոր գիւղատնտեսութեան կողմանակիցները առաջ են բերում նրա մի շարք տառելութիւնները: «Որովհետև օգուտը, որ

*) Mulhall's Dictionary of Statistics, 1884, երես 7:

ստացւում է արտադրական սպառումից, հաւասար չափով չէ աւելանում սպառման չափերի աւելացման հետ, ուստի խոշոր ձեռնարկութիւնները ունեն աւելի առաւելութիւններ աշխատանքի և լայն սպառման միացումից: Ինքնըստինքեան հասկանալի է, որ երեսուն կովի համար մարագ շինելու դէպքում անհրաժեշտ չէ տասնինդ անգամ աւելի ծախսել, քան 2 կովի համար մարագ շինելու դէպքում: Սայլը՝ բեռնած հացահատիկների 60 ցենտներով նշանակւած տեղը հասցնելու համար, չի պահանջում 6 անգամ աւելի աշխատանք և ժամանակ, քան 10 ցենտներով բեռնած սայլի նոյն տեղափոխութիւնը: Եթէ վատ հողը հերկելու համար անհրաժեշտ է 3 ձիանոց արօր, այն ժամանակ գիւղացին իր մի զոյգ ձիով չի կարող, ինչպէս հարկն է, մշակել իր հողաբաժինը, իսկ 6 ձիով աշխատողը կարող է անել 2 անգամ աւելի, քան 4 ձիով աշխատողը, 9 ձ. աշխատողը՝ 3 անգամ աւելի, քան 5 ձ. աշխատողը: Խոշոր և մանր սեփականատիրոջ տնտեսութիւնների մէջ արօրը և գութանը բանում են միևնոյն տեղը, բայց առաջինում նրանք շահագործում են 10 անգամ աւելի: Կարեոր է նաև գերաբերմունքը դէպի անսառնները: Գիւղացին չի կարող հաշլի առնել անսանի բնութիւնը և նա շահագործում է սրան միաժամանակ և ինչպէս աշխատանքի ոյժ, և ինչպէս միս ու կաթ տուղ անսառն, իսկ դա խանգարում է ընդհանրապէս որևէ լաւ հետևանք ստանալուն: Խոշոր տնտեսութիւնը շահագործում է անսառններին ըստ նրանց անհատական որակի: Խոշոր ձեռնարկութիւնը, ուր այդ կարելի է, պահպանում է աշխատանքի բաժանման սկզբունքը և օգտուում է տեխնիքական ու տնտեսական բարձր գիտելիքներով: Նա կարող է հողի առանձնայատկութիւնների և սպառման շուկաների պահանջների համապատասխան՝ պահպանել որոշ տնտեսական պլան: Վերջապէս, վարկը թէ աւելի հեշտ է և թէ աւելի աժան խոշոր ձեռնարկութեան համար» *):

Օ. Geck-ի այդ, ի դէպս ամենեին ոչ-սոր, պատճառաբանութեան հետ չի կարելի չհամաձայնել, թէկուզ այն պատճա-

*) Oskar Geck. Die Ueberlegenheit d. landwirtschaftlichen Crossbetriebs über d. Kleinbetrieb. Neue Zeit, 1894—95, 5. II, եր. 166.

ոով, որ գործնական կեանքը վաղուց է ապացուցել նրա ձշմարտութիւնը: Միացեալ-Նահանգներում, օրինակ, ցորենի 100 քառակուսի մղոնի մեքենաների միջոցով մշակման համար պահանջում է 400 բանտոր: Որպէսզի նոյն հետևանքներին գալ սովորական ճանապարհով, անհրաժեշտ կլինէր առնւազն 5000 մարդ: Խոշոր կապիտալիստական տնտեսութիւնները ծախսում են ամեն մի հեկտարի վրայ միջին հաշուով 100-ից մինչև 120 ֆրանկ և ստանում են 18—20 հեկտոլիտր. Օգայո նահանգի մանր պարագները ծախսում են 215 ֆրանկ, իսկ հաւաքում 10—12 հեկտոլիտր հունձ ամեն մի հեկտարից *):

Խոշոր տնտեսութիւնների բոլոր այդ առաւելութիւններն ինկատի առնելով, պէտք էր սպասել, որ ճգնաժամը նրանց վրայ ամենեւին չի ազդի կամ առնւազն կազդի աւելի թոյլ կերպով, քան թէ մանր ձեռնարկութիւնների վրայ: Իրականութեան մէջ, սակայն, մենք տեսնում ենք ուղղակի հակառակը: Վերը բերւած աղիւսակներից երեսում է, որ բոլոր արևմտեան եւրօպական երկիրներից ճգնաժամից չէ վնասել միայն Դանիան: Այդ երկիրը տարբերում է միայն հետևեալով: 73 հազար գիւղատնտեսական հողարածիններից այնտեղ 71 հազարը պատկանում է գիւղացիներին, այսինքն 97 տոկոս: Հետևապէս, մենք կատարեալ հիմք ունենք կարծելու, որ ճէնց գիւղացիական տնտեսութեան տիրապետութիւնն է փրկել Դանիան ճգնաժամից: Սակայն ուրիշ երկիրներում մենք արդէն ուղղակի ապացուցներ էլ ենք գտնում այն հանգամանքի, որ մանր տնտեսութիւնն աւելի է ընտելացած ճգնաժամի գէմ կուելուն: 1879 թւականին ձեռնարկած ֆրանսիական անկետը հաւաքել է գիւղական համայնքների կարծիքները, որոնք «տարբերում են ամենից առաջ և միջակ կալւածներ՝ կապալառուական և դաշտային տնտեսութիւններով առաւելապէս» ու մանր կալւածներ, որոնք շահագործում են սովորաբար իրենց սեփականատէրերի ձեռքով: Այն տեղերում, ուր իշխում է անսապահութիւնը, կապալառուական տնտեսութիւնները պահպանել են կապալի գների բարձրացման գգումը (որովհետեւ անսանա-

*) Николай-онъ. Очерки нашего преобразованного хозяйства. стр. 227—228

պարութեան մէջ ճգնաժամը, ինչպէս մենք զիտենք, սկսել է պարզ-
ւել միայն 90-ական թւականների սկզբին)...: Ընդհակառակը, հա-
ցարեր շրջաններում կապալի գները ընկել են: Անասնապահական
և հացարեր շրջանների միջև տարրերութիւնն աւելի թոյլ է այն-
տեղ, ուր տիրում է դաշտակապալը: Իսկ ամենաբարեյացող հե-
տեանքները՝ թէ անասնապահական և թէ հացարեր շրջաններում
տւէլ է մանր հողատիրութիւնը*): Bāral-ը իր անկետի մասին ա-
րած հաշվետութեան մէջ միանգամայն պացուցւած է համարում,
որ «ճգնաժամը (ֆրանսիացում) չէ ընդգրկում մանր հողատէրե-
րին, այլ շօշափում է խոշոր հողատէրերին և կապալառուներին» **):
Ոչ պակաս բնորոշ տեղեկութիւններ է հայթայթում Պրուսիան:
Գիւղատնտեսութեան գրութեան բնորոշման համար այստեղ ծա-
ռայում է հաղաբաժիններն աճուրդի հանելը: Մանր տնտեսութիւն-
ները՝ 2 հեկտարից պակաս հողաբաժնով բռնում են Պրուսիայի
ամբողջ գիւղատնտեսական մակերեսոյթի 1,52%/₀, իսկ աճուրդի զոհ
դարձած հողերի մէջ սեփականատէրերի այդ խաւը մասնակցում
է 0,68%/₀-ով: 2—10 հեկտար տարածութիւն ունեցող կալւածները
բռնում են գիւղատնտեսական մակերեսոյթի 14,68%/₀-ը և մասնակ-
ցում են աճուրդի մէջ 4¹/₂ տոկոսով: 10—50 հեկտար ունեցող
գիւղացիական տնտեսութիւնները, մասնակցելով գիւղատնտեսա-
կան մակերեսոյթի մէջ 38,9 տոկոսով, ունեն աճուրդային վաճառք-
ների մէջ իբրև բաժին՝ 14,7 տոկոս: 50—100 հեկտար ունեցող
կալւածները գտնուում են արդէն աւելի վատ գրութեան մէջ.
մասնակցելով հողատիրութեան մէջ 10,11 տոկոսով, աճուրդի մէջ
նրանք բաժին ունեն 7,71 տոկ.: Բայց այստեղ ևս սեփականատի-
րութեան տոկոսը գերազանցում է աճուրդային վաճառքների տո-
կոսը: Իսկ սկսած 100—200 հեկտար ունեցող կալւածներից՝ այդ
գրութիւնը փոխում է: Այդ կալւածները, բռնելով հողերի՝ 5,98
տոկոսը, մասնակցում են աճուրդի մէջ 11,67 տոկոսով, այսին-
քըն մասնակցութիւնը վաճառքի մէջ երկու անգամ աւելի է հո-
ղատիրութեան մէջ ունեցած մասնակցութիւնից: Դեռ էլ աւելի

*) T. v. Reitzenstein. Agrarische Zustände in Frankreich, 1884, եր. 89—90

**) E. läger. Die Agrarfrage, հատ. I, եր. 12

վատ է 200-ից աւելի հեկտար ունեցող կալւածների գրութիւնը.
Նրանք բռնում են գիւղատնտեսական մակերեսոյթի 29,86 տոկոս,
բայց մասնակցում են աճուրդի մէջ 60,47 տոկոսով: «Աւելի վըն-
ական ապացոյց այն հանգամանքի, որ ճգնաժամը գլխաւորապէս
պայթել է խոշոր տնտեսութիւնների գլխին, չի կարող լինել—ա-
սում է վերը բերած տեղեկութիւնների վերաբերեալ Կոնրադը: Յե-
տոյ, եթէ լիշել ոք ամենախոշոր տնտեսութիւնների մեծագոյն
մասը պատկանում է իրենց տէրերին մայօրատի պայմանով և որ
միւս մասը գտնուում է խիստ հարուստ մարդկանց ձեռքում, որոնք
կարող են ատանել եկամուտի կրծատումը, այն ժամանակ համար-
ծակ կերպով կարելի է ասել, որ քանի խոշոր է կալւածը, այն-
քան նա աւելի է ենթարկւած ժամանակի պայմաններին, այսին-
քըն այնքան աւելի պակաս գիւղադրութեան ոյժ ունի նա»... *):
Ռուսաստանը կարող էր լինէր մեզ զբաղեցնող խնդրի համար
կանգ առնում նրա վրայ: Բայց և այսպէս, այստեղ ևս մենք գըտ-
նում ենք մանր տնտեսութեան աւելի մեծ կայունութեան ապա-
ցոյց: Հողագործութեան մինիստրութիւնը իր 1894 թ. հաշւէկը-
ռի մէջ մատնացոյց անելով ոռւսական հողագործութեան գժւա-
րին գրութեան վրայ, անհրաժեշտ է համարում բացատրել, որ
գիւղացիական տնտեսութիւնը գների անկումից շատ քիչ վաս-
է կրել **): Մասնաւոր տեղեկութիւնները խօսում են աւելի կըտ-
րուկ ձևով: Այսպէս, Տիրասպոլի գաւառում 1894 թւականին, «Ը-
նայելով հացի ցածր գներին, հողի պահանջը մեծ էր: Դեռ աշ-
նանը, գաւառի շատ մասերում, ամբողջ հողը, որ տրուում է սո-
վորաբար տարեկան որոշ գումարով, բաժանւած էր արդէն» ***):
Վարզիս տոկոսը գտնուում է աճուրդային վաճառքների տո-
կոսը, որ ճգնաժամը չէ խանգարում ոռւս գիւղացուն մինչև ան-
գամ կապալով հող վերցնել: Աւելի պակաս, իհարէէ, նա խանգարում է
գիւղացուն վարել տնտեսութիւնն իր սեփական հողի վերայ: Եւ
գիւղացուն վարել տնտեսութիւնն իր սեփական հողի վերայ: Եւ
գիւղապէս, վերջերս հողի պահանջը գիւղացիների կողմից ոչ մի-

*) J. Conrad. Agrarkrisis in Deutschland. Handwörterbuch,
առաջին յաւելւած, երես 17—18: Նոյն հայցքին է յանգում
միւս գերանագէտ՝ Miaskowsky. Տես Agrarpolitische Zeit- und,
Streitfragen, երես 117

**) 1894 տարին գիւղատնտեսական տեսակէտից:

***) „Русскія Вѣдомости“, 1896, 6 մարտի:

այն չի թուլացել այլ մինչեւ իսկ ուժեղացել է։ Մի թղթակցութիւն Տաւրիկեան նահանգից հետաքրքիր կերպով նկատում է խոշոր հողատէրերի և գիւղացիների վերաբերմունքը դէպի հողը։ «Տաւրիկեան նահանգի Դնէպրօվի գաւառը, —ասում է թղթակցը, —ներկայանում է ամենախոշոր մասնաւոր կալւածատիրութիւնների գլխաւոր կենտրօնը, և տասնեակ հազարաւոր դեսետին ունեցող կալւածատէրերի թիւը բաւական շատ է։ Բոլոր այդ խոշոր կալւածները փոքր առ փոքր հալում են իրենց տէրերի ձեռքում, և ապագայում, անտարակոյս նրանց սպասում է մի վիճակ —մասնահատւել և ընկնել գիւղացիների ձեռքը... Խոշոր կալւածների գիւղացիների ձեռքն անցնելու ընթացքը Դնէպրօվի գաւառում արագ կերպով առաջ է ընթանում։ Այս տարի միանգամայն ծախում է և անցնում մաս մաս գիւղացիներին Սարօգանովի ահագին կալւածը 22 հազար դեսետին մեծութեամբ։ Մալցեփի, Շոլիկօվի, Կուլիկօվի և այլ ազնւականների հողերը, տասնեակ հազարաւոր դեսետին չափերով, ծածկւած են այժմ գիւղացիների տնտեսութիւններով։ Ալէքսանդրօվկեան ահագին կալւածը՝ 28 հազար դես. չափ, արդէն ծախւած է։ 18 հազար դես. գնել են գիւղացիները, իսկ 10 հազար դես. միջնորդները, նոյն գիւղացիներին մաս մաս ծախելու համար։ Ծախում են հարաւային ոռուսական տնտեսութեան այնպիսի սիւների կալւածների մասերը, ինչպէս պ. պ. Ֆալց—Ֆէյն։ Այս մարդկանց ցուցականներում, որոնք առաջին անգամ երևան են գալիս ոչ իբրև գնողներ, այլ իբրև վաճառողներ, բացի պ. պ. Ֆալց—Ֆէյնից, մենք հանդիպում են պ. Սկազօվսկու—տեղական խոշոր կալւածատիրոջ—ազգանունը։ Եւ ամենուրեք վաճառքի հանող հողերը հաշւում են շատ հազարաւոր դեսետին, իսկ գնողները ներկայանում են գրեթէ բացակապէս գիւղացիները» *): Ներսօնի նահանգում 1894 թ. աղնաւականները, պաշտօնեանները, վաճառականները և ուրիշ արտօնեալ դասեր զրկւել են ընդհանուր առմամբ 16,080 դ.ս. հողից, իսկ գիւղացիները գնել են 13,980 գեսետին **):

Մեր բոլոր ասածները բաւականաչափ պարզում են մանր

*) Ал. Ярошко. Земельная горячка въ Тавр. губ. «Одес. Лист.» 1896, №316.

**) Статистико-эконом. обзоръ Херсонск. губ. 1894 թ. երես 6

տնտեսութեան վերաբերմունքը դէպի ճշնաժամը։ Կասկած չըկայ գների անկումից նա ևս լիսաւել է. բայց այն ժամանակը երբ խոշոր անտեսութիւնը վար է դնում իր գէնքերը, —որովհետեւ կոխւ այլ ևս նրա ոյժերից վեր է, մանը տնտեսութիւն ակներկ շարունակում է մաքառել ու մաքառել աւելի մեծ աջողութեամբ։ Բայց չի հակասում այդայն վերոյիշեալ փաստին, թէ արտադրութեան տեսակէտից խոշոր տնտեսութիւնն աւելի նպատակայարմար է գրւած։ Այդ ձեւական հակասութիւնը երկար ժամանակ փախեցնում է եղել տնտեսագէտներին։ Մինչդեռ բաւական է աւելի խորը թափանցել խնդրի մէջ, որպէսզի համոզել, որ այստեղ ոչ մի հակասութիւն չկայ։ Երբ խօսում են այս կամ այն ձեռնարկութեան կանգունութեան մասին, միայն արտադրութիւնը չեն կութեան կանգունութեան մասին, միայն արտադրութիւնը չեն աչքի առաջ ունենում, որովհետև մանր և խոշոր տնտեսութեան հասկացողութեան հետ ներկայումս կապւում է ոչ միայն տարբերութիւնը արտադրութեան մէջ, այլ և տնտեսութեան եկամուտների բաշխման մէջ։ Խոշոր ձեռնարկութիւնը—կապիտալիստական ձեռնարկութիւն է, և ինչպէս այդպիսին, բացի բանուրից ու կապիտալիստից, ունի հողատէր և ձեռնարկող (կապալառու)։ Իսկ մանր ձեռնարկութիւնն ունի միայն բանուր, որը շահագործում է սեփական հողը. վատագոյն դէպքում, նա ունի և կապիտալիստ, —և այդ այն դէպքում, եթէ գիւղացու սեփական կապիտալը չի բաւում գործը վարելու համար, և նա ստիպւած է դիմել փոխառութեան. բայց նա չունի ոչ մի դէպքում հողատէր և ձեռնարկող։ Ակներկ է, որ այն եկամուտը ուր բաժանւում է խոշոր տնտեսութեան մէջ չորս մասի՝ կապիտալիստի, բանուրի, ձեռնարկողի և հողատիրոջ բաժինների։ մանր տնտեսութեան մէջ մնում է բացառապէս գիւղացու ձեռքում, կամ վատագոյն դէպքում բաժանւում է երկու մասի՝ գիւղացու և կապիտալիստի բաժինների։ Ենթադրենք, որ մանր ձեռնարկութեան եկամուտը հաւասար է 3 Խ, իսկ խոշոր ձեռնարկութեան՝ 4 Խ, այսինքն խոշոր ձեռնարկութեան արդիւնաւէտութիւնը 1/3-ով աւելի է մանր ձեռնարկութեան արգիւնաւէտութիւնից։ Ենթադրելով, որ արդիւնաւէտութեան պահանակութեան բոլոր դասակարգերը հաւասարապէս մասնակցում են խոշոր ձեռնարկութեան եկամուտների մէջ, —ամեն մի դասակարգ, առանձին վեցըրած, բաժին կըստանայ 1 Խ։ Իսկ մանր ձեռնարկութեան մէջ, որ կապիտալիստի կարիք չի

զգում, բոլոր 3 X ստանում է գիւղացին. իսկ եթէ նա կապիտալիստի կարիք է զգում, այն ժամանակ նա ստանում է 2 X, ենթադրելով, որ կապիտալիստը մանր ձեռնարկութեան մէջ նայն մասնակցութիւնն է ընդունում, ինչ որ և խոշոր: Հետևաբար, արտադրութեան տեսակէտից մանր տնտեսութիւնը կարող է լինել աւելի վատ դրւած, քան խոշորը (մեր օրինակի մէջ նա ունի 3 X այնտեղ, ուր խոշոր տնտեսութիւնն ունի 4 X), և այնուամենայնիւ նա կարող է աւելի յարմարեցւած լինել ճգնաժամի դէմ կուելու համար, որովհետև նրա զլիստոր մասնակիցն ստանում է համեմատաբար աւելի մեծ եկամուտ:

Սակայն այստեղ առաջ է գալիս մի խիստ կարևոր հարց. նոյն այդ յատկութիւններն ունի մանր տնտեսութիւնը և մշակող արդիւնաբերութեան մէջ. բայց և այնպէս, այնտեղ չի կարելի խօսել ոչ միայն նրա աւելի մեծ կանգունութեան մասին խոշոր արդիւնաբերութեան համեմատութեամբ, այլ և վերջինս դուրս է մղում մանր արդիւնաբերութիւնը մինչև իսկ նօրմալ ժամանակներում. իսկ ճգնաժամների շրջանում մանր արդիւնաբերութեան արտաքսման այդ ընթացքը համուռ է ծայրացել լարման: Այդ հարցի պատասխանը պէտք է որոնել գիւղատնտեսական արդիւնաբերութեան առանձնայատկութիւնների մէջ — որոնք վերաբերուում են և արտադրութեանը, և բաշխմանը, — առանձնայատկութիւնների, որոնց վրայ տնտեսագէտները մինչև այժմ ուշադրութիւն չեն դարձել և որոնք, թէ քննութեան են առնել գիւղատնտեսների կողմից, բայց աւելի շուտ արդիւնաբերութեան տեխնիքական պայմանների տեսակէտից, քան տնտեսական Դրանով և բացարձուում է այն առաջին հայեցքից անհասկանալի փաստը, որ խոշոր և մանր դիւղատնտեսական արտադրութիւնների մասին եղած դարաւոր վէճը մինչև այժմ չի յանդել մի ուրոշ եղբակացութեան, և որ այսպէս անւանւած գիւղատնտեսական ճգնաժամի պատճառները գտնելու բոլոր ճիգերը բերել են շատ քիչ օգուտ:

III.

Յիշենք կապիտալիստական արդիւնաբերութեան ընդհանուր հիմքերը: Եթէ առհասարակ արդիւնաբերութեան նպատակն է

սպառման արդիւնքներ արտադրելը, կապիտալիստական արդիւնաբերութեան նպատակն է՝ շահ արտադրելը: Շահը ստացւում է ոչ թէ նրա համար, որ գործարանատէրը ծախսում է իրեն պատէ ոչ թէ նրա համար, որ նա ձեռք է բերում այդ ապրանքները նրանց արժեքից աւելի ցածր գնով: Ուրիշ խօսքերով, շահը հայթայթւում արժեքից աւելի ցածր գնով: Արդիւնաբերութեան էութիւնը կայանում է նրա մէջ, որ կատարւած աշխատանքի զանազան ձեռքը, — աշխատանք, որ օտարացւած է արդէն բանարից և առարկայացած աշխատանքի մէջ, — կերպարանափոխում և միանում են արդիւնքների մէջ կենդանի աշխատանքի միջոցով: — որը միայն այդ պրօցեսի մէջ է օտարացւում բանարից և ղանում նոր արտադրուող արժեքի մի մասը: Հետևապէս կատարւած աշխատանքի բոլոր ձեռքը մասը կատարւած աշխատանքի մասն է նրանով, որ նրանք ծառայում են կենդանի սահմանափակուում է նրանով, որ նրանք ծառայում են կենդանի աշխատանքի գործողութիւնների առարկան. Նրանք ինքններն ու աշխատանքի գործողութիւնների առարկան. Այդնք ինքններն ու այդ աշխատանք, ուրեմն, արժեքի բարձրացչին չեն կատարում և չեն աշխացում, ուրեմն, արժեքի բարձրացչին չեն կատարած աշխատանքի զանազան ձեռքը: Այդպիսի եթէ կատարւած աշխատանքի զանազան ձեռքը մասն է Այդպիսի վերաբերութեան միջոցների վերածումն ապրանքի, ուղեկցուում է արժեքի աւելացման փաստով, դա տեղի է ունենում բացառապէս այն պատճառով, որ արտադրութեան միջոցների վերածումն ապրանքի պահպան է կենդանի աշխատանքի անակցում է ապահովութիւնը և արժեքն ամրող գումարով, որն այդ դէպաւելանում է աշխատանքի այն ամրող գումարով, որն այդ դէպաւելանում է կապիտալիստական քում օտարացւում է բանարից: Որովհետև կապիտալիստական շահը վերցնուում է միայն նոր աւելացած արժեքից, ուստի ականա շահը նոր աւելացած արժեքն է կապիտալիստի շահը: Նրա մի մասը «փոխարինում է իրենով միայն այն փողը, որ ծախսել է կապիտալիստը աշխատանքի ոյժ գնելու համար», այսինքն աշխատավարձը, և միայն մնացածն է կապմում շահը: Ակներեւ է կապիտալիստի շահերը պահանջում են, որ այդ մնացորդը մինի կարելոյն մեծ, այսինքն, որ աշխատավարձը ներկայացնէ նոր աւելացւած արժեքի կարելոյն փոքր մասը: Այն յարաբերութիւնը, որ գոյութիւն ունի նոր աւելացւած արժեքի մնացորդի կամ յաւելեալ արժեքի և աշխատավարձի կամ փոփոխող կապիտա-

լի միջն, անւանուում է յաւելեալ արժէքի չափ (նօրմ): Ինքնըստախնքեան հասկանալի է, որ քանի բարձր է յաւելեալ արժէքի չափը, այնքան ծեռնառն է կապիտալիստի համար:

Յաւելեալ արժէքի չափը հաւասար չէ արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում: Ամենից առաջ, դա կախած է այն հանգամանքից, որ աշխատավարձը արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում հաւասար չէ: Աշխատավարձի հաւասարացումը բանուոր դասակարգի մէջ իշխող մըցման միջոցով,—մի բան, որին կլասիք քաղաքանակութիւնը տալիս է այդպիսի արսօլիւտ նշանակութիւն, իրականութեան մէջ չի արդարանում կամ արդարանում է չափազանց նեղ շրջանակում: Կլասիք քաղաքանակութիւնը մեկնում է այն դրութիւնից, որ բանուրներն ազատորէն անցնում են արդիւնաբերութեան մի ճիւղից միւսը և ազատորէն տեղափոխում են մի արդիւնաբերական կենտրօնից միւսը: Դա սխալ ելակէտ է, առնւազն ներկայ ժամանակի համար, երբ չնայած մեքենական արդիւնաբերութեան լայն զարգացման, բանուրից այնուամենայնիւ պահանջուում է որոշ փորձառութիւն, ընտելութիւն, մասնագիտութիւն, և երբ բանուրի վարձատրութիւնը այնքան ցածր է, որ նա չի կարող մտածել պաշարի մասին, առանց որի տեղափոխութիւնն անկարելի է: Աշխատավարձի հաւասարացման օրէնքի ճշմարտութիւնը կապւած է լաւագոյն դէպքում տեղի և արդիւնաբերութեան ճիւղի հետ: Բանուրների ապահովագրական միութիւնների հաւաքած տեղեկութիւններին համաձայն, աշխատավարձը Գերմանիայում 1889 թւականին, զանազն արդիւնաբերական ճիւղերի մէջ, տարուրեւել է 1002 և 263 մարկերի միջն (*), այսինքն տարբերութիւնը ամենաբարձր և ամենացածր աշխատավարձի մէջ, ըստ արդիւնաբերական ճիւղերի, կազմել է 281 տոկոս: Ծուսաստանում այդ տարբերութիւնը աւելի մեծ է: Գործարանական տեսուչների տեղեկութիւններին համաձայն, ամենաբարձր աշխատավարձը մեզ մօտ որոշւում է՝ 524,85 բուրլի, իսկ ամենացածր՝ 116,35 բուրլի (**), այսինքն տարբերութիւնը ամենաբարձր և ամենացածր վարձի մէջ հաւա-

սար է 3500/0-ի: Կարելի է արդեօք այդօրինակ խոշոր տատանումների ներկայութեամբ խօսել հաւասարացման օրէնքների մասսին: Որ աշխատավարձը ենթարկուում է ըստ պետութիւնների ուժեղ տատանումների, մենք տեսանք արդէն վերը, երբ խօսում էինք աշխատավարձի մասին գիւղատնտեսութեան մէջ: Բայց նկատում են ուժեղ տատանումներ և միենոյն պետութեան սահմաններում: Միջին վարձը Ծուսաստանում, ըստ մշակող արդիւնաբերութեան գլխաւոր չորս ճիւղերի, կազմում է.—Պետերբուրգի նահանգում 232 բուրլի, Պետրօկովի նահանգում 188 և կենուրօնական գործարանական շրջանում 167 բուրլի (*): Միջէն անդամ Միացեալ նահանգներում, ուր աշխատավարձը համեմատաբար բարձր է, իսկ բանուրների տեղափոխութիւնը գտնում է ամենաբարեյաջող պայմաններում, 1890 թ: աշխատավարձը հաւասար է եղել,—հարաւային նահանգներում 14,77 դոլլարի ամսեկան, արևմտեան նահանգներում 22 դոլլարի, արևելեան՝ 26,64 դոլլարի և կենուրծնական՝ 32,62 դոլլարի (**):

Աշխատավարձի մասին մեր սասածը իրօք է և աշխատանքի օրւայ չափի վերաբերեալ,—այդ երկրորդ գործօնը, որ ազդում է յաւելեալ արժէքի նօրմի վրայ, —իրօք է ի հարկէ մինչև այն ժամանակ; Երբ օրէնսդրութիւնը սահմանէ նօրմալ բանուրական օր, հաւասարապէս պարտադիր արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի համար: Ինչ վերաբերում է երրորդ գործօնին տեխնիկայի գործթեանը, որից կախւած է յաւելեալ արժէքի չափը, այդ գործօնը ևս արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում հաւասարապէս չէ ազդում յաւելեալ արժէքի չափի վրայ, որովհետև արդիւնաբերութեան ոչ բոլոր ճիւղերում է տեխնիկան հաւասարապէս զարգացած: Այդպիսով, հաւասարիմ մնալով իրականութեանը, չեկարելի խօսալ յաւելեալ արժէքի հաւասար չափի մասին արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում, որովհետև քանի ցածր է աշխատավարձը, քանի երկար աշխատանքի օրը և քանի ուժեղ՝ շնորհիւ տեխնիկայի բարձր դրութեան՝ աշխատանքի թափը, այս բարձր է յաւելեալ արժէքի չափը, որովհետև այն-

*) Dr. H. Lux. Socialpolitisches Handbuch, Berlin, 1892, եր. 40—41.

**) Фабрично- заводская промышленность и торговля в России, 2-е изд. 1896, երես 485 և 487.

*) Фабрично заводская промышленность, երես 466.

**) Juraschek. Uebersichten der Weltwirtschaft, 1885—89, երես 14.

քան բարձր է նոր աւելացւած արժեքի այն մասը, որը մնում է աշխատավարձի էկվիվալենտը հանելուց յետոյ:

Բայց յաւելեալ արժեքի բարձր չափը միշտ չէ համապատասխանում շահի բարձր չափին: Վերջինս, բացի յաւելեալ արժեքի չափից, կախւած է և արդիւնաբերութեան բնաւորութիւնից և նրա մէջ դրւած կապիտալի կազմից, որը տարրեր է արդիւնաբերութեան զանազան ճիւղերում: Արդիւնաբերութեան, բնաւորութիւն ասելով, մենք հասկանում ենք այն յարաբերութիւնը, որ ունի արտադրութեան ժամանակը,—ժամանակ, որի ընթացքում ամբողջ կապիտալը կամ նրա մի մասը ընկած է ձեռնարկութեան մէջ,—դէպի աշխատանքի ժամանակը—այսինքն՝ ժամանակ, որի ընթացքում կատարւում է կենդանի աշխատանքի կիրառումը: Այդ երկու շրջանները ոչ բոլոր արդիւնաբերութիւններում համապատասխան են միմիանց, իսկ այդ հանգամանքն ազդում է շահի չափի վրայ: Այսպէս, մեր առաջ կայ երկու ձեռնարկութիւն Ա և Բ: Երկուսի մէջ ընկած է հաւասարապէս 1000 շահն բուրլի կապիտալ: Յաւելեալ արժեքի չափը Ա-ի մէջ հաւասար է 70 տոկոս, իսկ Բ-ի մէջ 50 տոկոս: Այդ թւերը հիմք են տալիս ենթադրելու, որ Ան ունի շահի աւելի բարձր չափ: Բայց աշխատանքի ժամանակը Ա-ի մէջ տեսում է կէս տարի, իսկ արդիւնաբերութեան ժամանակը՝ մի ամբողջ տարի. աշխատանքի ժամանակը և արդիւնաբերութեան ժամանակը Բ-ի մէջ տեսում են կէս-տարի: Հետևաբար, Բ-ի կապիտալը կարող է անել տարեկան երկու շրջան և այդպիսով ստանալ յաւելեալ արժեք երկու անգամ, իսկ Ա-ի կապիտալը կըկատարէ մէկ շրջան և կստանայ յաւելեալ արժեք միայն մի անգամ: Եթէ յաւելեալ արժեքի նօրմ 70 տոկոսը համապատասխանում է 350 բուրլի գումարի, իսկ յաւելեալ արժեքի նօրմ 50 տոկոսը՝ 250 բուրլու, այն ժամանակ Բ-ի կապիտալի մաքուր շահը տարեկան կըկազմէ 500 բուրլի, իսկ շահի չափը՝ 50 տոկոս, մինչ դեռ Ա-ի կապիտալի շահը կըկազմէ 350 բուրլի, իսկ շահի չափը՝ 35 տոկոս^{*)}: Այդպիսով յաւելեալ արժեքի բարձր

*) «Ծահի չափ»-ի տակ հասկացւում է յաւելեալ արժեքի գումարի յարաբերութիւնը դէպի ամբողջ կապիտալը, որ դրւած է ձեռնարկութեան մէջ, այսինքն դէպի մշտական ու փոփոխական կապիտալը: Զեռնարկութեան օգտաւէտութիւնը չափում է շահի բարձրութեամբ, որովհետեւ կապիտալիստի համար

չափը (70 տոկոս) ուղեկցում է շահի ցածր չափով (35 տոկոս): «Ռապէս էլ լինեն այն պատճառները, որոնք երկարացնում են արդիւնաբերութեան ժամանակը աշխատանքի ժամանակի համեմատութեամբ,—կազմում են արդիւնաբերութեան միջոցները միայն թագնւած արտադրողական կապիտալ, այսինքն գտնութեամբ են միայն նախարտադրական շրջանում, որ տանում է դէպի իսկական արտադրութեան պրօցեսը, կամ, գտնելով արտադրութեան պրօցեսի սահմաններում, նրանց սեփական գործունէութիւնը ընդհատութեամբ է այդ պրօցեսի ընդմիջումներով, կամ, վերջապէս, աշխատանքի պրօցեսի ընդմիջումները պայմանաւորւթեամբ են արտադրութեան իսկ պրօցեսով,—կրկնում ենք, որպէս էլ լինեն այդ պատճառները, այդ դէպերից և ոչ մէկում արտադրութեան միջոցները չեն կլանում, չեն ծծում աշխատանքը: Զը կլանելով աշխատանքը, նրանք այդպիսով չեն կլանում և յաւելեալ աշխատանքը: Հետեաբար, այդ դէպերում տեղի չի ունենում արտադրողական կապիտալի արժեքի մէկանքով շենքում... եթէ նոյնիսկ արժեքի աւելացման պրօցեսի կատարելը անքամ կերպով կապւած լինի ընդմիջումների հետ^{**}):

Արտադրութեան ժամանակի և աշխատանքի ժամանակի անհամապատասխանութիւն ասելով, չը պէտք է հասկանալ միայն օրերի թիւը. օրերի թիւը կարող է թէ մէկը և թէ միւս դէպում լինել միկնոյնը, բայց եթէ արդիւնաբերութեան մի որևէ ձիւղում աշխատանքը կարելի է միայն 8 ժամւայ ընթացքում օրեկան, իսկ մի այլ ձիւղում՝ 24 ժամւայ ընթացքում (բանւորների քանի կան, իսկ մի այլ ձիւղում՝ 24 ժամւայ ընթացքում, դա միենոյն է),—այն հերթ է աշխատում 24 ժամւայ ընթացքում, դա միենոյն է),—այն ժամանակի, կապիտալի հաւասար ծախքերի պայմանով, շահի չափը բարձր է երկորդ արդիւնաբերութեան մէջ, եթէ նոյնիսկ յաւելեալ արժեքի չափը աւելի լինի առաջնում, որովհետեւ այն ժամանակամիջոցում, որի ընթացքում առաջին արդիւնաբերութեան մէջ կապիտալն անում է մէկ շրջան, երկորդ արդիւնաբերութեան մէջ կապիտալն անում է երեք շրջան և տալիս, հետեաբար, երեք անգամ յաւելեալ արժեքը:

աւելի կարեսը է իմանալ, որ նա ստանում է կապիտալից 10 կամ 5 տոկոս, քան թէ իմանալ, որ նա պիտի ստանայ 1,000 կամ 2,000 բուրլի շահ:

**) K. Marks.—Կապիտալ, թ. II, стр. 78.

Պակաս չի ազդում շահի չափի վրայ կապիտալի օրգանական կազմութիւնը, այսինքն նրա բաժանումը մշտական և փոփոխական կապիտալի մէջ է արդիւնաբերութեան մէջ զբաղւած աշխատող ոյժը, որը միայն արտադրում է յաւելեալ արժեքը—կապիտալիստական շահի այդ միակ աղբիւրը,—ուստի արդիւնաբերութեան երկու ճիւղերից՝ յաւելեալ արժեքի հաւասար չափերի պայմանով՝ նա կտայ աւելի բարձր շահ, որը շարժողութեան մէջ է դնում տւած մշտական կապիտալը համեմատաբար աւելի մեծ փոփոխական կապիտալի միջոցով։ Որովհետև այդ պայմանով, թէև աշխատանքի ամեն մի ոյժ յիշած արդիւնաբերութիւնների մէջ շահագործում է հաւասար չափով, այսինքն տալիս է միևնոյն յաւելեալ արժեքը, բայց շահագործուող աշխատանքի ոյժերի գումարն երկրորդ արդիւնաբերութեան մէջ աւել է, ուրեմն աւել է և յաւելեալ արժեքի ընդհանուր քանակը տւած կապիտալի վերաբերմամբ։ Եթէ Ը. ձեռնարկութեան մէջ, 7000 բուրլի կապիտալի ընդհանուր գումարից 1000 բուրլին ծախսած է իրեւ փոփոխական կապիտալ և 6000 բուրլին՝ իրեւ մշտական, մինչդեռ Ը. ձեռնարկութեան մէջ կապիտալը բաժանում է 1000 բուրլի մշտական և 6000 բուրլի փոփոխական կապիտալի, —այն ժամանակ Ը. կապիտալը շարժման մէջ կրտի 1000 բուրլի կապիտալի միջոցով, որը արտայայտում է, ենթադրենք 1000 աշխատանքի ժամ, մինչդեռ նոյն քանակի Ը. կապիտալը շարժման մէջ կրտի 6000 բուրլու կամ 6000 աշխատանքի ժամի միջոցով։ Յաւելեալ արժեքի 50 տոկոսի չափով, Ը. տալիս է յաւելեալ աշխատանք 500 ժամ կամ յաւելեալ արժեք 500 բուրլի, իսկ Ը. 3000 ժամ կամ 3000 բուրլի։ Դա նշանակում է, որ միևնոյն կապիտալի վրայ՝ Ը կտանայ 500 բուրլի շահ և Ը. 3000 բուրլի։ Ուրեմն շահի չափն առաջին գէպքում կլինի $\frac{7}{17}$ տոկոս, իսկ երկրորդ գէպքում՝ $\frac{42}{17}$ տոկոս։ Այս օրինակի մէջ կապիտալի ընդհանուր գումարը հաւասար է երկու ձեռնարկութիւններում, բայց տարբեր են նրա փոփոխական և մշտական մասերը։ Մեր եղանակցումների վրայ ամեննին չի ազդի, եթէ կապիտալի փոփոխական կամ մշտական մասը լինեն ջրւատ ձեռնարկութիւնների մէջ հաւասար, իսկ կապիտալի ընդհանուր գումարները՝ տարբեր։ Կ և Ս. ձեռնարկութիւնների մէջ փոփոխական կապիտալ 1000 բուրլու, բայց մշտական կապիտա-

լի Խ-ի մէջ հաւասար է 2000 ր., իսկ Ս-ի մէջ՝ 4000 բուրլի։ Եթէ յաւելեալ արժեքի չափը լինի 50 տոկոս, այն ժամանակ Խ-ի մէջ շահի չափը կլինի⁵⁰⁰
 $\frac{1000+2000}{500} = \frac{1}{10} = 10^0/0$ Դրէք փոփոխական կապիտալի տեղ մշտական կապիտալը, իսկ մշտականի տեղ՝ փոփոխականը, և տարբերութիւնը երկու ձեռնարկութիւնների շահի չափի մէջ կմնայ, միայն շահի աւելի բարձր չափը կտայ արդէն ոչ թէ Խ, այլ Ս։ «Տարբեր մեծութիւնների կապիտալներ, վերցրած նրանց բաղկացուցիչ մասերի տոկոսական յարաբերութեամբ, կամ, ինչ ներկայ գէպքում միևնոյն է, հաւասար մեծութիւնների կապիտալներ՝ հաւասար աշխատանքի օրւայ և աշխատանքի հաւասար շահագործութեան պայմաններով, արտադրում են, հետևաբար, շահի ամենատարբեր քանակներ, որովհետև արտադրում են յաւելեալ արժեքի ամենատարբեր քանակներ, և այդ այն պատճառով, որ նրանց փոփոխական մասը՝ կախւած լինելով արդիւնաբերութեան զանազան ճիւղերում իր օրգանական կազմից, տարբեր է, տարբեր է հետևաբար կենդանի աշխատանքի քանակը, որ նրանք գործողութեան մէջ են դնում, և ուրեմն նրանց կողմից իւրացւող յաւելեալ աշխատանքի—յաւելեալ արժեքի այդ էութեան—քանակները, ապա և շահի քանակները *):

Այդպիսով, շահի չափն արդիւնաբերութեան զանազան ճիւղերում կախւած է մի կողմից յաւելեալ արժեքի չափից, որը՝ նայած աշխատանքի օրւայ մեծութեան, աշխատավարձի չափերի և աշխատանքի ուժգնութեան, տարբեր է արդիւնաբերութեան զանազան ճիւղերում, իսկ միւս կողմից՝ նաև այն յարաբերութիւնից, որ գոյութիւն ունի մշտական և փոփոխական կապիտալների միջև, ինչ ևս տարբեր է արդիւնաբերութեան զանազան ճիւղերում։ Այդ են ընդհանուր օրէնքները, որ գեկավարում են կապիտալիստական շահը. իսկ որովհետև շահը կապիտալիստական արդիւնաբերութեան միակ նպատակն է, ուստի այդ օրէնքները ղեկա-

*) Կ. Մարկս. Կաпитալъ, չ. III, երես 107.

վարում են և ամբողջ կապիտալիստական արդիւնաբերութիւնը։
Բայց կապիտալիստական արդիւնաբերութեան մէջ չեն կա-
րող գոյութիւն ունենալ շահի զանազան չափեր։ Մրցութիւնը
հանդէս է զալիս այսուեղ իրեն հաւասարացնող ոյժ։ Որովհետեւ
արդիւնաբերութեան մի շարք ճիւղերում շահի չափը աւելի բարձր
է միջին, այսպէս ասած, անհրաժեշտ մակերևոյթից, իսկ միւս
ցութիւնը ստիպում է շահաւէտ դրւած ձեռնարկութիւններին
տալ իրենց շահի մի մասը ոչ-ձեռնոտու դրւած ձեռնարկութիւն-
ներին։ Ալլանքների վաճառանոցային զինը կարող է լինել նը-
րանց արժեքաւորութիւնից (ԱՅԻԽՈԾՏԵ) ցածր։ Եւ այդ տարբերու-
թիւնը արժեքաւորութեան և վաճառանոցային գնի մէջ, որը այն-
քան աւելի է, ինչքան ապրանքների առաջարկութիւնը արդիւ-
նաբերութեան տւած ճիւղում գերակշռում է նրանց վրայ եղած
պահանջը, այսինքն, ինչքան արդիւնաբերութեան այդ ճիւղում
կապիտալն աւելի է, և ընդհակառակը, որը այնքան պակաս է,
ինչքան թոյլ է առաջարկութիւնը, ինչ հետևանք է կապիտալի
պակասութեան արդիւնաբերութեան մէջ, այդ իսկ տարբերու-
թիւնը, որը թէե ունի սահմաններ, — այդ սահմանները մի կող-
մից արժեքաւորութիւնն է, իսկ միւս կողմից՝ արտադրութեան
տաճկերը, — բայց այդ սահմանների շրջանակում ունի տա-
տանումների լայն ասպարէզ, այդ տարբերութիւնը կազմում է
այն հիմնաքարը, որի վրայ շահի անհատական չափերը գալիս մօ-
տենում են միջին, հասարակական-անհրաժեշտ չափին։ «Կապի-
տենում են միջին, հասարակական-անհրաժեշտ չափին։ Այսպի-
տակ խուսափում է արդիւնաբերութեան այն ճիւղերը, որոնց
շահի չափը ցածր է, և ձգտում է գէպի միւս՝ աւելի բարձր շահ ու-
նեցող ճիւղերը։ Շնորհիւ այդ մշտական տեղափոխութեան, մի խօս-
քով, շնորհիւ կապիտալի բաշխման արդիւնաբերութեան զանազան
ճիւղերի մէջ համապատասխան ոմանց շահի չափի իջման և միւսների
— բարձրացման, — տեղի է ունենում պահանջիւու առաջարկութեան
մէջ այնպիսի յարաբերութիւն, որ շահի միջին չափը արդիւնաբե-
րութեան զանազան ճիւղերի մէջ դառնում է միահաւասար... *)։

Մրցութիւնը, իրեն շահի չափը կանոնաւորող մի գործօն,
նըթադրում է սակայն մի պայման, որը տեղի է ունենում ոչ ա-

*) Կ. Մարկս. Կաпитալ, հ. III, երես 147.

մեն ժամանակ։ Այսինքն։ Այն տեղը, որ բացւում է արդիւնաբե-
րութեան մի ճիւղում, որն ունի շահի անձեռնոտու չափ, — պէտք է
մնայ առանց զբաղւելու, որովհետեւ հակառակ դէպքում «պահան-
ջի և առաջարկի փոխադարձ յարաբերութիւնը» չի փոփոխուում,
այսինքն նպատակը չի իրականանում։ Այդորինակ դէպքը կարող
է լինել երկու հանգամանքներում։ 1) երբ կապիտալիստական
արդիւնաբերութիւնը իր խոշոր արտադրութեամբ չէ ներկայաց-
նում մանր արդիւնաբերութեան համեմատութեամբ առանձնապէս
մէծ առաւելութիւններ։ այն ժամանակ մանր արդիւնաբերութիւ-
նը, որի ձեռնարկողը մի անձի մէջ միացնում է թէ գործատիրոջ
և թէ աշխատաւորին, ինչի շնորհիւ բաւականանում է շահի ցա-
ծրը չափով կամ լաւ ու մշտական վաստակով, բռնում է կապի-
տալիստի թողած բոլոր աւելի բարձր, և 2) երբ մշտական կապիտալը
մի երկրներում աւելի էժան է, քան միւս, օրինակ աւելի էժան
է հում նիւթը, քարածուխ և այն։ այն ժամանակ այդ երկրնե-
րում մշտական և փոփոխական կապիտալի փոխադարձ յարաբե-
րութիւնը աւելի բնական է, շահի չափը կարող է լինել նոյն իսկ
միջին-անհրաժեշտ շահից բարձր, և նրանք (առաջին երկիրները)
կարող են ազատ կերպով ծածկել այն պահանջը, որը մնում է
առանց բաւարարութեան շնորհիւ կապիտալի որոշ մասի հե-
ռացման որոշ երկրի անձեռնոտու արդիւնաբերութիւնից։ Գիւղա-
տնականութեան մէջ մենք հանդիպում ենք այդ երկու դէպքերն էլ։

IV.

Արդիօք շահի չափը գիւղատնականութեան մէջ աւելի բարձր
է կամ ցածր, քան մշտակող արդիւնաբերութեան մէջ։ Ամե-
նից առաջ քննենք այն գլխաւոր գործօնը, որ կարգաւորում է
շահի չափը, այսինքն յաւելեալ արժեքի նօրմը։ Յաւելեալ արժե-
քի նօրմը կախած է աշխատանքի ուժգնութիւնից, ինչ իր հեր-
թին որոշում է տեխնիկայի դրութեամբ տւած արդիւնաբերու-
թեան մէջ։ Տեխնիկան ներգործում է արդիւնաբերութեան վրայ
երկու տեսակ. մի կողմից՝ կատարելազործելով այսպէս անւանւած
աշխատանքի մեքենան, նա աւելացնում է աշխատանքի արդիւ-
նականութիւնը, իսկ միւս կողմից՝ փոխարինելով կենդանի շար-
ժող ոյժը մեքենայական ոյժով և կատարագործելով այդ, նա

բարձրացնում է աշխատանքի լարւածութիւնը և դարձնում է նրան աւելի հաւասարաչափ ամբողջ աշխատանքի օրւայ ընթացքում: Կապիտալիստական արդինարեռութիւնը իր ամբողջ կարողութեամբ պարտաւոր է ճէնց մեքենական շարժող ոյժին: Քանի թեամբ պարտաւոր է ճէնց մեքենական շարժող ոյժին: Քանի թեամբ պարտաւոր է ճէնց մեքենական շարժող ոյժին: Քանի թեամբ պարտաւոր է ճէնց մեքենական շարժող ոյժին:

Այլապէս է մեքենական շարժող ոյժի հետ: Քեարգահի աշխատանքն այժմ որոշում է ոչ թէ բանտորը, այլ մեխանիզմը. բանտորը, ինչ որ ուզում է լինի, պէտք է կարողանայ հասնել նրա հետեւ, այլապէս նա գուրս կշպրտի գործարանից, իրք անպէտք լաթ: «Մանուֆակտուրային և արհեստային արտադրութեան մէջ գործիքն է ծառայում բանտորին, իսկ գործարանի մէջ բանտորը՝ մեքենային: Այստեղ, արդինագործութեան միջոցների շարժման մէջ դնելը ելնում է իրենից. այստեղ նա պիտի հսկէ այդ միջոցների վրայ: Մանուֆակտուրայի մէջ բանտորները ներկայացնում են կենդանի օրգանիզմի անդամները: Իսկ գործարանում գոյութիւն ունի մի մեռած մեխանիզմ, որ անկախ է բանտորից, որից նա կարուած է իրք կենդանի մի մասնիկ» *): Այլապէս է տեխնիկայի ազգեցութիւնը մշակող արդինարեռութեան մէջ:

Այդ ազգեցութիւնը մենք չենք տեսնում դիւզատնտեսութեան մէջ: Այս աշխատող մեքենան, որ յեղաշրջել է մշակող արդինարեռութիւնը, էապէս է եկել իրք հետևանք աշխատանքի գերազոյն բաժանման, ուրիշն և գերազոյն կատարելագործութեան: Այստեղ նա կոչւած է եղել փոխարինել աշխատանքը—ոչ թէ հասարակ, այլ կօօպերացիայի և բաժանման միջոցով կատարելագործւած աշխատանքը—տասնեակ և հարիւրաւոր բանտորների աշխատանքը, որ ընդհանուր առմամբ ներկայացրել է աշխատող մեքենայի սկզբնատիպարը: Հողագործութեան մէջ չի եղել և չկայ աշխատանքի բաժանումն. մինչև անդամ հասարակ աշխատակութիւնը այստեղ սակաւ դէպքերում է որոշ գեր խաղում:

Մի և նոյն հոգագործը պատրաստում է հողը մշակման համար, ինքը հերկում է, ինքը հսկում հացահատիկների, դաշտի վրայ, ինքը հաւաքում է հունձը, ինքը կալսում նրան, մինչ անգամ ինքը տեղափոխում շուկայ: Եւ իր այդ ներկայութիւնը բոլոր աշխատանքների մէջ նրան համար կարելի է ու մինչև անգամ պարտաւոր, եթէ նա կամենում է նւիրել տնտեսութեանը աշխատանքի օրերի գերազոյն քանակը, որովհետեւ երբ կարելի է վերոյիշեալ գործողութիւններից որևէ մէկը, անկարելի է նրանցից մի ուրիշը, և եթէ նա պարապէր, օրինակ, միայն հողի հերկմամբ կամ հունձով, այն ժամանակ տնտեսութիւնը կվերցնէր նրանից գիւղատնտեսական աշխատանքի ժամանակի աննշան մասը: Միակը, ինչ կարելի է գիւղատնտեսութեան մէջ, այդ հասարակ աշխատակցութիւնն է, թէ և այդ ևս բոլոր գործողութիւնների մէջ կարելի չէ և տալիս է շատ քիչ օգուտ: Եւ այդ պատճառով, աշխատանքի միջոցների կատարելագործութիւնը այստեղ նկատում է շատ թոյլ չափով. այսպէս անւանւած աշխատանքի մեքենաները ծայրայել պարզ են, տալիս են աշխատանքի արդիւնաւէտութեան շատ սահմանափակ յաւելումն և բացի այդ, համեմատօրէն շատ էժան են: Վերջին հանգամանքն առանձնապէս ձեռնտու չէ կապիտալիզմի զարգացման համար հողագործութեան մէջ: Կատարելագործւած մեքենայի նշանակութիւնը կապիտալիզմի համար կայանում է ոչ միայն նրա մէջ, որ նա աւելացնում է աշխատանքի արդիւնաւէտութիւնը, այլ և նրա մէջ, որ նա մատչելի է միայն կապիտալիստին, և ոչ մասն արդիւնաւը երբ մեքենան մատչելի է և վերջինիս, ինչպէս գիւղատնտեսութիւնը մէջ կատարելագործւած արօրները, մեքենական ցանողները և կալսողները,—այն ժամանակ աշխատանքի արդիւնաւէտութիւնը ամբողջովին փոխարինում է ապրանքների գների էժանացումը՝ չներդործելով ոչ մի կերպ յաւելեալ արժէքի վրայ: Առաւել ևս վատ է մեքենական շարժող ոյժերի գրութիւնը գիւղատնտեսութեան մէջ: Շոգէշարժի ձէռնտու լինելը ուղիղ յարաբերութեամբ համապատասխան է նրա առաջադրած աշխատանքի էներգիային: Բայց բարձր էներգիա առաջարկող շոշչարժը պահանջում է կամ շատ բարդ աշխատանքի՝ մեքենայ, կամ աւելի հասարակ աշխատանքի-մեքենաների մի ամբողջ սիստէմ: Որ գիւղատնտեսական մեքենաները պատկանում են ամե-

*) К. Марксъ. Капиталъ, 3. I, երես 370 (2-րդ հրատ.):

նահասարակ մեքենաների շարքին, մենք փոքր առաջ խօսեցինք: Ինչ վերաբերում է շարժող մեքեայի միացումին՝ մեքենաների մի ամբողջ սիստէմի հետ՝—գիւղատնտեսութեան մէջ այդ մտածելու չէ, որովհետև այդ դէաքում շարժող մեքենայի գործունէութիւնը պէտք է ընդգրկէ հարիւրաւոր դեսեատին: Ընդհանրապէս տարածութիւնը այն չարիքն է, որ գիւղատնտեսութեան մէջ խանգարում է շահագործել մեքենական շարժող ոյժերը: Ոչ մի փոխագրող մեխանիզմ չի կարող յաղթահարել այդ չարիքը, և օգտաւէտ ոյժի այն կորուստը, որ տեղի է ունենում գիւղատնտեսութեան մէջ շոգեշարժը կիրառելուց, հասնում է այնպիսի ահագին չափերի, որի մասին մշակող արդիւնաբերութիւնը ոչ մի գաղափար չունի: Աւելացրէք գրայ վրայ այն, որ գիւղատնտեսութեան մէջ շարժող մեքենան չի կարող կանգնած լինել փակ տարածութեան մէջ, ինչու վառելիքի համար արած ծախըը աւելանում է շնորհիւ ատմոսֆէրայի ազդեցութեան մեքենայի կաթայի և ցիլինդրի վրայ:

Եթէ գիւղատնտեսութեան մէջ տեխնիկան չի մասնակցում յաւելեալ արժէքի ծագման մէջ, այն ժամանակ ակներև է, որ յաւելեալ արժէինօրմը գիւղատնտեսութեան մէջ կախւած է բացառապէս աշխատանքի օրւայ երկարութիւնից և աշխատավարձի մեծութիւնից: Կասկած չկայ, որ ինչքան էլ աշխատանքի օրը լինի երկար, իսկ աշխատավարձը՝ քիչ, —յաւելեալ արժէքի ծագման այդ տարրական ձևը երբէք չի կարող ունենալ այն հետևանքները, որ տալիս է մշակող արդիւնաբերութիւնը՝ շնորհիւ տեխնիկայի կատարելագործութեան՝ չափաւոր աշխատանքի օրւայ և չափաւոր աշխատավարձի պայմանով: Այդ իսկ պատճառով, չնայած որ գիւղատնտեսութեան մէջ վարձու աշխատանքը գտնում է ծայրայեղ ծանր պայմաններում—կապիտալն այնուամենայնիւ բաւարարութիւն չէ ստանում: Գիւղատնտեսական բանուրի դրութեան բնորոշման համար, հետաքրքիր է աչքի անցնել հետևեալը: Ինչպէս յայտնի է, տնայնագործը՝ անցնելով սեփական արհեստանոցից գործարան, որով չափով բարեկաւում է իր նիւթական դրութիւնը ինչ վարձարում է նրան՝ անկախութեան կորուստի փոխարէն: Գիւղատնտեսութեան մէջ, ընդհանրապէս, անկախութեան կորուստը ուղեկցում է նիւթական դրութեան վատթարացմամբ: Բժիշկ

Ն. Տեղեակօվը *) յիշատակէլով գիւղատնտեսական վարձու բանւորների ուժեղ հիւանդացման փաստը, բացատրում է այն նրանով, որ «բանւորներն ընդհանրապէս զրկած են այն յարմարութիւններից, որ ունեն սեփական հողաբաժինը մշակող գիւղացիները»: Ինչ է նշանակում լինել զրկած «այն յարմարութիւններից, որ ունեն գիւղացիները», դժւար չէ հասկանալ: Դա նշանակում է ծայրայեղ ծանր աշխատանք, վատ սնունդ, չափազանց վատ բնակարան, և այն և այն:

Կայ մի կարծիք, թէ գիւղատնտեսութեան մէջ հարց չի կարող լինել նօրմալ աշխատանքի օրւայ մասին: Որտեղից է երևան եկել այդ կարծիքը, մինոյն է, բայց նա անպայման սխալ է: Գիրմանական «Սօցիալական քաղաքականութեան» ընկերութեան ձեռնարկած անկէտի տեղեկութիւններին համաձայն (ի դէպս, այդ ընկերութիւնը իր չափաւորութեան մէջ հասել է մինչ այն, որ սահմանափակել է աշխատանք տւողների հարց ու փորձով), որ սահմանափական գիւղատնտեսութեան մէջ ամառը աշխատանքի օրը Գիրմանիայի գիւղատնտեսութեան մէջ ամառը շարունակում է արևածագից մինչև արևամուտքը կամ առաւօտեան 4 և 5 ժ.-ից մինչև երեկոյեան 9 և 9½ ժամը: Դա կոչում է պարտաւորական աշխատանքի օր: Բացի այդ, շատ տեղերում տէրերը համեստութեամբ յիշատակել են այն փաստը, որ իրանց մօտ գոյութիւն ունի և աշխատանք պարտաւոր ժամանակից դուրս (պարզ է, երեկոյեան 9—9½-ից յետոյ), և կիրակնօրեայ ու տօն օրերի աշխատանք: Այդպէս աշխատում են, մինոյն է, թէ հասակաւորները, թէ երեխաները... **): Անգլիայում՝ ուր կոիւը յանուն նօրմալ աշխատանքի օրւայ մշակող արդիւնաբերութեան մէջ շարունակում է արդէն մօտ կէս դար, աշխատանքի օրը (գիւղատնտեսութեան մէջ) տասկական աշխատանքի օրը (գիւղատնտեսութեան մէջ) տասկական աշխատանքի օրը շարունակում է 1—մէջ ձմեռը: Անւանական աշխատանքի օրը շարունակում է 1½ ժամ աւելի... Տարածութիւնը բաւորների բնակարաններից մինչև աշխատատեղին չի կարելի որոշել, որովհետև բնակարաններից ոմանք մօտիկ են, միւսները հեռու, այնպէս որ չի կարեներից ոմանք մօտիկ են, միւսները հեռու:

*) Н. И. Тезяков. Сельско-хозяйственные рабочие въ Херсонской губ. Херсонъ, 1896, ст. 112.

**) Die Verltnisse der Landarbeiter in Deutschland, Leipzig, 1892 թ.

լի հաշւել գնալ-գալու անհրաժեշտ ժամանակը: Արևմուտքի անսանապահական շրջաններում աշխատանքի օրն մի քիչ երկար է... Յուէլսում աշխատանքի օրն աւելի երկար է, քան Անգլիայում. $10^{1/2}$ — $11^{1/2}$ ժ. (անւանականը ուրեմն՝ $11^{1/2}$ —13) ամառը, իսկ ձմեռը արևածագից մինչև արևամուտքը» *)... Մինչեւ անգամ Միացեալ նահանգներում աշխատանքի օրը գիւղատնտեսութեան մէջ շարունակում է առաւօտեան ժամը 6-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը **): Աշատանքի օրը ուսւական գիւղատնտեսութեան մէջ զգալի կերպով երկար է: Խերսոնի նահանգում «խոշոր արևատեսութիւնների բանուրների աշխատանքի օրը ակտում է վաղ առաւօտեան, յաճախ արևածագից առաջ, և տեսում մինչև ուշ երեկոյ... իբրև բացառութիւն, շատ տօթ օրերին մի քանի տասնեռութիւններում ցերեկը աշխատանքները դադարեցւում են մի քանի ժամով, մինչև ցերեկւայ տօթի թուրանալը. այդ դէպում ցերեկւայ կորցրած ժամանակը լրացւում է զիշերային աշխատանքներով յաճախ արևեստական լուսաւորութեամբ (ջահերի միջոցով)» ***)... Զափազանց երկար աշխատանքի օրը գիւղատնտեսութեան մէջ, մանաւանդ ամառը, կապւած է վերին աստիճանի ծանր աշխատանքի հետ: «Բոլոր գիւղական աշխատանքները կատարում են բաց երկնքի տակ, տօթի ժամանակ, ուրեմն արեկի կիղիչ ձառագայթների շարունակող ազդեցութեան տակ, որոնց ներգործութիւնը՝ առաջ բերելով ուղեղի արեան շրջանակութեան մէջ փոփոխութիւն, յաճախ առաջ է բերում այդպիսով ուղեղի հիւանդացումներ (insolatio). իսկ յանկարծակի կատարող և այնքան յաճախ տատանումները օդի տաքութեան մէջ պայմանաւորում են բանուրների մէջ այնքան յաճախ կրկնող ուկրացւը և շնչառութեան օրգանների հիւանդացումները: Բացի այդ ընդհանուր պայմաններից, որոնց մէջ գիւղատնտեսական բանաւորը կատարում է իր պարտականութիւնները, նրա առողջութեան վրայ ազդում են մի քանի գիւղատնտեսական աշխատանքներ, ինչպէս աշխատանքը ձիաշարժ և շոգեշարժ

*) W. Hasbach. Die englische Landarbeiter, Leipzig, 1894, երես 364 և 375.

**) N. Semler. Die wahre Bedeutung der nord-amerikanischen, Conkurrenz, 1881, երես 109.

***) Հ. Տեզյակօվ, երես 92.

կալսող մեքենաների միջոցով, Երբ բանւորը, բացի յաճախակի կրկնող ֆիզիքական ֆիզատիւններից, միշտ ենթարկւած է փոշուց առաջացող աչքացաւի և շնչառութեան օրգանների հիւանդացման... Կանանց և երեխաներին բաժին են ընկնում աւելի շատ փոշի արտադրող աշխատանքներ, հետեւապէս և աւելի ֆիզակար առողջութեան համար: Ամենադժւար ու ամենավրտանգաւոր աշխատանքը՝ «թմրկահարների» աշխատանքն է—այսինքն նրանց, որոնք անմիջապէս զնում են խորձերը «թմրուկի» վրայ: Թմրուկից խփում է թմրկահարի աչքերին խոշոր փոշի, որ բաժանում է մանրացւող հասկերից. այդպիսի փոշի, բայց դեռ էլ աւելի մանր, բարձրանում է կալսող մեքենայի ստորին մասից. այդ փոշին մինչև անգամ աննշան քամուց բարձրանում է մեքենայի վրայ և ծածկում բոլոր աշխատանքներին այնպիսի թանձր խաւով, որ գժւար է նշանակել նրանց երեսը և հագուստի գոյնը. այդ ամենը ձուլում է մի ընդհանուր մոխրագոյնի մէջ: Մատուցանողների աշխատանքը տեղի է ունենում միշտ այդ փոշու մէջ և բացի այդ՝ տօթի շարունակուղ ազդեցութեան տակ: Մատուցանողները և այլ բանւորները աչքերի պաշտպանութեան համար շատ սակաւ են դիմում ակնոցների, իսկ վերջիններս շուտով ծածկում են փոշու խաւով, որը խանգարում է նշանակել իրերը, և բանւորները անհրաժեշտօրէն նրանց դէն են շպրտում» *):

Իսկ Բնչպէսէ վարձատրւում այդ տաժանակիր աշխատանքը: Գերմանիայում, ուր միջին գործարանական բանւորը, առանց քննութեան առնելու հասակը և սեռը, վաստակում է տարեկան 628 մարկ **): (ինչ կազմում է օքէկան, եթէ հաշենք 300 աշխ. օր, 2,1 մարկ), Գերմանիայում հասակաւոր գիւղատնտեսական բանւորը, աշխատանքը տողների տեղեկութիւններին համածան, ստանում է՝ ամառը 1—2 մարկ, ձմեռը 0,8—1,5 մարկ: Moers շրջանում 1891 թ. ազրելի 1-ից մինչև նոյեմբերի 20-ը աշխատում են եղել սուսական կենաստանից արտահանւած բանւորներ: Այդ գրեթէ ամսով 8 ամսւայ միջին վաստակը, հասակաւոր տղամարդի համար, բողջ 8 ամսւայ միջին վաստակը, հասակաւոր տղամարդի համար, հաւասար է եղել 275 մարկի (գործարանական բանւորն այդ ժամանակամիջոցում վաստակում է առնազն 418 մարկ), կնոջ

*) Հ. Տեզյակօվ, երես 92—93.

**) Lux, երես 40.

համար—40 մարկ պակաս *): Մուսաստանում «գործարանական բանառի միջին վաստակը» (առանց քննութեան առնելու հասակը և սեռը) հաւասար է 187 ր. 60 կոպ. տարեկան՝ հաշւելով տարին 288 օր, իսկ օրը 12 ժամ » **): Ամենաբարձր աշխատավարձը գիւղատնտեսութեան մէջ տալիս է հարաւը: Եւ ահա ըստ Խերսոնի նահանգի նօրմի, ամսավարձով աշխատող կատարեալ բանուրը, որ ունի աշխատանք ամբողջ տարւայ ընթացքում, կարող էր համեմատաբար բարեյաջող 1894 թւականին վաստակել միջին թւով 111,9 ըուբլի, իսկ հաշւելով և կերակուրը (աշխավարձի 20 տոկոսը) մօտ 134 ըուբլի. իսկ տարեկան աշխատավարձը սակաւ է համուռմ ամբողջովին գիւղատնտեսական բանուրին. տուգանքը, աշխատավարձից զանազան գումարներ վերցնելը և ընդհանրապէս վարձից կտրելը այնպէս են տարածւած զիւղատնտեսութեան մէջ, ինչպէս ոչ մի տեղ մշակող արդիւնաբերութեան մէջ: Իշխան Ն. Շախովսկոյ, որին ոչ մի կերպ չի կարելի մեղադրել գոյների թանձրացման մէջ, մատնացոյց է անում հետեւեալ «միջոցների վրայ—կրճատելու բանուրների վարձը». «այդ միջոցների շարքում պէտք է դասել խոշոր տուգանքները և կրճատումներն այն դէպքում, երբ նրանք դադարում են պատփողական կամ բանուրի պատճառած ֆիւասները յատուցանող լինելուց, այլ ի չարնեն գործ դրսում տիրոջ կողմից: Ապա առանձնակի դէպքեր չը պէտք է հաշւել բանուրի ռոճիկը կտրելը վերջնական հաշւէտեսութեան ժամանակ» ***): Լինում են և աւելի ուժեղ «միջոցներ, կրճատելու բանուրի վարձը»: Բուժական-մննդային պունկտի կառավարիչը Պօլտայում, իր տրւած հաշւէկշորի մէջ, հաղորդում է, որ այնտեղով անցել են աւելի քան 10 խումբ, որ հեռացել են աշխատանքից, առանց ստանալու իրանց վարձը և անցագիրները. նրանցից ոմանք չեն ստա-

*) Die Verhältnisse d. Landarbeiter, §. II, Եր. 735 և §. III, Երես 807—819.

**) Фабрично-заводская промыш., стр. 465.

***) Статистико-экономич. обз. Херсонской губ. за 1694 г., ст. 47.

****) Кн. Н. Шаховской. Сельско-хоз. отхожие промыслы, М., 1896, стр. 133.

ցել նոյն իսկ իրենց քսակները: Նրանք բոլորն էլ հեռացման պատճառ են քերել վատ կերակուրը, մշտական կանոն դարձած կեղեցումները և մինչև անդամ ծեծը, որի նպատական էր ստիպել բանուրներին հեռանալ և հետևաբար կորցնել աշխատավարձի վրայ ունեցած իրաւունքը *):

Խոշոր տնտեսութիւնների մէջ բանուրներին կերակրելը, ինչի համար աշխատավարձից հանուռմ են որոշ գումարներ, ներկայացնում է նոյնպէս մի նշանաւոր միջոց՝ աշխատավարձը կը ընտառելու, որովհետեւ կերակուրը տրում է անբաւարար քանակով և ոչ լաւ տեսակի: «Կալիֆօրնիայի գիւղատնտեսական բանուրի կերակուրը սոսկալի միատեսակ է. խոզի միս, գետնախնձոր և սպիտակ հաց սուրճի հետ՝ առանց կաթի՝—ահա այն ամենը, ինչ նրան տրում է **): Բայց այդ սուռնդը ուստական գիւղատնտեսական բանուրի համար շապալութիւն կլինէր: «Նախաճաշիկի համար տալիս են հաց և ջրալի տաք հեղուկ: Ճաշը բաղկացած է հացից, տաք բօրշչից և կաշայից՝ ճարպի հետ... Կէսօրին լաւգոյն տնտեսութիւններում տալիս են միայն կուլեշ կամ գալուշկի, իսկ միւսներում միայն վարունգ, երբեմն էլ մի չորացրած ձուկ: Առհասարակ կերակուրը գրեթէ միշտ բաղկացած է ըստ սական արդիւնքներից և աչքի է ընկնում ծայրայեղ միատեսակութեամբ: Միս, կաթ, պանիր և կենդանական այլ արդիւնքներ բանուրները ստանում են շատ սակաւ գէպքերում և այն էլ իրենքաղ, ցրաւէնիք—տօներին: «Բայց այդ ևս նկատում է իրեն իդէ ալ որոշւած պայմանագրով: Շատէրն են, տէրերից պահպանում պայմանագիրը: «Մենք իրաւունք ունենք մտածելու որ բանուրը, դէպքերի մեծամասնութեան ընթացքում, ստանում է մննդի նիւթերը աւելի փոքր քանակով, քան այդ որոշւում է պայմանագրով ***):

Տէրերն աշխատում են տնտեսել մինչև անդամ ընակարանների մէջ: Գերմանիայում «գոյութիւն ունին դեռ հազարաւոր բանուրական ընակարաններ (գիւղ. տնտեսութիւններում), ուր ընակիչների առողջութիւնը ենթարկւած է ամենալուրջ վտանգի ընակարաններ, որոնք ոչ մի նմանութիւն չունեն ընակչութեան

*) Н. Тезяковъ, стр. 66.

**) H. Semler, Ербен 54,

***) Н. Тезяковъ, стр. 92.

համար յատկացւող տեղերին և որտեղ բնակիչները ոչ մի կարող զութիւն չունեն հաշւի առնել սովորական բարոյական կանոնները»: *) Գերմանիայի գիւղատնտեսական բանտորների բնակարանների բնորշման համար, հետաքրքիր է այն նախատինքը, որ կոմս Շրöben-ը շվլրտել է իր եղբայրակիցների երեսին. «Դուք աւելի շատ էք մտածում խոզերի մարտաների մասին, քան թէ բանտորանան կաղարմաների մասին» **): Կալիֆօրիայում՝ այն տնտեսութիւններում, որոնք ունեն տամանեակ հազարաւոր դեսեատին ցանքային հողեր, իրրև կաղարմաներ բանտորների համար ծառայում են «հասարակ տախտակամած շինութիւններ՝ ծեփւած ցեխով»... Այդպիսի վրանի մէջ բանտորը կառուցանում է խոտից իր անկողինը, եթէ իհարկէ տէրն այնպիսի մարդասէր էակ է, որ տալիս է նրան մի քսակ չորացրած խոտ... Հունձի ժամանակ, երբ պահանջում են աւելի շատ բանտորներ, վրանները չեն տեղաւորում բոլորին, և նրանց մեծամասնութիւնը պէտքէ պառկէ բայց երկնքի տակ: Մինչեւո գիշերները կալիֆօրնիայում բաւականաչափ ցուրտ են» ***): Խերսոնի նահանգում «բանտորները ամառ ամբողջ ժամանակը անց են կացնում դաշտում... ուր տեղաւորում են խմբերով ուղղակի բաց երկնքի տակ: Որևէ յարմարութիւն բանտորների համար, որպէսզի պաշտպանել նրանց տօթից, անձրեց և ցրտից դաշտի մէջ, տէրերը չեն մտցնում: Վատ եղանակի ժամանակ և ուշ աշնանը բանտորներն իրենք պէտք է ձեռք առնեն միջոցներ ցրտից ու անձրեց պաշտպանւելու համար»... Աւելի վատ է ձմեռային բանտորների դրութիւնը: «Բանտորների ձմեռան բնակարանները միայն քիչ տնտեսութիւնների մէջ են շատ թէ քիչ բաւարար կերպով գրւած, թէպէս զրեթէ բոլոր տեսնած բնակարաններում բացակայում են որևէ յարմարութիւններ օգամաքրութեան համար և բոլոր բնակարանները պահանում են կեղտոտ, ինչի ամենուրեք նպաստում են հողային յատակները. ոչ սակաւ առանձին տեղերի բացակայութիւնը աղամարդկանց և կանանց համար,—այդ ամենը ստիպում է մեզ արտայայտեք որ տնտեսութիւնների մէջ շատ քիչ

*) T. von Goltz, Die ländliche Arbeiterfrage, 1872, երես 16.

**) Versammlung der Berliner Konferenz ländlich. Arbeitgeber, 1872, երես 68.

***) H. Zemles, երես 51—52 և 54.

բնակարաններ կայ, որոնք միանգամայն բաւարար լինէին բանտորների համար: Շատ կազարմանների ամենախոշոր պակասը «եփելու վառարանների» գոյութիւնն է նրանց մէջ, թէև ուրիշ շատ կողմերից նրանք բաւարար են: Կերակուր եփելու ժամանակ, մանաւանդ խոշոր քանակով, գոյանում է շոգի, որը հաւաքւելով աւելի ցուրտ պատերի միջն, պահպանում է սրանց մէջ խոնաւութիւնը: Ապա եթէ յիշել և այն, որ այստեղ, քնելու տեղից վեր, բանտորները կախվուում են իրենց կեղտոտ թաց սպիտակեղնը՝ չորացնելու համար,—այն ժամանակ դժւար չէ պատկերացնել զանազան զոլորշիներով լեցուն օդը, որի մէջ, կեղտոտ քնելու տեղերի վրայ, կեղտոտ խոտի դօշակի վրայ, ծածկւած նոյնպիսի կեղտոտ, երբեմն էլ խոնաւ կաշւէ քուլքով, սեղմ կերպով տեղաւորուում են գիշերելու բանտորները՝ տանջւած ցերեկւայ աշխատանքով, ոչ սակաւ կանայք ու տղամարդիկ միասին»: Բայց և այնպէս նրա կազարմանները հաշում են շրեղութիւն, ինչ ամեն դործատէր իրեն թոյլ չի տալ: «Ելանսիցկի շրջանի տնտեսութիւնները դիտելիս, թոյլ չի տալ: Պաշկովսկին 20 տնտեսութիւններից և ոչ մէկում չի տերժիշկ Պաշկովսկին յատկապէս սել այնպիսի բնակարաններ, որոնք շինուած լինէին յարմարեցւած նրանց բանտորների համար կամ մի փոքր առնաւզն յարմարեցւած նրանց կարիքների համար: Բանտորները մեծամասնութեամբ կուչ են կարիքների համար: Բանտորները մեծամասնութեամբ: Այդ զալիս տարով վարձւած բանտորների բնակարաններում: Այդ բնակարաններից մի քանիսը—միշտ նրանք ծառայում են միայն իրենց մշտական բնակիչների համար—կարելի է տանելի անտառները բայց երբ նրանց մէջ բացի այդ, տեղաւորուում են հարիւրաւոր բանտորներ, այն ժամանակ, տեղի սղութեան և զրահեանքների պատճառով, այդ ընտանիկան բնակարանները ևս զանուում են անկարելի բնակչութեան համար: Այն ժամանակ բանտորների մի մասը տեղաւորուում է խոհանոցներում, մարագներում և այլն, Ոմանք տեղաւորուում են քնելատեղիներում (հարы), եթէ կան այդպիսիները, իսկ միւսները յատակի վրայ և ուր ստիպում է գիշել լինում են հիւանդներ, նրանք առաւելապէս պառկում են խոհանոցներում առողջների հետ մասին» *): Այդպէս է զիւղատանեսական բանտորների դրութիւնը. այդ-

*) Н. Тезяковъ, стр. 85—90.

գրութիւնները։ Գիւղատնտեսութեան վերաբերեալ, այդ վիճակագրութիւնները չեն տալիս արտադրութեան համար գործադրուղ հում նիւթի գնահատումն։ Այդ պատճառով մենք կհամեմատենք միայն շինութիւնների և անհրաժեշտ պիտոյքների արժէքը գիւղատնտեսութեան և մշակող արդիւնաբերութեան մէջ *):

Մշակող արդիւնաբերութիւնը:

Շինութիւնների արժէքը . . .	878, 83	միլ. դոլ.
Մեքենաների, բան. և գործիքների արժէքը	1584, 16	» »

Ընդամենը . . . 2462,99 մ. դ.

Բանուրներ զբաղւած են . . .	4,25	միլ. մարդ:
Կապիտալ ամեն մի բանուրի վրայ . . .	579,53	դոլլար:

Գիւղատնտեսութիւնը:

Շինութիւնների արժէքը . . .	3319,75	միլ. դոլ.
Մեքենաների	494,25	» »
Անսպունների	2208,77	» »

Ընդամենը . . . 6022,77 միլ. դոլ.

Բանուրներ զբաղւած են . . .	8,76	մ. մարդ
Կապիտալ ամեն մի բանուրի վրայ . . .	677,53	դոլլար:

Այդպիսով, մշակող արդիւնաբերութեան մէջ ամեն մի բանուրի վրայ գալիս է 579,53 դոլլար, իսկ գիւղատնտեսութեան մէջ՝ 677,53 դոլլար, այսինքն $18,6^{\circ}/\circ$ -ով աւելի։

Ինչքան էլ այդ թւերը լինեն մօտաւոր, այնուամենայնիւ

*) Այդ տեղեկութիւնները հաւաքւած են 1900 թ. վիճակագրութեան ժամանակի։ „Extra Census Bulletin“-ի մէջ գիւղատնտեսական հողի և շինութիւնների արժէքը ցուցադրւած է մէկ թւանշանի միջոցով։ Մենք այդ թւանշանը անդամանատել ենք այնպիսով, որ շինութիւնների արժէքը կազմէ հողի և շինութիւնների ընդհանուր արժէքի 25 տոկոսը։ Ինկատի առնելով հողի էժանութիւնը Միացեալ-Նահանգներում, մեր արած շինութիւնների գնահատութիւնը աւելի շատ պէտք է իրականից ցածր լինի, քան բարձր։ Գիւղատնտեսական ազգայնակութեան թիւը վեցրած է Հոկոլայ-օնեցից։ Բայց ակներկ է, որ այդ թիւը բարձր է իրականից, որովհետեւ պ. Հ.-օն. ընդունում է ազգարակապանների թիւը 5 միլ., մինչդեռ իրապէս նա 4,564,641 է։ Որովհետեւ այդ թւերը միայն թուլացնում են մեր կորակացութիւնը, և ոչ թէ ուժեղացնում այն, ուստի նրանք աւելի ևս ստորագծում են տիրող հայեացքի սխալ լինելը՝ գիւղատնտեսական կապիտալի կազմութեան վրայ։

նրանց մէջ դժւար է տեսնել հաստատութիւն այն եզրակացութեան, թէ կապիտալի կազմութիւնը տալիս է գիւղատնտեսութեանը որևէ առաւելութիւն։ Ինչ վերաբերում է այն յարաբերութեան, որ գոյութիւն ունի արտադրութեան ժամանակի և աշխատանքի ժամանակի միջև, այստեղ ևս գիւղատնտեսութեան պայմանները ամբողջովին անձեռնուու են։ Բարեխառն կիմայում, բոյսերի աճման համար անհրաժեշտ է ոչ պակաս, քան 200 օր։ Բայց աշխատանքի ժամանակը չի տեսում 200 օր։ Հազիւ թէ չափանցութիւն լինի, եթէ մենք որոշենք նրա տեսողութիւնը 100 օր։ Մշակող արդիւնաբերութեան մէջ աշխատանքը կարելի է ամբողջ տարւայ ընթացքում, այսինքն 365 օր։ Բացի այդ, ինչքան էլ երկար լինի գիւղատնտեսութեան մէջ աշխատանքի օրը, նա երբէք չի ընդգրկում ամբողջ օր ու գիշերը, որովհետեւ գիւղատնտեսութեան մէջ գիշերային աշխատանքը անկարելի է։ Այդ ամենը հանգչում է այն կէտին, որ աշխատանքի ժամանակը, որի տակտում մշակող արդիւնաբերութեան մէջ կարող է հասնել մինչև $24 \times 365 = 8760$ ժամի (մի բանուր է տալիս այդ ժամերը կամ մի քանի հերթերի սիստէմով, այդ մինչոյն է), գիւղատնտեսութեան մէջ չէ գերազանցում, մինչև անգամ հաշեելով գերագոյն աշխատանքի օրը, $15 \times 100 = 1500$ ժ.։ Բայց կապիտալը զբաղւած է թէ գիւղատնտեսական, թէ արդիւնաբերական-գործարանական ձեռնարկութեան մէջ 8760 ժամ։ Հետեւարար, գիւղատնտեսական կապիտալը, չնորհիւ արտադրութեան և աշխատանքի ժամանականամապատախանութեան, կարող է գործառնութեան ըրջանում գործի գնել 5,84 անգամ պակաս աշխատանք, քան արդիւնաբերական-գործարանական կապիտալը, իսկ այստեղից—նա կարող է արտադրել, համապատասխան չափով, աւելի պակասյաելեալ արժէքի ցածր չէ։ Նոյնիսկ այն գէպքում, եթէ յաւելեալ արժէքի ցածր չափով, իսկ միւս կողմից՝ արտադրութեան և աշխատանքի ժամանակի անպայման անբարեյածոյն յարաբերութեամբ և կապիտալի այնպիսի կազմութեամբ, որը հաշեել թէ կարելի լինի առանձնապէս ձեռնատու հաշեել շահի նօրմի որոշման համար։ Այդ ամենը բերում է զէպի շահի ցածր նօրմը։ Գիւղատնտեսութեան միայն այդ առանձնայատկութիւնները, որ գուրու չեն գալիս արտադրութեան սահմանից, գարձնում են ար-

4

դիւնաբերութեան այդ ճիւղը անյարմար շրջան կապիտալիզմի համար: Բայց կապիտալիզմի դրութիւնն այստեղ աւելի ևս վատահամար: Հայց կապիտալիզմի գիւղատնտեսական յաւելեալ արժէքի թարանում է, շնորհիւ գիւղատնտեսական յաւելեալ արժէքի թարանում է, շնորհիւ գիւղատնտեսական յաւելեալ արժէքի թարանում է, որ բաշխման առանձնայատուկ ընաւորութեան, ընաւորութիւն, որ բաշխման օրէն ծագում է, այսպէս անւանւած, հողային կապիտալի գերից՝ գիւղատնտեսութեան մէջ:

V.

Արտադրութեան տեսակէտից կապիտալն այն չէ, ինչ կապիտալիստի տեսակէտից: Կապիտալիստի համար կապիտալ է պիտակատի տեսակէտից: Կապիտալիստի համար կապիտալ է այն ամենը, ինչ նրան հնարաւորութիւն է տալիս տիրանալ յաւելեալ արժէքին. կապիտալի ծագումը, էութիւնը և գործողութիւնները նրա համար միևնուն են: Այլապէս է արտադրութեան տեսակէտից: Որովհետև արտադրութեան նպատակն է՝ ստեղծել փոխանակութեան արժէքներ, որոնց մէջ կապիտալը մտնում է ամբողջովին կամ մասամբ իրեն մի տարր, ուստի ակներև է, որ նա ինքն պէտք է լինի փոխանակութեան արժէք, պէտք է լինի արդիւնք նրա, ինչ ստեղծում է փոխանակութեան արժէքներ—արդիւնք նրա, այս ստեղծում է փոխանակութեան անարդիւնք աշխատանքի: Միւս կողմէց, որովհետև կապիտալն անհամար մտնում է իրեն մի տարր նոր արտադրուող արժէքների մէջ, այդ պատճառով արտադրութեան ընթացքումնա պէտք է կորցնէ իր սկզբնական դէմքը, նրա արժէքը պէտք է հալչէ արտադրութեան մէջ և մաս-մաս անցնէ նոր արտադրուող ապրանքների մէջ: Յաւիտենական կապիտալը նոյնպէս աներևակայի է, ինչպէս յաւիտենական բանւորը: Ունի հողը բոլոր այդ յատկութիւնները: Կազմում է նա աշխատանքի արդիւնք և կորցյատկութիւնները: Կազմում է նա պատասխանում: «Հողաբաժինները, ասում է բական կերպով էր պատասխանում: «Հողաբաժինները, Սոլինարին, ինչպէս և շինութիւնները, արօնները, աշխատող անասունները և արտադրութեան սիւթական կազմի այլ առարկաները ամեննեխն ձրի կերպով չեն բաժին ընկել իրենց սեփականատէրերին: Հողի ամեն մի մասնիկը, որ գործ է ածուում արտադրութեան համար, կարող է նկատել իրեն մեքենայ, որի տարրերը—ինչպէս և միւս մեքենաների և իրեն մարդուս տարրերը—հայթայթւած են ընութեամբ, բայց որի վերջնական կազմը և յար-

մարդումը արտադրութեան համար պատկանում է մարդուս գործունէութեանը... Հողին արդիւնքի ընաւորութիւն տալը՝ տեղի է ունենում նախ գիւտի, երկրորդ գրադան և երրորդ մշակման միջոցով: Գիւտը առաջին գործողութիւնն է, որ անհրաժեշտ է գործիք-հողի արտադրութեան համար: 15-րդ և 16-րդ դարերում այդ գործողութիւնը նոյն իսկ առանձին զբաղմունքի առարկայ է եղել: Երբ հողի գիւտը կատարւած է, անհրաժեշտ է գրաւել նրան, այսինքն օժանել նրան պաշտպանութեան միջոցներով, զցել հաղորդակցութեան ճանապարհներ և այլն: Գտնելով կրաւելով այդ հողերը, կառավարութիւնը զիջել է նրանց զանազան պայմաններով առանձին անհատների: Նոր հողատէրը մաքրում է հողը, չորացնում և ցանկապատում նրան» և հող-արդիւնքի, հող գործիքի կազման պրօցեսը վերջացած է *):

Վերը բերած պատճառարանութիւնը լուսաբանելու համար բերենք մի օրինակ: Գործարանատէրը դիմում է մի ոմն կօմիսիօնէրի՝ մեքենայ ձեռք բերելու նպատակով: Վարձատրելով կօմիսիօնէրի աշխատանքը, նա դրանով վարձատրում է մեքենայի գիւտի վրայ գործադրած աշխատարբը: Յետոյ նա տիրանում է մեքենային, այսինքն տեղափոխում է իր մօտ, տեղաւորում այնպէս, որ նրան չը գողանան, փաթաթում է նրան հաստ կտաւով, որ նա չըփչանայ և այլն: Վերջապէս, նա մշակում է մեքենան—հաւաքում է նրան, ամրացնում, միացնում շարժող ոյժի հետ և այլն: Երբ ամեն ինչ պատրաստ է, գալիս է մեքենայի նախկին սեփականատէր և համոզելով, որ գործարանատէրը բաւական է մեքենայով, նա պահանջում է նրա համար փող: Եթէ գործարանատէրը լինէր Մոլինարին, նա ի հարկէ զարմացած կլինէր, վճարելով իր սեփական գրպանից մեքենայի գիւտի, տիրացման և մշակման համար արած ծախսերը, նա կհաշւէր այն իր սեփականութիւնը. բայց ինչպէս բացատրել մեքենայի նախկին սեփականատիրոջ պրէտէնզիաները: Այդ հարցին մեքենայի նախկին տէրը կպատասխանէր Մոլինարուն այսպէս. «Որպէս զի դու կարողանայիր գտնել, տիրանալ և մշակել մեքենան, ես պէտք է նրան ստեղծէի: Ճիշտ է, ես չեմ ստեղծել այն տարրերը, որոնք կազմում են մեքե-

*) Г. де-Молинари. Курсъ политической экономіи. Спб. 1860. մասն 1, երես 273—277.

նայի հիմքը, ես չեմ ստեղծել մեքենայի նիւթը, բայց ես նպա-
տակայարմար կերպով փոփոխել եմ այդ նիւթը, տւել եմ նրան
ըեզ համար օգտակար ձև. դա ես անւանում եմ մեքենայի ստեղ-
շիք համար օգտակար ձև. դա ես անւանում եմ մեքենայի ստեղ-
շիք համար աղյուսակար ձև. դա իւ անւանում եմ մեքենանք, և
ծագործութիւն, դա խել է ինձանից մի ամսւայ աշխատանք, և
եթէ դու կամենում ես պահել քեզ մօտ մեքենան, դարձրու ինձ
աշքից թողնել է, որ կապիտալը գտնելու համար անհրաժեշտ է,
աշքից թողնել է, որ կապիտալը գտնելու համար անհրաժեշտ է,
որ նա գոյութիւն ունենայ մինչև գիւտը, այսինքն մինչև այն
վարկեանը, երբ, Մօլինարիի կարծիքով, սկսում է նրա գոյու-
թիւնը՝ իրեւ կապիտալի. իսկ որպէսզի նա գոյութիւն ունենայ
անհրաժեշտ է նրան շինել: Վերջին հանգամանքը հողի վերաբե-
րեալ չի կարող գոյութիւն ունենալ, ինչի համար և նա չի կա-
րող նկատել իրեւ սովորական կապիտալ:

Այդպիսով, հողը չունի կապիտալի գլխաւոր յատկութիւնը. նա
աշխատանքի արդիւնք չէ: Չը լինելով աշխատանքի արդիւնք՝ նա չի
կարող լինել և փոխանակութեան արժեք, ուրեմն և կապիտալ:
չին անտեսագիտութեան վերանորոգիչները այդ լաւ գիտեն.
Բայց ստրուկ լինելով մի փաստի, որ նրանք ընդունում են ա-
ռանց քննութեան և վերաբնութեան, նրանք այնուամենայնիւ
չեն կարողանում տալ հողին նրան յատուկ տեղը: Եւ ահա բեմ
է գուրս գալիս մի հասկացողութիւն հողի մասին. իրեւ կոնիոնկ-
տորային կապիտալի մասին (լերուա Բօլիէ), Կօնիոնկտորային կա-
պիտալը՝ այդ, այսպէս ասած, պայմանական կապիտալ է, կապի-
տալ տւած ժամանակի համար: Որ այդ տեսակ «կապիտալներ»
կարելի են, ցոյց է տալիս ամբողջ իրականութիւնը: Բայց կարե-
լի է արդեօք այդ տեսակ կապիտալները մտցնել ժողովրդական
անտեսութեան հասկացողութիւնների շրջանի մէջ: Ժամանակա-
կից կող գեղեցկութիւնը՝ անկամակած նրա կապիտալն է: Ճիշտ
է, գեղեցկութիւնը չէ գնահատուում արբանքային բօրսայի յարկի
տակ, բայց նա վերին աստիճանի պահանջւած ապրանք է կեան-
քի բօրսայում: Առաջական «լիդը» կամ որոշ տեսակի «հայ-
րենասիրութիւնը»—դրանք ևս վատ կապիտալներ չեն: Բայց
կապիտալի այդ բոլոր տեսակները մտնում են արդեօք ժողովր-
դական անտեսութեան հասկացողութիւնների շրջանը: Ակներև է—

ոչ, որովհետեւ բոլոր այդ կապիտալները առանձին անհատների,
և ոչ թէ ամբողջ հասարակութեան, եկամուտաների աղբիւր են:

Կասկած չկայ, անտեսութեան մէջ ևս կարելի են կօնիունկ-
տուրային կապիտալներ: Այդ այսպիսի կապիտալներ են, որոնք
չլինելով աշխատանքի արդիւնք՝ այնուամենայնիւ հալչում են ար-
տադրութեան մէջ, կորցնում են իրենց սկզբնական ձեւը և սկը-
սում են գոյութիւն ունենալ, իրեւ նոր արտադրւած ապրանքնե-
րի մի էլեմենտ: Պատահաբար գտնւած ոսկեհանքը, որի գիւտի
վրայ չէ կորել և հինգ բոպէ, կարող է անւանել կօնիունկուրա-
յին կապիտալ, բայց ոչ այն պատճառով, որ նա կազմում է որևէ
մէկի սեփականութիւնը, այլ այն պատճառով, որ նրա մշակումը
հետեւանք է ունենում նրա ուժասպառման: Կարող է արդեօք այդ
գէպքը վերաբերել հողին: Ահա թէ ինչ է առում այդ մասին ագ-
րօնօմը—մի մարդ, որ ամենից մօտիկ է հողին և այդ պատճառով
լաւ ծանօթ է նրա յատկութիւններին. «Հողը անսպառ է... Հողի
արտադրողական ոյժերը կարելի է քչացնել գիշատիչ շահագոր-
ծութեամբ (նպատակայարմար շահագործութիւնը դեռ էլ աւե-
լացնում է այդ ոյժերը), բայց երբէք՝ սպառել վերջնականապէս»*):

Այն հարցը, թէ կապիտալ է հողը, վերին աստիճանի կա-
րեսը է: Եթէ հողը կապիտալ է, այն ժամանակ նա ինքնուրոյն
կերպով կառավարում է աշխատանքը, նպաստում է նրա շահա-
գործութեանը և հետեւապէս ծառայում յաւելեալ արժեքի, ուրեմն և
կապիտալիստական շահի արտադրութեան համար իրեւ ինքնու-
րոյն գործոն: Իսկ եթէ հողը կապիտալ չէ, այն ժամանակ հողա-
տիրոջ եկամուտը կարող է ունենալ երկու տեսակ ծագում: Կամ
կապիտալիստը զիջում է նրան իր իւրացրած յաւելեալ արժեքի
մի մասը, կամ թէ այստեղ, ուր հողը մասնակցում է արտադրու-
թեան մէջ, գոյութիւն ունի, յաւելեալ արժեքից զատ, շահի մի
այլ աղբիւր: Ի՞կարգօն, ինչպէս յայտնի է, դաւանումէ երկրորդ
հայեացքը:

Ի՞կարգօնի բենտայի (հողային հասոյթ, թ.) տեսութիւնը—
նրա դիմակաթիկայի ոյժի մի օրինակ է: Նրա անհաստատութիւ-
նը բացատրում է միայն այն երկու ելակէտների սխալ լինելով,
որոնց վրայ հիմնած է ամբողջ փայլուն շէնքը: Բենտան (այսինքն

*) T. Goltz. Handbuch d. Landw. Betriebslehre 1886 թ. եր. 17.

հողատիրոջ եկամուտը), Ռիկարդօի կարծիքով, տարբեր որակունեցող հողերի արտադրողականութեան մէջ եղած տարբերութիւնն է: Որպէսզի այդ տարբերութիւնը լինի, անհրաժեշտ է, որ աւելի լաւ հողին կից շահագործեի և աւելի վատ հողը—շահագործեի, թէև չի տալիս բենտա. այլապէս աւելի լաւ հողերի արտադրողականութեան համար չի լինի համեմատութեան առարկայ: Այդ նեղ վիճակից Ռիկարդօն գուրս է եկել պատմական սխալի օգնութեամբ. նրա համար հողի մասնաւոր սեփականութեան փաստը չէ նախորդում բենտային, այլ նետեսում է նրան, —միանգամայն սխալ մի տեսակէտ: Արժէ միայն հեռացնել այդ սխալը, որպէսզի նրա տնտեսութեանը հասցնել մի անուղղակի հարւած: Եւ իսկապէս. եթէ հողի մասնաւոր սեփականութիւնը նախորդում է բենտային, կարող են արդեօք մշակել այնպիսի հողաբաժիններ, որոնք բենտա չեն տալիս: «Այն հանգամանքը, որ նրա (կապալառուի) կապիտալը կարող է այդ գէպքում (աւելի վատ հողաբաժնի մշակութեան միջոցին) ստանալ սովորական շահը, եթէ նա բենտա չմարէ, այդ հանգամանքը հողատիրոջ համար չի ներկայացնում որևէ հիմք, որ սա ձրի կերպով հող տայ առաջինին և լինի այնքան մարդասէր, որ առաջարկէ նրան *crédit gratuit:* Այդ տեսակ ենթադրութիւնը թոյլ է տալիս ուշագրութեան չառնել հողատիրութիւնը կամ ընդունել հողային սեփականութեան վերացումը» *): Հետևաբար, կարելի է երկուսից մէկը. կամ աւելի վատ հող ևս վճարում է բենտա և այդ գէպքում բենտան այլ ևս չի լինի զանազան որակի հողերի արտադրողականութեան մէջ եղած տարբերութիւնը, կամ թէ աւելի վատ հողը չի մշակում: Թէ մէկը և թէ միւսը հակասում են Ռիկարդօի տեսութեանը:

Ռիկարդօի բենտայի տեսութեան միւս ելակէտը—այդ հողի արդիւնքների արժէքն է: «Հացի գինը, սառմ է նա, որոշում է աշխատանքի այն քանակով, որ գործ է դրտում նրա արտադրութեան համար այնպիսի որակի հողաբաժնների վրայ, որոնք ոչ մի բենտայ չեն վճարում **), այսինքն աւելի վատ հողաբաժնների վրայ: Այդ որոշումը չի հակասում նրա առհասարակ ար-

*) К. Марксъ, III, 618.

**) Д. Рикардо, Собрание сочинений, пер. Н. Зибера, стр. 34.

մէքի որոշմանը: Բայց Ռիկարդօի արժէքի տեսութիւնը—այդ միայն սկզբնական հիմքն է այն գիտական տեսութեան, որ լրացրել է կ. Մարքսը՝ մտցնելով արժէքի աշխատաւորական տեսութեան մէջ հասարակական անհրաժեշտ մկրտնքը: Հստ Մարքսի, արժէքը որոշում է ոչ թէ այն աշխատանքի ժամանակով, որ անձնապէս անհրաժեշտ է տւած հատիկ արտադրողին՝ ապրանքի տւած քանակը կամ առանձին ապրանքներ արտադրելու համար, այլ որոշում է հասարակական-անհրաժեշտ աշխատանքի ժամանակով—աշխատանքի ժամանակ, որ պահանջում է տւած միջին հասարակական պայմաններում: Աշխատանքը աւելի վատ հողի վրայ—այդ աշխատանքը չէ միջին պայմաններում: Հողագործական աշխատանքի միջին հասարակական պայմաններ ասելով, անհրաժեշտ է հասկանալ միջին որակի հողի մշակումն և հետեւաբար, միայն այդ աշխատանքն է, որ պէտքէ որոշէ հողագործական արդիւնքների արժէքը: Իսկ այդ գէպքում, միջին որակի հողաբաժնները չը պէտք է բենտա հայթայթեան, բենտան պիտի ստացի միայն միջին որակից բարձր հողաբաժններից: Այդ նշանակում է, որ բենտան կարող է լինել միայն բացառիկ երկոյթ, որովհետև այն հողաբաժնները որոնք աւելի պտղաբեր են, քան միջին պտղաբեր հողաբաժնները, կազմում են ի՞հարկէ համեմատական հաղւադէպութիւն:

Բենտայի ուսմունքը դրւած է նոր հող վրա Մարքսի կողմից. սակայն իր եղբափակութների մի քանի մասերում Մարքսը ևս կրկնում է Ռիկարդօի սխալ եղբափացութիւնները: Ռիկարդօի բենտայի տեսութեան առաջին ելակէտի սխալը—այն է, որ բենտան նախորդում է հողի մասնաւոր սեփականութեանը—Մարքսը ըմբռնել է միանգամայն ձիշտ կերպով և վերացրել է նրան՝ մտցնելով բենտայի մի նոր տեսակ—արսօլիտ բենտան, որ վճարում են առանց բացառութեան բոլոր հողերի կապալառուները: Բայց յետոյ Մարքսը նորից դիմում է Ռիկարդօին, որովհետև իր «գիրեբենցիալ բենտան» ընդհանուր գծերով ոչ այլ ինչ է, բայց եթէ Ռիկարդօի բենտան. «ղիգիբենցիալ բենտան, սառմէ Մարքսը, ծագում է հողի տարբեր տեսակների պտղաբերութեան տարբերութիւնից, հետևաբար, աւելի լաւ հողերի բանակի սահմանափակութիւնից և այն հանգամանքից, որ ոչմիասաւակ հողերի վրայ պիտի գործադրւեն հաւասար կապիտալներ,—հողերի տեսակներ,

որոնք հաւասար կապիտալներին բերում են հետևաբար ոչ հաւասար արդինք»*): Ընդհանուր առմամբ, այդ ինարկէ միշտ է. եթէ հողերը լինում են տարբեր որակի, այն ժամանակ աւելի լաւ հողաբաժնի տէրը միշտ կապահանջէ իր կապալառուից արսոլիւտ ըենտայի մի նոր յաւելումն, այսինքն կապահանջէ դիմերենցիալ ըենտա ևս: Բայց զրկած են արդեօք դիմերենցիալ ըենտայից միայն վատագոյն հողերը, թէ միջին հողերն ևս: Եթէ դիմերենցիալ ըենտան լաւագոյն հողերի առաջ այս ժամանակ նա պէտք է նկատէ՛ որպէս այնպիսի մի բացառիկ երկոյթ, ինչպէս surplusprofit-ը—այն աւելորդը շահից դուրս, որ տալիս են պատահարար աւելի լաւ պայմաններում դրած ձեռնարկութիւնները նոյնանման ձեռնարկութիւնների համեմատութեամբ: Բայց դիմերենցիալ ըենտայի այդ դերը թուում է Մարքին անբաւարար, և տարածելով դիմերենցիալ ըենտան միջին հողերի վրայ ևս՝ նա կրկնում է Իրկարդոի սխալը, չնայած որ՝ որոշելով երկրագործական արդինքների արժէքը վատագոյն հողերի մշակման վրայ գործադրած աշխատանքով՝ նա հակասում է իր սեփական արժէքի տեսութեանը—մի տեսութիւն, որ իրաւացի կերպով հաշուում է ամբողջ նորագոյն տնտեսագիտութեան պարծանքը: Այդ յաւելացումը, որ Մարքը բոնի կերպով մտցնում է իր արժէքի տեսութեան մէջ, որպէսզի արդարացնել դիմերենցիալ ըենտան բոլոր հողերի համար, բացի վատագոյն հողերից, այդ հաւելացումն առաւել ևս անհասկանալի է, քանի որ մի այլ տեղ նա ուղղակի նմանեցնում է դիմերենցիալ ըենտան աւելշահի (surplusprofit) հետ. իսկ այդ դէպքում կարիք չկար որոնել դիմերենցիալ ըենտայի մի այլ աղբիւր տարբեր նրանից, որ տալիս է աւելշահը: «Դիմերենցիալ ըենտան, ասում է նա, ունի այն առանձնայատկութիւնը, որ հողատիրութիւնը իր ձեռքն է զցում միայն այն աւելշահը, ինչ այլապէս կնկներ կապալառուի գրպանը: Հողային սեփականութիւնը այդ դէպքում միայն պատճառ է, որպէսզի ապրանքային գնի մի մասը՝ որ աւելացած է առանց նրա աջակցութեան և կազմումէ աւելշահը, անցնէ մի մարդից միւսին, կապիտալիստից հողատիրողը»**):

*) Կ. Մարկս, III, երես 543.

**) Կ. Միրկս, III, 622.

Մարքսի կառուցւածքների մէջ՝ նրա արսօլիւտ ըենտայի տեսութիւնը ունի անհամեմատ աւելի կարեոր նշանակութիւն, քան ուսումն դիմերենցիալ ըենտայի մասին: Այստեղ ընկած է ամբողջ հարցի կենարօնակէտը. արսօլիւտ ըենտան դիմերենցիալ ըենտայի վերաբերեալ բոնում է նոյն տեղը, ինչ որ շահը բոնում է աւել շահի վերաբերեալ: Որովհետեւ ըենտան, այս կամ այն մեծութեամբ, նայած հողերի որպակի, վճարում են հաւասարապէս բոլոր հողերի կապալառուները, ուստի պարզ է, որ պատղաբերութեան տարբերութիւնը չի կարող լինել ըենտայի աղբիւր, ուրեմն, հողը չի ներկայացնում հողատիրոջ համար եկամուտի յատուկ աղբիւր: Դա նշանակում է, որ հողատէրը պէտք է ստանայ իր եկամուտը (ըենտա) նոյն աղբիւրից, որտեղից և կապիտալիստը—յաւելեալ արժէքից: Ուրիշ խօսքերով, ուր հանդէս է գալիս հողատէրը, այնտեղ նա յայտարարում է իր մասնակցութեան իրաւունքը յաւելեալ արժէքի մէջ: Կարող է արժեօք կապիտալիստը տանել հողատիրոջ մասնակցութիւն: Անկասկած մինչև այն ժամանակ, քանի այդ ֆասարեր չէ իր համար, այսինքն քանի հողատիրոջ մասնակցութիւնը յաւելեալ արժէքի մէջ չի խանգարում կապիտալիստին պահպանել իր կապիտալին ստացւող շահը նօրմի վրայ, տւած է միջին տեղի և ժամանակի համար: Հէնց որ այդ պայմանը կորչում է, կապիտալիստն այլ ևս հիմք չունի պահել իր կապիտալը ոչ-ձեռնտու ձեռնարկութեան մէջ և նա տեղափոխում է կապիտալը աւելի ձեռնտու տեղ:

Սյդպիսով, հողը կապիտալ չէ և այդ պատճառով նա չի մասնակցում յաւելեալ արժէքի արտադրութեան մէջ, այսինքն չի արտադրում իրեն բաժին յաւելեալ արժէքը. բացի այդ, նա չէ բացում եկամուտի նոր աղբիւրներ, որոնք, իբրև ըենտա, կարող էին համար հողատիրոջ. և եթէ մասնաւոր հողային սեփականութեան գոյութիւնը, այնուամենայնիւ, դարձնում է անհամեշտ ըենտայի գոյութիւնը,—հակառակ դէպքում հողը չէր կարող մըշակել—այն ժամանակ ըենտայի միակ աղբիւրն է կապիտալի արտադրած յաւելեալ արժէքը, Դրանից արամարանօրէն բղխում է, որ արդինաբերութեան այն ճիւղերում, որտեղ հողը խաղում է առանձնապէս մեծ դեր, շահի նօրմը պիտի լինի աւելի բարձր քան միւս ճիւղերում. նա պէտք է բաւարարացնէ և կապիտալիստն արժէքի միջին շահ իր կապիտալի համար, և այս, որը պահանջում է միջին շահ իր կապիտալի համար,

հողատիրոջը, որը ծախսելով հողի վրայ ճիշտ նոյնպիսի փողեր ինչպիսին կապիտալիստը ծախսել է գործիքների և այլն վրայ, պահանջում է և իր համար նոյնպիսի եկամուտ, ինչպէս կապիտալիստը:

Գիւղատնտեսութեան մէջ հողը խաղում է առանձնապէս առաջնակարգ դեր, մինչդեռ «արդիւնաբերութեան աշխատանքը իր արտադրութեան համար ամենեին կարիք չի զգում հողի մէջ կամ զգում է միայն իրեւ աշխատատեղի մէջ... Բայց բնակատեղի կարիքը ունի և մարդը իր անձնական կեանքի նպատակների համար, ինչու այդ հազիս կարելի լինի նկատել, իրեւ արդիւնաբերական աշխատանքից առաջացած կարիք*): Հողի համեմատական նշանակութիւնը գիւղատնտեսութեան և մշակող արդիւնաբերութեան մէջ արտայայտում է մօտաւորապէս հետեւեալ թւերով: 1890 թւականի վիճակագրութիւնը Միացեալ-Նահանգներում որոշել է այն հողերի արժեքը, որոնք ընկած են գործարանների և արհեստանոցների տակ, 776 միլ. դոլար, իսկ գործարանական արդիւնաբերութեան մէջ զբաղւած ամեն տեսակ կապիտալների արժեքը՝ 8.032 միլ. դոլար: Գիւղատնտեսութեան մէջ հողագէտ Գոլտցը անհրաժեշտ է գտնում, որ կապիտալը կազմէ, զարգացած կուլտուրայի մէջ հողի արժեքի 35 տոկոսը, միջին կուլտուրայի մէջ՝ 28 տոկ. և ցածր կուլտուրայի մէջ՝ 21 տոկոսը: Այդպիսով մինչդեռ մշակող արդիւնաբերութեան մէջ հողի արժեքը աւելի քան 10 անգամ ցածր է կապիտալի արժեքից, գիւղատնտեսութեան մէջ նա 3—5 անգամ բարձր է: Այդ նշանակում է որ, եթէ մշակող արդիւնաբերութեան մէջ հողատէը կարող է պահանջել իրեն բաժին յաւելեալ արժեքի 11-րդ մասը,—գիւղատնտեսութեան մէջ նա կարող է պահանջել 3/4-ից մինչև 5/6-ը: Հետեւեալ օրինակը ցոյց է տալիս, թէ ինչպէս այդ տարբերութեան շնորհիւ, գործը բարգանում է: Ա կապիտալիստը, ենթադրենք, դրեւ է գործարանի վրայ 1000 ր. կապիտալ, իսկ Ե կապիտալիստը նոյնչափ մի կապիտալ դրեւ է հողագործական ձեռնարկութեան մէջ: Երկու կապիտալիստն էլ ստանում են յաւելեալ արժեքի հաւասար գումար—100-կան ր.: Այդ յաւելեալ արժեքից նրանք

*) Carl Dietzel. Die Volkswirtschaft u. ihre Verhältniss zur Gesellschaft u. Staat, 1864, երես 291.

երկուսն էլ պէտք է վարձատրեն հողատիրոջը—գործարանատէրը տալիս է նրան յաւելեալ արժեքի մի տասնումէկերորդ մասը, հողագործը՝ 3/4—5/6 կամ միջին թւով յաւելեալ արժեքի 19/24 մասը: Հետևապէս, գործարանատիրոջ շահը կկազմէ 91 բուբլի, որը ամրող կապիտալի համեմատութեամբ, կկազմէ 9,1 տոկոս շահի նօրմ: հողագործի շահը կսահմանափակւէ 20^{5/6} բուբլով, որը կը կազմէ 2, 2 տոկոս շահի նօրմ: Այդ խոր տարբերութիւնը անհրաժեշտ է այն դէպքում, երբ ի նկատի է առնւում այն գերը, որ խաղում է գիւղատնտեսութեան մէջ հողը (իրեւ անւանական կապիտալ):

Բայց ի նկատի առնելով կապիտալիզմի խիստ շարժուն լինելը, ինչ բնորոշում է մեր ժամանակը, պէտք է ընդունել՝ որ ամեն մի կապիտալ ձգտում է դէպի շահի միջին նօրմը: Ի՞նչպէս է հասնուում այդ նպատակը գիւղատնտեսութեան մէջ և համնուում է նա առհասարակ: Ո՞րտեղից է առնւում գիւղատնտեսութեան մէջ այն աւելը շահից գուրս, որ կապիտալիստը, առանց վնասի իր համար կարող է յատկացնել հողատիրոջը: «Դժւարութիւնը, արդար կերպով ասում է Մարքսը, կայանում է ոչ թէ նրա մէջ, որպէսզի բացատրել հողագործական կապիտալի արտադրած յաւելեալ արժեքի և նրա համապատասխան յաւելեալ արժեքի ծագումն ընդհանրապէս: Այդ հարցը, իսկապէս ասած, լուծւած է յաւելեալ արժեքի քննութեան ժամանակ—յաւելեալ արժեքը, որ արտադրում է ամեն մի արտադրողական կապիտալ ինչ ճիւղում էլ նա տեղաւորւած լինի: Դժւարութիւնը նրա մէջ է կայանում, որ ապացուցել, թէ որտեղից է ծագում հողի մէջ տեղաւորւած կապիտալի յաւելեալ արժեքի աւելորդ մասը, որ կապիտալիստը վճարում է հողատիրոջ, որպէս ընտառ. որտեղից է ծագում այդ աւելորդը, որ իրեւ միջին շահ մնում է յաւելեալ արժեքի հաւասարաչափ բաժնումից յիտոյ զանազան կապիտալների միջև համապատասխան նրանց համեմատական մեծութիւնների, ամրող յաւելեալ արժեքի բաժնումից յիտոյ, որտեղից է երեսն գալիս, ամրող յաւելեալ արժեքի արդէն կատարւած բաժնումից յիտոյ, որը ընդհանրապէս պէտք է բաժնուէր—յաւելեալ արժեքի դեռ մի ինչ որ աւելորդ մաս, որ իրեւ բենտա վճարում է հողատիրոջ *): Այդ հարցի լուծումն Մարքսը գտնում է այն են-

*) Капиталъ, III, երես 645.

մաղրութեան մէջ, որ կապիտալի կազմը հողագործութեան մէջ ցածր է միջին հասարակական կապիտալից, այսինքն որ կապիտալի փոփոխական մասը հողագործութեան մէջ համեմատաբար աւելի շատ է: «Թենտայի այն ձեփ համար, ասում է նա, որ մենք այժմ ուսումնասիրում ենք (այսինքն արսօլիտ բենտայի համար), բաւական է անել այդպիսի ենթադրութիւն: Այստեղ, ուր այդ ենթադրութիւնը չի կարող արւել, չքանում է և նրան համապատասխան բենտայի ձել» *): Վերը մենք տեսանք, որ ամբողջ հարցը բենտայի մասին պէտք է դառնայ հարց հէնց արսօլիտ բենտայի մասին: Եւ անա, որպէսզի գտնել այդ բենտան, Մարքսը անհրաժեշտ է համարում, ենթադրել հողագործական կապիտալի ցածր կազմը, — մի փաստ, որ հէնց իր սեփական կարծիքով, կարելի է ապացուցանել միայն ստատիստիքական ճանապարհով **): Զէ նշանակում այդ—թողնել հարցը բենտայի աղբեւրի մասին բաց: Մեզ համար դժւարութիւնը զեռ ևս աւելի է, քանի որ, ինչպէս մենք ցոյց ենք տւել իր տեղը, այն փաստական տեղեկութիւնները, որ գոյութիւն ունեն այդ հարցի վերաբերեալ (ճիշտ է, կցկոուր և թերի), չեն խօսում երկրագործական կապիտալի ցածր կազմի մասին, իսկ եթէ այդ իսկապէս այդպէս լինէր, այն ժամանակ նա չէզօքացած կլինէր այն յարաբերութեամբ, որ գոյութիւն ունի արտադրութեան և աշխատանքի միջև, և յաւելեալ արժէքի ցածր նօրմով:

Մարքսը բացասաբար է վերաբերում դէպի մենաշնորհական գինը, իբրև բենտայի աղբեւր: «Ինչքան հողագործական բենտան, ասում է նա, ներկայացնում է հասարակ մենաշնորհական գին, այնքան այդ բենտան կարող է լինել միայն աննշան» ***): Այդ գրութիւնը նա չի ապացուցանում: Բայց մի այլ տեղ, խօսելով արժէքի և վաճառանոցային գնի տարրերութեան մասին, նա ընդունում է այդ, որպէս կանոնաւորող սկզբունք շահի նօրմի այն արդիւնաբերութիւններում, որոնք ունեն կապիտալի տարրեր կազմութիւն, յաւելեալ արժէքի տարրեր նօրմ և տարրեր յարաբերութիւն արտադրութեան և աշխատանքի ժամանակի միջև, — կանոնաւորող սկզբունք, որ բղիսում է կապիտալների փո-

*) Капиталъ, III, երես 626—627.

**) Капиталъ, III, երես 626.

***) Капиталъ, III, երես 636.

խաղարձ մրցումից *): Եթէ արդիւնաբերութիւնը գտնեռում է անձեռնոտու պայմանների մէջ, այն ժամանակ նրա արդիւնքների վաճառանոցային գինը բարձրանում է մինչև նրանց արժէքի մակերեւոյթը, չնայած որ միւս արդիւնաբերական ճիւղերի արդիւնքները ծախւում են նրանց արժէքից ցածր գնով: Բայց եթէ մի անգամ կարելի է թոյլատրել այդ տեսակ բացառութիւն անձեռնոտու արդիւնաբերութեան համար, ինչո՞ւ չգնալ հեռու և ենթադրել: Եթէ արդիւնաբերութիւնը այդչափ անձեռնոտու է, որ նոյն իսկ նրա արդիւնքների վաճառումը ըստ նրանց արժէքի չէ տալիս շահի միջին նօրմը, այն ժամանակ նրանց վաճառանոցային գինը բարձրանում է արժէքից էլ բարձր, այսինքն համուում է մինչև մենաշնորհական գինը: Ի նկատի առնելով այն անձեռնոտու պայմանները, որոնց մէջ գտնեռում է երկրագործական արտադրութիւնը, —յաւելեալ արժէքի ցածր նօրմը և արտադրութեան ժամանակի խիստ գերազանց լինելը՝ աշխատանքի ժամանակի նկատմամբ, —և ի նկատի առնելով այն բացառիկ բնաւորութիւնը, որ ունի երկրագործական յաւելեալ արժէքի բաշխումը չնորհիւ հողի, ապա և բենտայի ահագին նշանակութեան այստեղ, ի նկատի առնելով այս ամենը, պէտք է մտածել, որ այնտեղ ուր գոյութիւն ունի կապիտալիստական հողագործութիւնը և ուր, հետևապէս, կապիտալը պէտք է ունենայ շահի նօրու միջին նօրմ, իսկ հողատէրը՝ որոշ բենտա, մենաշնորհական գինը պարտաւորական է: Հէնց այդ պատճառով այն ժամանակ, երբ համաշխարհական առևտուրը գեռ չէր գրել իր թաթը գիւղատնտեսութեան վրայ, կապիտալիզմը այդ արդիւնաբերական ճիւղի մէջ զգում էր իրեն գեղեցիկ այն երկրներում, ուր գերիշխում էր խոշոր հողատէրեն գինեցիկ աստիճանը և ուր հետևաբար մասը տնտեսութիւնը, որ հաշւի չէ ըրութիւնը և ուր հետևաբար մասը տնտեսութիւնը, չէր ներկայացնում առնում շահի միջին նօրմը և հողային բենտան, չէր ներկայացնում շահ թէ քիչ լուրջ խոչնդու, որպէսզի գները բարձրանան մինչև մենաշնորհի աստիճանը: Այդ տեսակ երկրի օրինակ կարող է ծառայել Անգլիան, ուր կապիտալիստական գիւղատնտեսութիւնը ծաղյել է մինչև 60-ական թւականների վերջը: Այլպէս էր առաւելապէս մասը հողատիրութեան երկրներում: Այստեղ այն պրօցէս մասը հողատիրութեան թւականներից շարունակ ստացել է,

*) Капиталъ, III, երես 147.

պակաս կտրուկ կերպով է ազդել կապիտալիստական գիւղատընտեսութեան գոյութեան ամբողջ ընթացքում. այսինք մանր տընտեսութիւնը ոչ միայն կատարել է գեղեցիկ կերպով իր դերը կապիտալիստական տնտեսութեան կից, այլ և ժամանակներով արտաքսել է այս: Պրուսիայի արևելեան նահանգներում, ըստ Կօնցրադի հաշւի *), 1858 թւականից մինչև 1878-ը գիւղացիական կալւածները, սկսած 1,25 հեկտարից մինչև 75 հեկտ., աւելացել են 7 տոկոսով, մինչդեռ 50 հեկտարից աւելի մեծ կալւածները կրճատել են 8 տոկոսով:

Բելգիայում 1846 թւականին 20 հեկտարից աւելի հող ունեցող տնտեսութիւնները կազմել են բոլոր տնտեսութիւնների 3,4 տոկոս, 1866 թ.՝ 2,7 տոկոս, իսկ 1880 թւականին միայն 1,7 տոկոս **): Պակաս կտրուկ ձեռվ է արտայայտում նոյն փաստը Ֆրանսիայում: Monny de Mornay իր զեկուցման մէջ տւած երկրագործութեան նախարարին՝ 1870 թ. անկետի հետևանքների մասին մատնանիշ է լինում այս հանգամանքի վրայ, որ «խոշոր կալւածները, սակաւ բացառութիւններից զատ, մասնահատւել են. 100 հեկտարից աւելի ունեցող կալւածները ամեն մի զեպարտամենտում հանրածանօթ են: Միջին մեծութիւն ունեցող կալւածների թիւը շարունակ կրճատում է. այս, ինչոր խոշոր հողատիրութիւնը կորցրել է և միջինը կորցնում է օր օրից, այդ ձեռք է բերում մանր հողատիրութիւնը: Մանր հողատիրութիւնը բռնում է գիւղատնտեսական մակերեսոյթի մեծագոյն մասը և նրա չափերը շարունակ մեծանում են ***): Մանաւանդ դաստիրակիշ է ոռուսական գիւղատնտեսութեան պատմութիւնը 61 թւականի բէֆօրմից յետոյ: Գիւղացիների պատութեան և ոռուսական փողային տնտեսութեան առաջին օրերից իսկ, կալւածտիրական տնտեսութիւնը սկսում է զանգատել վատ գործերի վրայ, և ի նկատի առնելով այս, որ հողը միշտ աւելի ու աւելի է հալչում խոշոր սեփակա-

*) Землевладение и сельское хоз., изд. Водовозовыхъ, 4р. 93.

**) Նոյնը, 4р. 97.

***) General-Bericht überd. franz. Ackerbau—Enquête, erstattet an der Minister f. Ackerbau v. J. Le Monny. de Mornay. Deutsch bearbeitet v. dr. Bauer, 1871. 4р. 9—10.

նատէրերի ձեռքում (ուղղակի—վաճառման միջոցով և անուղղակի—կապալառութեան միջոցով), չի կարելի չը խոստովանել, որ այդ գանգատները հիմք ունեին: Մօսկայի գաւառում 1865—1875 տասնամերակի ընթացքում, աղնւականների հողատիրութեան տարածութիւնը կրճատել է 24,75 տոկոսով, վաճառականների հողատիրութիւնը աւելացել է 2,85 անգամ, քաղաքացիներինը՝ 2 անգամ. իսկ գիւղացիական հողատիրութիւն վեց անգամ *): Ամբողջ Մօսկայի նահանգում մանր տընտեսութեան մէջ (մինչև 50 գեսիատին) եղել է 1865 թւականին 24,901 գեսիատին, իսկ 1876—77 թ.՝ 27,601. 11—12 տարւայ ընթացքում տեղի է ունեցել 11 տոկ. չափ աւելացումն: Ընդհակառակը, միջին տնտեսութիւնը (50—200 գես.) կորցել է 13,493 գեսիատին կամ սեփականութեան 9,6 տոկոսը, իսկ խոշորը՝ 84,075 գեսեատին կամ մօտ 9 տոկոս **): Տնտեսութեան համեմատական կանգունութեան նշանակներից մէկն է՝ հողային սեփականութեան կատարեալ մօրիլիզացիայի (շարժման) շրջանն է: Տամրովի նահանգում, 60-ական թւականների երկրորդ կիսում, այդ շրջանը հասել է փոքրագոյնի աղնւականների մօտ, որտեղ հաւասար է եղել 32 տարւայ. վաճառականների մօտ նա կազմել է 56 տարի. իսկ մօրիլիզացիայի գերազոյն շրջանը՝ 59 տարի՝ տւել են գիւղացիները: Հետաքրքիր են նոյնպէս տեղեկութիւնները, զանգան տեսակի կալւածներ ձեռք բերելու մէջ ունեցած մասնակցութեան մասին: Մաքսիմումը՝ 28,4—33 տոկոս տւել են մինչև 50 գեսեատին ունեցող հողաբաժնները (մանր տնտեսութիւնը). միջին տնտեսութիւնը տւել է 12—20,7 տոկոս, իսկ խոշոր տնտեսութիւնը (500 գեսեատինայից վեր) տւել է 2,6—3,3 տոկոս ***): Կուրսակի նահանգգի Պուտիվլսկի գաւառում «աղնւականները ձեռք են բերում հողեր աւելի պակաս, քան ծախում են, վաճառականները ձեռք են բերում 3¹/₂ անգամ աւելի, քան վաճառում են, քաղաքացիները՝ 3 անգամ, իսկ գիւղացիները տասնեւոթ անգամ (տեղեկութիւնները վերաբերում են 1879—84թ.թ.) ****):

*) Сборникъ стат. свѣд. по Московской губ. հատ. I, 4р. 6—7.

**) Նոյնը, հ. V, պրակ I, տես յաւելածները:

***) Н. Романовъ. Движеніе земельной собственности Тамбовской губ., 4р. 98—99 և 101.

****) Сборн.стат.свѣд. по Курской губ., Путивльскій., 4р. 467.

Վօրօնեժի գաւառում 1873—1883 տասնամեակի ընթացքում ազ-
նւականներն 32,1 տոկ. աւելի հող են ծախել, քան գնել, վաճա-
ռականները գնել են աւելի 63,8 տոկ., իսկ գիւղացիները 94,6
տոկով *): Եկատերինոսլավի նահանգում 20 տարւայ ընթաց-
քում, 1866-ից մինչև 1887 թ., հողատիրութեան ընաւորութեան
մէջ տեղի են ունեցել հետևեալ փոփոխութիւնները. Եկատերինո-
սլավի գաւառում ազնւականների կորցրած հողերից ձեռք են
բերել. քաղաքացիները 3 հազար, վաճառականները 15 հազար և
գիւղացիներն ու գերմանացի դաղթականները 73 հազար գեսիա-
տին. Վերինեղնեղովսկի գաւառում քաղաքացիները ձեռք են բե-
րել 12 հազար գեսիաաին, վաճառականները՝ 39 հազար և գիւ-
ղացիներն ու գերմանացիները՝ 93 հազար. Պաւլօգրադի գաւառում
գիւղացիներն ու գերմանացիները ձեռք են բերել 83 հազ. դես.,
իսկ վաճառականներն ու քաղաքացիները միասին 26 հազար. Բայ-
մուտի գաւառում առաջն խումբ ձեռք է բերել 61 հազ. գեսեա-
տին, վաճառականները՝ 42 հազար և քաղաքացիները՝ 3 հազար.
Ալեքսանդրօվկսի գաւառում ազնւականների բոլոր ծախւած հողե-
րը անցել են ամբողջովին գիւղացիների ու գերմանացի դաղթա-
կանների ձեռքը **): Խերսօնի նահանգում 60-ական թւանների վեր-
ջից մինչև 80-ական թւականների վերջը, ազնւականների հողա-
տիրութեան հաշւին, աւելացրել են իրենց հողատիրութիւնը. վա-
ճառականները և հրէանները 286 հազ. գեսեատինայով, գերմանա-
ցիները և օտար հպատակները 349,8 հազ. դես., իսկ գիւղա-
ցիները և քաղաքացիները 379,5 հազ. դես. ***):

Բայց գիւղացիութեան հողային նուաճումները չեն կարող
բաւարար նշանաչափ լինել խոշոր անտեսութեան արտաքսման
համար, մանր տնտեսութեան կողմից: Որպէսզի գիւղացին կա-
րողանայ ձեռք բերել հող, բաւական չէ, որ նրա տնտեսութիւնը
լինի արդիւնաւէտ. Նա պէտք է հարատացնէ գիւղացուն, ինչի
մասին, ի նկատի առնելով մեր սակաւահողութիւնը, հողագոր-
ծութիւնից գուրս եղած աշխատանքների քչութիւնը, հարկային

*) Сборн. статисг. свѣд. по Воронежской губ., 5. I, մաս I, եր. 208.

**) Н. Турба. Движеніе земельной собственности въ Екатеринопольской губ. „Новор. Календарь“, 1892 թ., քած. IV, եր. 37—38.

***) Н. Борисовъ. Движеніе частной земельной собственности въ Херсонск. губ., „Нов. Кал.“, 1893, IV, 88.

վարների ծանրութիւնը և այլն, խօսք չի կարող լինել: Այդ
պատճառով մեզ մօտ անհամեմատ աւելի կարեոր նշանակութիւն
ունի կապիտալիստական հողագործութեան արտաքսման մի այլ
ձեռք—կալւածատիրական հողի անցնելը գիւղացիների ձեռքը, կա-
պակի իրաւունքով: Հիմնական զեմստվային ստատիստիկան նւի-
րել է այդ հարցին բաւական ուշադրութիւն: Որովհետև ըս-
տատիստիկական հետազօտութիւնները կատարւել են գլխաւո-
րապէս մինչև 80-ական թւականների կէսը (մինչև 1890 թ. հրա-
տարակած բոլոր ծուխերի վիճակագրութիւններից, որոնք ընդ-
գրկել են 150 գաւառ, հետազօտութիւնը 110 գաւառներում կա-
տարւել է մինչև 1885 թ., այսինքն այն տարին, երբ մեզ մօտ
սկսել են խօսել գիւղատնտեսական ճգնաժամի մասին) *), ուստի
ստացւած հետևանքները, անտարակոյս, պէտք է բնորոշեն իրերի,
այսպէս ասսած, նօրմալ գրութիւնը, իրերի գրութիւն, որի վը-
րայ ճգնաժամը գեռ չի սկսել ազդել:

Գիւղացիների հողարժնի կապալով տալը, թէպէտև տեղի է
ունենում, բայց իրեւ սակաւ երևյթ՝ առաջացած մանր տնտե-
սութեան էութեան հետ ոչինչ ընդհանուր չունեցող պատճառնե-
րից, ինչպէս ծայրայեղ սակաւահողութիւնը, երբ տնտեսութիւնը
սեփական հողաբաժնի վրայ անկարելի է,—ինչպէս խոշոր պարտ-
քերը, որոնք յաճախ ստիպում են գիւղացուն տալ որոշ ֆամանա-
կով կապալով իր հողաբաժնը վաշխառուին,—ինչպէս անհրա-
ժեշտ պիտոյքների պատահական կորուստը, հասակաւոր աշխա-
տաւորի բացակայութիւնը տնտեսութեան մէջ և այլն: Հաշւէգրու-
թեան են ենթարկում, գլխաւորապէս վերոյիշեալ պատճառներից
երկուսը—սակաւահողութիւնը և հասակաւոր աշխատաւորների
բացակայութիւնը ընտանիքում: Այդ երկու պատճառների խաղած
դեռ այն գէպքում, երբ գիւղացիական հողաբաժնները տրւում
են կապալով, երեսում է հետևեալ աղիւսակից **):

*) Итоги экономич. изслѣдований Россіи, 5. I, А. Фортунатов. Общий обзоръ земской статистики крестьянства, եր. VIII.

**) Н. А. Благовѣщенскій. Сводный статист. сборникъ хо-
зяйственныхъ сѣдѣній по земскимъ подворнымъ переписямъ. 5.
I. Крестьянское хозяйство, երես 189 և 191.

	Այն տնտեսութիւնների 0/0-ը,	Մի տղամարդի վրա խատառորի բարով տալիս են կապալով հողաբաժնինները:	Առանց աշխատառորի բարով խալիս տնտեսութիւնների բաժնին 0/0-ը:
Նախկին պետական գիւղացինները	7,9	4,6	5,7
Սեփականատէր գիւղ.-ը.	8,6	4,5	6,1
Նախկ. կալւածային գիւղ.	9,4	2,4	6,9
Ներւած գիւղացինները.	10,2	0,8	6,9

Այսինքն. քանի պակաս է ամնն մի տղամարդի հողաբաժինը՝ արտայայտած դեսետիններով և քանի մեծ է աշխատառորներից զուրկ ծուխերի տոկոսը, այնքան բարձր է այն տնտեսութիւնների տոկոսը, որոնք տալիս են կապալով իրենց հողաբաժինը: Բայց և կապալով տրուղ գիւղացիական հողը հազիւ է զուրս գալիս այդ միջնավայրից. ամենից յաճախ կապալառուն հանդիսանում է հէց իր եղբայրը՝ գիւղացին: Ուրեմն, դասակարգային շահերի տեսակէտից այդ փաստը ամենակին չէ վկայում մանր շահերի տեսակէտից այդ փաստը ամենակին չէ վկայում մանր տնտեսութեան մակերեսոյթի կրճատման մասին: Դրա փոխարէն, գիւղացինների կապալով վերցրած հողերը ներկայացնում են մի անկասկածելի գործօննչողը տնտեսութեան մակերեսոյթի կրճատման նկատմամբ: Թէ ինչքան մեծ է գիւղացինների կապալը, սեփական հողաբաժիններից զատ, այդ երկում է նրանից, որ 126 գաւառում, ուր ամբողջ գիւղացիական հողատիրութիւնը որոշում է 36, 35 միլիոն դեսետինով, գիւղացինները ընդհանուր գործարով կապալով վերցնում են 7 միլ. դեսետին հող, այսինքն իրենց սեփականութեան աւելի քան 19 տոկոսը *): Հետևապէս, գիւղացիններն ոչ միայն ամուր կերպով կպէլ են իրենց սեփական հողին, այլ և եռանդուն կերպով լայնացնում են իրենց հողաշահեցումը այլ հողատիրական խմբերի սեփականութեան հաշվին: Այլպէս է վերաբերում դէպի գործը մասնատիրական տնտեսութիւնը: 42 գաւառից, որոնց մասին կան շատ թէ քիչ բաւարար

*) Итоги экономического исследования России. 4. II, Н. Ка-рышевъ. Крестьянская въннадѣльная аренды, եր. VII.

տեղեկութիւններ, միայն 7 գաւառում գիւղացինները վերցնում են կապալով մասնատիրական հողերի մօտ 10 տոկոսը, մինչդեռ 15 գաւառում գիւղացիական կապալը հասանում է 10—19 տոկոսի: 10 գաւառում 21—30 տոկոսի, 5 գաւառում 31—37 տոկոսի, 5 գաւառում 40—47 տոկոսի և մի գաւառում 67 տոկոսի *): Որպէսզի հասկանալ այդ թւերի ամբողջ նշանակութիւնը, անհրաժեշտ է իմանալ, որ այստեղ խօսքը բացառապէս վարելանողի կապալի մասին է **): համեմատութեամբ մասնատիրական կալւածների ընդհանուր թիւ,—կալւածներ, որոնց մէջ անխտիր կերպով մտնում են բոլոր տեսակի հողերը: Սակայն վարելանողը կազմում է ամբողջ կալւածատիրական սեփականութեան միայն մօտ 27, 6 տոկոսը: Ակներս է, որ եթէ համեմատել կապալը միայն վարելանողի հետ, այն ժամանակ տոկոսական յարաբերութիւնը պէտք է գեռ էլ աւելի բարձրանայ:—Հետաքրքիր է կապալի գերը մասնաւոր հողատիրութեան տարբեր դասակարգերում: Այդ տեղեկութիւնները մի քանի գաւառների վերաբերեալ բերւած են հետևեալաղիւակի մէջ, (տես 68-րդ երեսը) ***):

Այդ աղիւսակը կարիք չէ զգում բացատրութիւնների մէջ, որովհետև նոյն իսկ ամենաթեթև կերպով աչքի անցնելու գէպքում, գժւար չէ նկատել նրա մէջ այն վերոյիշեալ բոլոր գաւառներին յատուկ փաստը, որ ինչքան էլ տատանւի մասնաւոր կալւածատէրերի սեփականութեան կապալով տրուղ մասը, այնուամենայիւ միջին և խոշոր հողատիրութեան մէջ նա միշտ աւելի բարձր է, քան մանր:

Խոշոր գիւղատնտեսութեան պաշտպանները բացատրում են մեր կալւածատիրական տնտեսութեան գժւար կացութիւնը (յիշեցնում ենք, որ մենք խօսում ենք մինչև ճգնաժամը տեղող ժամանակի մասին) ըրջանառութեան կապիտալի պակասութեամբ: Բայց նրանք թողնում են առանց ուշադրութեան մի կարևոր հանգամանք: Եթէ նոյնիսկ ենթադրել, որ գիւղացինների ազատագրութիւնը գտնաւում է մեր մասնաւոր հողատիրութիւնը ամեննին առանց ըրջանառութեան կապիտալի, պէտք է խոստովանիլ, որնա

*) Н. Ка-рышевъ, եր. 77.

**) Նոյնը, երես 78.

***) Նոյնը, երես 93—106.

Դաւաներում:	Մանր հողատիւրութիւնը (մինչև 50 դեսետին):	Խոշոր և միջին հողատիւրութիւնը (50 դեսետինից վեր):
Տրւումէ կապալով:	Կալւածի 0/0-ը:	
Եամբուրգի . . .	6,6	61,0—93,3
Կուրսկի . . .	34,2	60,0
Սարատօվի . . .	7,0	51,0—74,0
Ճարիցինի . . .	0,0	24,0—60,0
Գրայվորօնի . . .	21,8	45,2
Ռըսկի . . .	7,2	33,5
Փատեժի . . .	6,8	32,9
Դմիտրովսկի . . .	7,2	32,9
Սուդանսկի . . .	14,3	31,9
Լզովսկի . . .	6,2	29,9
Օբուխովսկի . . .	29,3	36,4—41,7
Շչեգրովսկի . . .	19,8	28,3
Կազանսկի . . .	18,2	32,1—46,2
Մցենսկի . . .	7,9	18,9—28,5
Զենկովսկի . . .	7,0	16,2—26,0
Լուբենսկի . . .	0,0	14,9—26,0
Սլավենոսերբսկի	0,0	3,2—41,2
Ելեցկի . . .	8,8	6,1—16,3

ստացել է այդ կապիտալը բաւականաչափ քանակով մօտակայքսանութիւնում: Մինչև 1886 թ. կալւածատիրական տնտեսութիւնը ստացել է ազատած գիւղացիներից՝ տրւած հողերի վճարներից (взыкунные платежи) 439 միլիոն ըռուբլի և հողային բանկերում գրաւ դրած կալւածներից՝ 659 միլիոն ըռուբլի. ուրեմն մեր կալւածատիրական տնտեսութեան մէջ՝ ամբողջովին մտել է չհաշւելով այն գումարները, որոնք ստացւել են կալւածային հողերի վաճառքից, հողերի կապալավարձից և այլն, 1,098 միլ. ըռուբլի *): Որովհետև 1878 թւականի տեղեկութիւն-

*) Երանենիկ Կենտր. Ստատ. Կոմիտե, № 2, Օ զածույնութեան համար 1888. Երես X.

ներին համաձայն, մասնաւոր սեփականութիւն կազմող վարելահողերի մակերեսոյթը հաշւում է 30 միլիոն դեսետին, ուստի, ակներեւ է, ամեն մի դեսետինին ընկնում է այդ գումարից 36,6 ըռուբլի: Եթէ ընդունել հողի արժեքը 100 ըռուբլի դեսետինի համար,—անկասկած չափազանց բարձր թիւ,—այդ ժամանակ ևս երեսն կզայի, որ եթէ առաջներում կալւածատիրական տնտեսութեան մէջ շրջանառութեան կապիտալ չի եղել, ապա միայն գիւղացիների վճարները (Յ. ոլ.) և հողային բանկերը հայթայթել են այդ աւելի քան բաւարար չափով—հողի արժեքի 36,6 տոկոսը. մինչդեռ Գոլացը բաւարար է համարում, մինչեւ անգամ զարգացած տնտեսութեան համար, հողի արժեքի 35 տոկոսը կազմող կապիտալ, իսկ տարածութեամբ միայն զարգանող տնտեսութեան համար, ինչպիսին է մասնաւոր հողատիրութիւնը առաւելապէս, միայն 21 տոկոս: Կարելի է արդեօք այստեղ խօսալ շրջանառութեան կապիտալի պակասութեան մասին:

Այդպէս, կապիտալիզմը գիւղատնտեսութեան մէջ ունենալով շնորհիւ մի շարք պայմանների—որոնց մասին խօսւած էր վերև—շահի աւելի ցածր նօրմ, քան այդ մշակող արդիւնաբերութեան մէջ է, և ունենալով կարիք, ընդհակառակը, շահի աւելի բարձր նօրմի մէջ, շնորհիւ այն առաջնակարգ դրութեան, որ ունի այստեղ ըենտան,—այդ կապիտալիզմը կարող է գոյութիւն ունենալ միայն գիւղատնտեսական արդիւնքների մենաշնորհական գների պայմանով: Մինչև գիւղատնտեսական արդիւնքների համաշխարային փոխանակութեան ծաղկելը, կապիտալիզմը՝ մենաշնորհական գների հաստատութեան գործում խոչնդուի էր հանդիպում միայն մանր տնտեսութեան մէջ, որը զանազան պատմական պայմանների շնորհիւ թոյլ էր զարգացած Եւրոպայում և այդ իսկ պատճառով ոյժից զուրկ էր կապիտալիստական ախորժակը սահմանափակելու համար. իսկ այստեղ, ուր չկան այդ պատմական պայմանները, գիւղատնտեսական կապիտալիզմը քարշ էր տալիս իր խղճուկ գոյութիւնը՝ ընկճւելով գիւղացիական տընտեսութեան հետ վարած մարտի մէջ: Այժմ մանր տնտեսութեան օգնութեան են եկել երկիրները:

Այդ երկիրների ոյժը կայանում է ոչ թէ նրա մէջ, որ նրանց հողը աւելի պտղաբեր է կամ տնտեսութեան ծախքերը աւելի ցածր, քան արևմտեան Եւրոպայում,—թէ մէկը և թէ միւսը չեն

կազմում նրանց տարբերող յատկանիշը,—այլ նրա մէջ, որ հողը նրանց համար չէ ներկայացնում կապիտալ։ Այդ մտքով մենք գտնում ենք այստեղ նոյն առանձնայատկութիւնը, ինչ և մանր տնտեսութեան մէջ թէպէտե ծագում է ուրիշ հիմքերից ևս; Մանր տնտեսութեան մէջ հողը կապիտալ չէ, ոչ թէ այն պատճառով, որ նա ոչինչ չարժէ, — Գերմանիայում և Ֆրանսիայում, օրինակ, գիւղացիական հողը ընդհակառակը աւելի թանգ է գնահատում, քան կալւածատիրականը, — այլ այն պատճառով, որ մանրատընտեսը կապիտալիստ չէ, ինչու և նա չէ նայում «հողային կապիտալի» վրայ, իբրև եկամուտի մի առանձին աղբիւրի վրայ։ Իսկ երիտասարդ իրկիրներում, այդ հայեցքը հողի վրայ պարտաւորական չէ, մինչդեռ հողը այնտեղ այնուամենայնիւ կապիտալ չէ, որովհետեւ նա ունի չնչին վաճառանոցային արժէք։ Բերենք մի քանի տեղեկութիւններ, որոնք բնորոշում են այդ փաստը։ Մեծ Բրիտանիայում, Կերդի արած հաշւով (1886 թ.), բոլոր տեսակի հողերի մի հեկտարն արժէ 1,440 ֆրանկ։ Ֆրանսիայում, առհասարակ շինութիւններից ազատ հողը գնահատում է մի հեկտարը 1,700 ֆրանկ (1889 թ.), իսկ վարելահողը՝ մի հեկտարը 2,197 ֆրանկ (1879 թ.), Բելգիայում (1880 թ.) հողի հեկտարն արժէ 3,975 ֆրանկ, իսկ վարելահողի՝ 4,261 ֆրանկ (*): Պրուսիայում (1879—81 թ. թ.) մի հեկտարի միջին գինն է 1,849 ֆրանկ (1497,64 մարկ), իսկ Պրուսիայի հին նահանգներում՝ 4,916 ֆրանկ (3981,85 մարկ). Իայնի գիւղացիական սեփականութեան շրջանում — մինչև անգամ 5—10 հազար ֆրանկ (4—8 հազար մարկ) (**): Այդպէս է, մօտպորապէս, հողի արժէքը արևմտեան եւրոպայում։ Տեսնենք, ինչպէս է այդ գործը այն երկրներում, որոնք հացի վաճառանոցում մրցում են նրա հետ։ Այստեղ ամենին թանգ հողը մենք գտնում ենք Հիւսիսային-Ամերիկայի հին նահանգներում և Եւրոպական Ռուսաստանում։ Մշակած և շինութիւններով հողի մի ակրը Մասսաչուսետսում ծախտում է 85 դոլարով (հեկտարը՝ մօտ 1,102 ֆրանկ), Նիւ-Զելանդում՝ 82,4 դոլ. (հեկտարը՝ 1,068 ֆրանկ), Նիւ-Իօրկում՝ 45,75 դոլ. (հեկտարը՝ 600 ֆրանկ) (***)։ Ռուսաստանում հողերի ամեն մի

*) Foville. La france économique, 1889, եր. 76—77 և 81—82.

**) M.Sering. Die laudiv. Koukureuz Nordamerikas, 1887, եր. 183.

***) Նոյնը, երես 463.

դեսեատինը 1889 թւականին ծախտել են սկ հողերի շրջանում՝ 90 բուբլով (հեկտարը՝ 238 ֆրանկով), իսկ այդ շրջանից դուրս՝ 51 բուբլով (հեկտարը՝ 135 ֆրանկով) *). Հետեւաբար, թանգ հողերի այդ շրջաններում անգամ մենք գտնում ենք, արևմտեան եւրոպայի համեմատութեամբ, զգալի տարբերութիւն։ Բայց երիտասարդ երկիրներում, խօսքի խիստ մտքով, հողը գեռ էլ աւելի էժան է։ Միսսիսիպի գետից դէպի արևմտաք հողը գնահատում է 246 ֆրանկով (ակրը՝ 18,86 դոլ. — Նահանգ Մենտուկի) մինչև 78 ֆրանկ (ակրը՝ 5,89 դոլ. — Նահանգ Դակոտա). իսկ պետական հողերը (առանց մշակման և շինութիւնների) ծախտում են՝ ամեն մի հեկտարը 25—32 ֆրանկով ($1\frac{1}{4}$ — $2\frac{1}{2}$ դոլ. ամեն մի ակրի համար). մինչև անգամ երկաթուղային ընկերութիւնների հողերը ծախտում են 64 ֆրանկով (**): 1889 թւականին Աւստրալիայում հողը ծախտել է անուրդով հետեւել գներով. Հարաւային Աւստրալիայում և Նոր-Զելանդիայում ամեն մի հեկտարը 69 ֆրանկով (մի ակրը՝ 1 ֆունտ 2 շիլ. 6 պենսով), իսկ Արևմտեան Աւստրալիայում 12,3 ֆրանկով (մի ակրը՝ 3 շիլ. 10 պենսով) ***):

Հողային գների այդ խոշոր տարբերութիւնը տալիս էր նոյնիսկ երիտասարդ երկիրների կապիտալիստական տնտեսութեանը մեծ առաւելութիւններ հին եւրոպայի կապիտալիստական տնտեսութեան առաջ։ Բայց ճգնաժամի այդ շրջանում, երբ երօպական տնտեսութիւնը ստիպւած էր հաշվի առնել միայն երիտասարդ երկիրների կապիտալիստական տնտեսութիւնը, նրա դրութիւնը համեմատաբար գեռ տանելի էր, որովհետեւ նրա մրցակիցներն ևս իբրև կապիտալիստներ կարիք ունեին մենաշնորհական գնի մէջ, թէև աւելի չափաւոր, շնորհիւ հողային ցածր գների և չնչին բենտայի, բայց և այնպէս մենաշնորհական գնի, որ պէտք է բաւարար գրանցում լինէր, որպէսզի ծածկել շահի միջին նօրմը կանաչափ բարձր լինէր, որպէսզի ծածկել շահի միջին նօրմը (որը չի ստացւում — ինչպէս մենք գիտենք — գիւղատնտեսութեան մէջ միայն յաւելեալ արժէքից): Խնդիրն ընդունեց միանգամայն նոր ձև, երբ երիտասարդ երկիրները — կոչմամբ դեմոկրատներ —

*) А. Фортунатовъ. Сельско-хозяйственная статистика. եր. 93.

**) Sering, երես 463.

***) Ed. Greville, 1891, երես 156:

հասկացան, որ առանց գեմօկրատական երկրագործութեան անկարելի է գեմօկրատիզմը: Այն ժամանակ հնչեց մենաշնորհական գնի վերջին ժամը, երիտասարդ երկիրների գիւղատնտեսական կապիտալիզմը ընկաւ ձակատագրական դրութեան մէջ, իսկ արևմտեան Եւրօպայի գիւղատնտեսական կապիտալիզմի դրութիւնը դարձաւ միանգամայն անյուսալի: Հողատիրութեան գեմօկրատիզմիցի պատմութիւնը Միացիալ Նահանգներում սկսում է 1860 թ. մայիսի 20-ի Homestead-ների օրէնքի հրատարակութիւնից—օրէնք, որ 1874 և 1878 թւականներին ենթարկել է ուժեղ փոփոխութիւնների այն նպատակով, որպէսզի աւելի լաւ ապահովել մանր տնտեսութեան կարիքների համար պետական հողերը *): Աւստրալիայում, նման Homestead-ների օրէնքին, 1885 թւականին հրատարակել է մի օրէնք պետական հողերի փոքր կտորների վաճառման մասին (320 ակրից ոչ աւել), այն պայմանով, որ ամբողջ գումարը վճարւի մաս-մաս 32 տարւայ ընթացքում, ամեն մի ակրի համար 1 ֆունտ ստերլինգ (ամեն մի հեկտարի համար 62 ֆրանկ), հետևեալ կերպով սկզբում մտցնուումէ ամեն մի ակրի համար 2 շիլ. (ամեն մի հեկտարի համար 6,2 ֆրանկ կամ ամեն մի դեսետինի համար մօտ $2\frac{1}{2}$ բուրլի), երրորդ տարւայ վերջում ամեն մի ակրի համար մտցնուումէ 1 շիլինգ, որը այնուհետ դառնում է ամեն տարւայ վերջում—մինչև 32 տարւայ ժամանակամիջոցը լրանալը, երբ հողն արդէն անցնում է իրեն կատարեալ սեփականութիւն հողագործի ձեռքը—ամեն մի ակրի համար 1 շիլ. 3 պենս. **): Վիկտորիայում այդպիսի հողակառը կարելի է գնել մտցնելով 6 տարւայ ընթացքում տարեկան 1 շիլ. ***): Այդ օրէնքների բարեյաջող ազդեցութիւնը—օրէնքներ, որ արձակել են կապանգներից փողային միջոցներով վաստօնութեան մանր տնտեսութեան բազուկները—գերեցիկ կերպով երևացել է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում, ուր տնտեսական վիճակագրութիւնները ցոյց են տւել միջին ագարակի հողի չափերը՝ արտայայտած ակրով. 1850 թւականին 203, 1860 թւա-

*) Sering, երես 119—121. Մանրամասնութիւնները Homestead-ների մասին տես I. Խոզսկու մօտ («Земля и земледельцы», հատ. 1) և Օբրինսկու մօտ («Хлебная торговля въ С. Штатахъ»):

**) Ed. Greville, երես 165—169.

***) Նոյնը, երես 188.

կանին 199, 1870 թւականին 153, և 1880 թւականին 134, բացի այդ, վերջին տարւայ ընթացքում խոշոր կալւածատէրերի ձեռքում եղել է հողագործական մակերևոյթի միայն 0,7 տոկոսը, միջին կալւածատէրերի ձեռքում (500—1000 ակր)՝ մօտ 12 տոկոսը, մասնը կալւածատէրերի ձեռքում (20—500 ակր կամ 8—202,5 հեկտար)՝ 77,5 տոկոսը. իսկ մնացած 9,8 տոկոսը կազմել են 20 ակրից պակաս ունեցող հողակտորները *):

VII.

Ամփոփենք մեր ասածները:

Գիւղատնտեսութեան մէջ կապիտալիզմը չի կարող ունենալ նոյն նշանակութիւնը, ինչ որ մշակող արդիւնաբերութեան մէջ: Վերջինիս մէջ նա ուժեղ նեցուկ է գանում խոշոր արտադրութեան մէջ—այն տեխնիքական կատարելագործութիւնների, ժամանակի և աշխատանքի այն տնտեսութեան մէջ, որոնք մշակող արդիւնաբերութեան մէջ բացառապէս կապւած են խոշոր արտադրութեան հետ, և այդ պատճառով կազմում են կապիտալիզմի արտօնութիւնը: Այստեղ այդ նեցուկը ունի խոշոր նշանակութիւն: Նա ապահովում է կապիտալիզմին այնպիսի յաւելեալ արժեք, որը միանգամայն բաւական է, մի կողմից կապիտալիստական շահի միջին նօրմի կարիքին բաւարարութիւն տալու համար, միւս կողմից՝ արտադրած ապրանքերի վաճառման համար, նրանց արժեքից ցածր—մի փաստ, որ վերին սատիճանի կարևոր է կապիտալիզմի պայքարի համար, իր բնական թշնամու, մասնը կապիտալիզմի սահմանափական սպառման շինութիւնների և անհրաժեշտ միայն արտադրողական սպառման պահանջման գործութիւնները ուղղական կապիտալիզմին, կամ եթէ գալիս են բացառիկ դէպքեսկան կապիտալիզմին, կամ եթէ գալիս են բացառիկ դէպքեսկան կապիտալիզմիս: Այդ պատճառով գիւղատնտեսութեան մէջ, բայց այստեղ այդ առաւելութիւնները սահմանափական են: Նրանք արտայայտում են միայն արտադրողական սպառման շինութիւնների և անհրաժեշտ պիտոյքների որոշ տնտեսման մէջ, բայց ոչ տեխնիկական, ոչ աշխատանքի տնտեսումն զրեթէ օգնութեան չեն գալիս գիւղատնտեսական կապիտալիզմին, կամ եթէ գալիս են բացառիկ դէպքեսկան կապիտալիզմին, կամ եթէ գալիս են բացառիկ դէպքեսկան կապիտալիզմիս:

*) Sering, երես 138.

նում է համեմատաբար փոքր յաւելիալ արժէք, որը փոխադրւելով շահի՝ հանդիպում է գիւղատնտեսական արտադրութեան նուրանոր առանձնայատկութիւններին (գլխաւորապէս, արտադրութեան և աշխատանքի ժամանակի անբարեյածող յարաբերութեանը) և իբրև հետեանք տալիս է դեռ էլ աւելի ցածր շահի նօրմ: Մինչ դեռ շահը և այդ ցածր նօրմը այստեղ պէտք է ենթարկվի յետագայ կրծատման, շնորհիւ այն առաջնակարգ դերի, որ խաղում է հողը և սրանից պայմանաւորւած ըենտան՝ մասնաւոր և խոշոր հողատիրութեան դէպքում: Այդ ամենը բերում է այն հանգամանքին, որ գիւղատնտեսական կապիտալիզմի գոյութիւնը սերտ կերպով կապւում է գիւղատնտեսութեան արդիւնքների մենաշնորհական գների հետ: Բայց եթէ «հին բարի ժամանակը»՝ ձգտելով մենաշնորհական գների, գիւղատնտեսական կապիտալիզմը հանդիպում էր հակազդեցութեան միայն տեղական մասը տնտեսութեան կողմից, — հակազդեցութիւն, որ թուլացւել է մի շարք պատմական անարդարութիւնների միջոցով՝ այժմ արդէն նագտել է նոր, ուժեղ հակառակորդ յանձինս երիտասարդ երկիրների, ուր մասն տնտեսութիւնը իր զարգացման համար ունի լայն ասպարէզ: Տնտեսութեան նոր պայմանները, որոնք ստացել են վճռական ոյժ, շնորհիւ տեղափոխման գործի տեխնիկայի առաջնակարգ յաջողութիւններին, իսկ այստեղից շնորհիւ համաշխարհային ապրանքային փոխանակութեանը, հասցրել են ծանր հարւած գիւղատնտեսական կապիտալիզմին: Առ այժմ հարւածը ամբողջ ծանրութեամբ տրորել է միայն հողագործութիւնը: Բայց անասնապահութեան դրութիւնը և տարեց տարի վատթարանում է և եթէ տեղափոխութեան գործի տեխնիկայի զարգացման յետագայ ընթացքն և արդարացնէ իր վրայ դրած յոյսերը, այն ժամանակ հեռու չէ այն օրը, երբ անասնապահ-կապիտալիստները կլինեն ճակատագրական գրութեան մէջ:

Կարելի է արդեօք յուսալ, որ մօտակայում կնորոգւի մենաշնորհական գների ժամանակը: Յանուն առաջադիմութեան և արդարութեան, յանուն ժողովրդի այն մասսայի շահերի, որը մտածում է ոչ թէ իր հարստացման մասին, այլ սոսկ մարդկային գոյութեան ապահովութեան մասին, իր բազուկների աշխատանքով, — յանուն ոչ թէ աշխատանքի մեքենայի գոյութեան, որը

կորցնելով աշխատանքը՝ կորցնում է և կեանքի իրաւունքը, — այլ յանուն խելացի մարդի, յանուն այդ բոլորի պէտք է ցանկանալ, որ այդ ապագան չիրականանայ երբէք: Եւ հազիւ թէ նա կարողանայ իրականանալ, առնւազն մեղնից ամենին մօտակայ գարու ընթացքում: Ճիշտ է, կապիտալիզմի լաւատեսները գտնում են համաշխարհային տնտեսութեան ներկայ գրութեան մէջ մի շարք երևոյթներ, որոնք իբր թէ վկայում են, որ գիւղատնտեսական արդիւնքների մենաշնորհական գները սարերի ետև չեն: Բայց ճիշտ է այդ նախագուշակութիւնը: Շատ յոյսեր են գրում Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում հացի արտագրութեան սկսած կրծատման վրայ: Բայց այդ կրծատունը բացարձում է նրանով, որ հացային արդիւնաբերութեան ծանրութեան կենտրոնը տեղափոխում է հին Նահանգներից, ուր գիւղատնտեսական, կապիտալիզմը կարողացել է իր ժամանակին հիւսել իրեն բոյն, երիտասարդ նահանգները, ուր հողը գեռ կազմում է պետական սեփականութիւն և առասպելանման էժան է և ուր, հետեաբար, նա միանգամայն բաց է մասը տնտեսութեան համար: Թէ ինչպէս արագ է զարգանում վերջին նահանգներում գիւղատնտեսութիւնը, այդ կարելի է նկատել նրանից, որ 70-ական թւականների գիւղատնտեսական ճգնաժամը առաջ է եկել 312 միլիոն բուշել ցորենի արտագրութիւնից բոլոր նահանգներում միասին, մինչդեռ 1889 թւականին միայն 10 երիտասարդ նահանգներում — Մինեզուա, Կալիֆորնիա, Դակոտա, Ինդիանա, Իլինոյս, Օգէյօ, Կանզաս, Միչիգան, Իօվա և Միսուրի — արտադրել է 343^{1/2} միլիոն բուշել ցորեն*): Միացեալ Նահանգների արևմուտքը միայն այժմ է, որ բնակեցւում է և եթէ նա այժմ արդէն հասել է այդ պիսի աչքի ընկնող հետեանքների, ինչ պէտք է սպասել մօտաւոր ապագայում: Եւ կարելի է արդեօք ներկայումս հաշւի առնել միայն Միացեալ-Նահանգները, երբ մեր առաջ է Հարաւանական, Ամերիկան, որի հացի արդիւնաբերութիւնը աճում է զարմանալի արագութեամբ, Աստրալիան, որը խոստանում է հեղեղել եւրոպան իր հացով, Սիբիրը, որի երկաթուղին լայն կերպով գոյութեան ապահովութեան մասին, իր բազուկների աշխատանքով, Կովկասը, բաց է անում համաշխարհային վաճառանոցների գոները, Կովկասը, բաց է անում համաշխարհային, Զինաստանը, Ճապոնիան, և այլն, և այլեւելեան Հնդկաստանը, Ճապոնիան, Ճապոնիան և այլն,

*) Juraschek, Երես 11 և 15.

լըն: Մի ոմն արտայայտւել էր, թէ մօտ է այն ժամանակը, երբ գիւղատնտեսներին խելագար դարձնող գները պիտի դառնան նրանց տենչանքների առարկան: Մենք կարծում ենք, որ այդ խօսքերի մէջ չկայ որևէ չափազանցութիւն:

Այդպէս, կապիտալիստական գիւղատնտեսութիւնը արագ քայլերով մօտենում է իր բնական մահին: Բայց եւրօպական հողատիրութեան ձևերը այնպէս են, որ եւրօպական գիւղատնտեսկան կապիտալիզմի հետ կապւած է առհասարակ եւրօպական գիւղատնտեսութեան կրծատում—մի ելք, որ վերին աստիճանի անցանկալի է ամեն մի երկրի համար: Պարզ է, որ անհրաժեշտ են միջոցներ մօտեցնող դժբախտութեան դէմ կուելու համար: Այդ միջոցները կարող են լինել երկու տեսակի. կարելի է փըրկել կապիտալիզմը՝ ապահովելով նրան անհրաժեշտ միակ տրամաբանական միջավայրը—մենաշնորհական գները, կամ թէ կարելի է տալ մանր տնտեսութեան այն պայմանները, որոնց ներկայութեամբ նա կարող է բռնել կապիտալիստական տնտեսութեան ճգնաժամից ազատ մնացած տեղը: Մենաշնորհական գները կարող են ապահովւած լինել միայն ներմուծութեան վրայ դրւած բարձր մաքսերի միջոցով: Բայց այդ միջոցը մատչելի է այն երկրների համար, որոնք կարիք ունեն հացի ներմուծութեան: Մինչդեռ հէնց այստեղ է, որ ազգաբնակութեան վերին աստիճանի սահմանափակ մասը շահագրգուած է գիւղատնտեսութեան մէջ առհասարակ, իսկ կապիտալիստական գիւղատնտեսութեան մէջ շահագրգուած է դեռ էլ պակաս մասը. իսկ էժան հացի մէջ շահագրգուած է ամբողջ աղդաբնակութիւնը: Կարող է արդիօք մի որևէ երկիր զոհել—ոչ թէ մի, կամ երկու, կամ նոյնիսկ ամբողջ տասն տարւայ ընթացքում—այլ մշտապէս իր շահերը յօգուտ մի խմբակ մարդկանց: Ֆերմանիայում, Ֆրանսիայում և այլուր գիւղատնտեսական պրոտեկցիօնիզմը երեակայելի է միայն մինչև այն ժամանակ, քանի նրա մասին կարելի է խօսել՝ իրեւ ժամանակաւոր երևոյթի մասին: Հին աշխարհի գիւղատնտեսութեան փրկութիւնը չի կարելի սպասել այդ կողմից: Այդ տնտեսութիւնը կարող է գոյութիւն ունենալ՝ միայն հրաժարւելով իր այժմեան կապիտալիստական ձևից: Մինչև այժմ աշխատաւորի, կապիտալիստի և հողատիրոջ միացումը մի անձնաւութեան մէջ կազմում էր միայն մանր տնտեսութեան հիմնական


առանձնայատկութիւնը. այդ պատճառով և մանր տնտեսութիւնը ունի մայունութեան աւելի մեծ գրաւականներ, քան խոշոր տնտեսութիւնը՝ չնայած խոշոր անտեսութեան մի քանի տեխնիկական առաւելութիւններին: Իսկ եթէ այն հիմնական յատկութիւնները, որոնք այժմս բնորոշում են մանր գիւղատնտեսութիւնը, անցնեն և խոշոր անտեսութեան մէջ,—այն ժամանակ ապագան կարող է պատկանել նրան: Եւ դա կլինի գիւղատնտեսական զարգացման վերջնական էտապը: Հասարակական հողի հասարակական մշակումը—այդպէս է գիւղատնտեսական արդիւնաբերութեան—թերևս ոչ շատ հեռու—ապագան:



यत्तदावस्था विद्या अवस्था विद्या अवस्था विद्या विद्या
विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या
विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या
विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या
विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या
विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या
विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या
विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या
विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या विद्या



५



ՀՀ Ազգային գրադարան



NL0210039

